

Պատմություն

[Ա]

Նախասահմանությունն Աստուծոյ ոչ վրիպի ըստ վկայութեան սուրբ գրոց: Ձի գորինչ կամի Տէր՝ զայն առնէ, եւ ո՞ է նմա խորհրդակից: Եւ այն թէ Տէր խոնարհեցուցանէ եւ Տէր բարձրացուցանէ, մեծացուցանէ եւ Տէր աղքատացուցանէ եւ այլն: Իսկ մերս նուաստ բնութիւնս թոյլ եւ գիտութիւնք շաղփաղբունք են, եւ հազիւ նկատենք զերկրաւորս ըստ ասելոյն:

Վասն որոյ ոմանք ի բարւոյ սկսեալ զչարն աւարտեն: Եւ ոմանք ի չարէն սկսեալ ի բարին եզերեն: Բայց բիր երանութեան արժանի նոքա են, որ ի բարւոյն սկսեալ ի բարին կատարեն: Իսկ ամենաբարին Աստուած եւ աղբիրն բարութեան միշտ զբարի բաղձանս շնորհեաց բնութեանս, թէպէտ՝ ոմանք ի թիր գործածեն: Արդ եթէ ի բարին հետեւին, գործակից լինի նոցա ի բարիս ըստ առաքելական վկայութեան:

Քանզի զկարօտութիւն գոր ունէի ի մանկութենէ իմմէ՝ որ վասն սրբոց աթոռոց եւ եւս վասն Հայաստան երկրի վանորայից եւ ուխտատեղաց, շնորհեաց Աստուած անարժան անձինս: Նախ՝ գնալ ի սուրբ Սաղիմ թվին ՌՃԿ (1719) մնալով անդ Բ (2) ամ՝ ի ժամանակս նորոգութեան աշխարհագումար տաճարին սրբոյ Յարութեան եւ ամենայն սրբոց տնօրինականաց ի Ժ (10) ամի առաջնորդութեան իմոյ Թրակիոյ քաղաքին, ի պատրիարգութեան սրբոյն Սաղիմայ Գրիգորի ճգնազգեաց եւ հեզահոգի սրբազան վարդապետի եւ առաջնորդութեան Կոստանդնուպօլսոյ Յովհաննէս քաջաջան աստուածաբան վարդապետի՝ աշակերտաց Վարդանայ վարդապետին Բաղիշեցոյ ի վանից Ամրտօլոյ:

Իսկ ի թուին ՌՃՁԳ (1734) եւ ապրիլի ԻԷ (27) չուեցի ի Թրակիոյ՝ գնալ ի սուրբ Էջմիածին եւ ի Տարօն՝ ի սուրբ վանքն Գլակայ, որ յանուն սուրբ Կարապետին է կառուցեալ ի սրբոյն Գրիգորէ՝ մեր Լուսաւորչէ: Որ եւ ի Ճ (100) օրն հասանք սուրբ Էջմիածին աշխարհաբոյժ տաճարն օգոստոսի Գ (3) օրն շաբաթ, երրորդ ժամու:

[Բ]

Արդ ի գալն մեր ի սուրբ աթոռն եւ յետ համբուրելոյ զսեամս սրբոյ տաճարին եւ երկրպագելոյ սուրբ իջման տեղին եւ այլոց աստուածաբնկալ սուրբ խորանացն առժամայն առեալ տարան զմեզ առ Աբրահամ վեհապետն սրբազան կաթողիկոսն, որ էր նստեալ ի պարտեզն՝ ի ներքոյ մեծի այվանին: Եւ ի տեսանելն զմեզ խանդաղատեցաւ եւ յոյժ ուրախացաւ: Ձի սաստիկ սէրն, որ արծարծեալ էր ի սրտի մերում Ի (20) ամէ ի վեր, բոցափայլեալ յայտնի երեւիր: Եւ յետ զրուցատրութեան մերում եւ հարցաքննելոյն զորկենութենէ պատրիարգի եղբօր մերոյ, եւ զմեծ քաղաքէ Կոստանդնուպօլսոյ, եւ զեկեղեցեաց, եւ զիշխանաց եւ զքահանայից հարին զերրորդն, եւ ետ ինձ հրաման գնալ ի մենարանն իմ:

Եւ առեալ տարան զիս ի յԱղէքսանդրու սրբոյ կաթողիկոսի ամարաթն, որ էր եւ այն ի ներքո անդ ի կաթողիկոսարանի: Եւ ապա հարին զպատարագին զանգակն: Եւ ելեալ գնացաք ի պատարագն եւ յետ պատարագին՝ ի սեղանն: Եւ այնուհետեւ ամենայն օր ընդ իւր ունելով զիս ի տուն եւ առտնին, ի զրուցատրութիւնս եւ ի խորհրդակցութիւնս միշտ մինչեւ ցաւուրս Ի (20):

Եւ ապա կամեցայ հրաման առնուլ եւ գնալ ի սուրբ Կարապետ: Եւ ոչ ետ թոյլ, ասելով, թէ՛ «Զքեզ ինձ Աստուած առաքեաց, տեսանելով զխղճութիւնս իմ: Վասն որոյ այսմ ամի գոնէ ոչ թողում գնալ, այլ կաց մնայ ի գիրկս եւ գոգ մօր քո լուսոյ սուրբ Էջմիածնիս եւ լեր ինձ խորհրդակից, ցաւակից եւ կարեկից: Եւ զհտեմ զհարազատութիւն քո ի հեռուն հետե, եւ վկայե հոգի իմ, զի բարեկամ եւ հաւատարիմ ես ինձ, որպէս եւ իմայնոցն, որպէս լուեալ եմ այսքան տարի, նաեւ՝ ի սուրբ գահիս»: Եւ որքան պաղատեցի եւ աղաչեցի, չեղեւ հնար, եւ ոչ ետ թոյլ եւ հրաման այլ ասաց. «Եթէ Տէր կամեսցի, ի գալ ամի եւ ես կամիմ գնալ ի Տարօն՝ եթէ յաջողութիւն լիցի յԱստուծոյ: Կաց առ իս աստէն, եւ ի միասին գնացուք, եւ անդ կատարեալ զուխտ քո եւ ճանապարհորդեցից զքեզ գնալ ի վիճակն քո»:

Որով խնդրեցի կրկին տալ հրաման իմայնոցն, որք եկեալք էին ընդ իս՝ գնալ ի սուրբ Կարապետն յուխտ եւ անտի՝ ի տեղիս իւրեանց. որք էին Յարութիւն վարդապետն. եւ Թէքիրտաղու աւագերեց տէր Յովհաննէսն, տէր Յունանն, տէր Պօղոսն եւ, պողազհիսարցի տէր Գասպարն եւ այլ ստամպօլցիք եւ թէքիրտաղցիք՝ աւելի քան զԻ (20): Յանձնելով զնոսա յԱստուծոյ եւ Կաղզուանայ առաջնորդ Յովհաննէս վարդապետին, որ եղեւ նոցա առաջնորդ, եւ առեալ տարաւ Կաղզուանով զնոսա, որ էր օգոստոսի ԻԳ (23) եւ օրն շաբաթ: Եւ ես խոստացայ մնալ մինչեւ ցայգեկութն, եւ ապա չուիլ: Որ եւ ծիծաղեցաւ երանելին եւ ասաց. «Բարի է, այնպէս եղիցի»:

[Գ]

Յետ յուղեւորելոյ զտղայսն ի սուրբ Կարապետ առաջիկայ երկուշաբթին, որ էր օգոստոսի ԻԷ (27), հրաման ետ սպասաւորացն պատրաստութիւն տեսանել առ ի գնալ ի վանորայսն: Քանզի ասաց, թէ՛ «Եւ իմ սիրտս կարի նեղացեալ է, զի հեռուն հետե ի դուրս չեմ ելեալ»: Եւ առեալ զիս ընդ իւր եւ զայլս ի վարդապետացն՝ աւելի քան զԺ (10), եւ այսպէս ուրախութեամբ գնացինք:

Նախ՝ ի Յոհանավանքն զի առաջնորդն Յոհանավանից՝ Յակոբ վարդապետն, եկեալ հրավիրեաց զվեհն վասն օժման նորաշէն խորանին եւ սեղանոյն, որ նորոգեալ էր հիւսիսակողմն մեծի տաճարին, որ էր շինեալ եւ նա ի սրբոյն Գրիգորի՝ մեր Լուսաւորչին, եւ ամփոփեալ անդ ի մասանց եւ ի նշխարաց սրբոյն Յամլորդոյն: Որ մեծաւ հանդիսիւ օժեցաք զսեղանն ի միասին:

Եւ յետ հոգեւոր եւ մարմնաւոր ուրախութեան՝ Բ (2)-Գ (3) օր կենալոյն զկնի, գնացինք ի Սաղմոսավանք, եւ ի Լուսաւորչայ անապատն եւ ի միւս փոքր անապատն: Եւ ապա՝ ի յՈւշի՝ սուրբ Սարգսայ վանքն: Եւ մինչ էինք անդ, եկն եւ մելիքն Երեւանայ՝ Յակոբջանն, զի խնդրեալ էր գնալ վեհն:

Եւ ի նոյն աւուրս եկն սայի մի ի Թիֆլիզոյ եւ եբեր զրոյց եւ գիր, եթէ՝ Իսակ փաշայն, զԱշխալ բեկն որ էր մելիք Թիֆլիզոյ՝ ի մեր ազգի, վասն ոչ ինչ պատճառի ետ խեղդել զնա եւ առաջի դռանն արկանել՝ մինչեւ էառ ԾՌ (50000) դուռուշ, եւ ապա ետ հրաման թաղել:

Իսկ ի միւս օրն գնացեալ ի Փարպի ըստ խնդրոյ իմոյ: Եւ անտի դարձաք ի Կարբի՝ ի տուն պարոն Խաչատուրին եւ պարոն Ղազարին, մնալով անդ զիշեր մի: Եւ ապա եկինք ի Մուղնի սուրբ Գեորգայ վանքն: Էր ընդ մեզ եւ մելիք Յակոբջանն՝ տկար գոլով: Եւ մնացինք զգիշերն: Իսկ ի լուսանալն՝ յետ սրբոյ պատարագին եւ ճաշոյն, իջաք ի յՕշական: Եւ մելիքն գնաց Եղուարդով Երեւան: Եւ զիշերն մնացանք յՕշական եւ յայգն չուեալ հասանք ի սուրբ Էջմիածին:

[Դ]

Որովհետեւ առաւել սիրոյն, զոր ունէր ընդ հիգոյս առեալ զիս վեհն՝ զքօսանաց աղագաւ գնացինք ի վանորայս եւ յանապատս: Բայց ոչ կարացին տեսել անդանօր ի սուրբ ուխտն՝ վասն զբաղմանցն եւ մեծի հոգունակութեան սուրբ աթոռոյն: Եւ զի աւելի քան զԼ (30) մարդ կայինք՝ նոյնպէս եւ առաւել գրաստքն, եւ թուիր ձանձրութիւն լինիլ ասպնջակացն մերոց: Եւ զի նրբահայեաց գոլով Վե (հե)հն եւ յոյժ ցաւեցող վասն ամենեցուն՝ ոչ կամէր բնաւ զձանձրանալն ումէք, վասն որոյ աճապարէր դառնալ ի սուրբ գահն:

Մանաւանդ զի էր եւ ժամանակն խառնակ, եւ ազգի-ազգի զրոյցք գային ի լսելիս վեհին վասն զալստեան Թահմազ [դուլի]-խանին եւ շարժելոյ զօրացն պարսկային, փութացաւ զդարձն անդրէն առ ի սուրբ աթոռն, զի հոգասցէ զհոգս ամենեցուն: Եւ զի այսպէս բնաւորեալ է ի բնութիւնս մերազնեացս ի բնուստ անտի՝ ոչ հոգալ, եւ ոչ ցաւել եւ ոչ փոյթ ունել յամենայնէ, այլ իւրաքանչիւր զիւր հանգստութիւնն ջանալ, եւ ապահովիլ եւ պաշտիչ ուրուականին իւրոյ լինել, իսկ զամենայն ցաւս ընկենուլ ի վերա զլիտոյն: Եւ մինչ կենդանի է թէ՛ իրաւի, եւ թէ՛ անիրաւ, սակաւ մի ցաւեցող ցուցանել զինքն մեծաւորին իւրոյ, եւ այնպէս թուի ինձ՝ վասն օգտի անձին իւրոյ իսկ եւ բարեկեցութեան: Եւ յետ վախճանին այլ ոչ յիշել ամենեւիմբ եւ ոչ ցաւիլ, այլ փոխանակ ցաւելոյ եւ կսկծելոյ՝ եպերել եւ հեզնել, որպէս ի բնուստ անտի ունին զայն ազգն մեր, որոյ զպատճառն ոչ այլ ինչ զիտեմ, եթէ ոչ՝ զտգիտութիւն եւ զապերախտութիւն:

Բայց ես կրկին հրաման առի ի վեհէն զնալ ի սուրբ անապատն Լուսաւորչայ եւ մնալ անդ շաբաթ մի առանձին, եւ ապա գալ: Եւ ետ հրաման զնալ: Որ եւ եկեալ հայրն անապատին՝ Յոհան վարդապետն, իբրոյ խնդրելով զիս ի վեհէն: Էառ եւ տարաւ յանապատն: Եւ գնացեալ մնացի անդ շաբաթ մի եւ դարձայ ի սուրբ աթոռն:

[Ե]

Եւ յետ ոչ բազում աւուրց կրկին հրամ[ան] առի ի վեհէն՝ զնալ ի հեռագոյն վանորայսն Արարատու: Եւ թէպէտ ոչ կամէր հրաման տալ, վասն զի եւ ինքն փափագ ունէր տեսանել զայն ուխտատեղսն, զոր ոչ էր տեսեալ բնաւ ի վեհապետութեանն իւրոյ, եւ պատճառանօք իմիք փափագէր եւ երանելի հոգին

տեսանել, բայց ցաւն ժամանակիս եւ զբաղմունքն ոչ ետուն թոյլ: Վասն որոյ անճարացեալ ետ ինձ հրաման:

Եւ ելեալ ի սուրբ աթոռոյն՝ տկարացեալ անճամբ, գնացի այնու մտօք ի հաւատով, զի բուժիցիմ ի չարաչար տենդէ ցաւոյս: Եւ գնացի նախ՝ Երեւան, որ էր հոկտեմբեր ԺԶ (16), եւ մի գիշեր մնացի Երեւան: Եւ միւս օրն գնացի ի սուրբ Վիրապ, եւ անտի ի Ակոռի եւ ի սուրբ Յակոբայ աղբիւրն՝ ի Մասիս: Եւ անդ կատարեալ զուխտն իմ եւ մատուցանել ետու պատարագ: Եւ կատարեալ մեր զուխտն եւ դարձաք ի գիւղն Արկուռին:

Եւ անդ սակաւիկ մի հանգչեալ եւ ճաշ արարեալ՝ դարձաք ի Վիրապն: Եւ ի Վիրապին յատակն իջեալ իմ ժամբարական պատրաստութեամբն՝ աւարտեցի զպատարագն եւ ելեալ ի Վիրապէն մնացի զգիշերն: Եւ այգուցն առ[ե]ալ ընդ իս առաջնորդ ճանապարհին արեղայ մի, գնացի ի Հաւուց Թառ, որ է Ամենափրկչի վանք, եւ մնալով անդ Բ (2) գիշեր: Եւ անտի՝ ի Աղջոց վանքն: Եւ դարձայ ի սուրբ Գեղարդն մնալով անդ եւ Բ (2) գիշեր: Եւ անտի եկի ի Գառնի, մնալով գիշեր մի: Եւ անտի՝ ի Նորք, մնալով անդ եւս գիշեր մի: Եւ ապա գնացի ի յԵրեւան, եւ գիշեր մի եւս մնացի անդ:

Եւ ապա գնացի ի Գետարգել: Եւ անդ հասան հրաւիրակքն վեհին, զոր երկիցս եւ երիցս մարդ էր յղեալ գրով եւ թղթով՝ ինդրելով զիս շեշտիւ եւ արագ արագ հասանել նմա: Նախ՝ վասն կարօտութեան երանելոյն: Երկրորդ՝ վասն գալոյ Թօխաթու նուիրակին՝ Աղէքսանդր վարդապետին եւ Սարգիս վարդապետին՝ աշակերտին պատրիարգի, որ յետոյ կոչեցաւ Դէտ Կեսարու: Եւ երրորդ՝ վասն խօթութեան պատահելոյ նմա: Զի եղանակն եւ տարին ծանր էր, եւ օդն՝ ապականեալ, վասն զի համայնք խօթացեալք էին միաբանքն ի սուրբ աթոռն, եւ եւս՝ ի գիւղն: Որ եւ բազումք մեռան. յորս էր նախ՝ հայր սուրբն, եւ Թէքիրտաղցի Սարգիս վարդապետն, եւ Բաղիշեցի Զաքարիայ վարդապետն, եւ հոգեւոր տիրոջ մահտեսի Աւետիսն, եւ այլք ի մահտեսեաց եւ ի գիւղէն յովովք: Իսկ այլք խօթացեալք ընդ երկար տկարութեամբ հազիւ գտան զառողջութիւն մինչեւ ի սուրբ պասեքն:

Որ եւ ի տեսանելն իմ զեկեալսն եւ զգրերն աճապարեցի, եւ դարձայ ի կրունկն Երեւան եւ հասայ Էջմիածինն նոյեմբերի Դ (4): Վասն զի կամէի գնալ ի Բջնի, ի Կարենիս եւ այլ վանորայսն, բայց ի բաց թողի, որովհետեւ հրաւիրեցայ ի վեհէն եւ փութացայ ի սուրբ գահն՝ ի տեսութիւն սրբազանին:

[Զ]

Իսկ ի գալն իմ ի սուրբ Էջմիածինն, որ էր նոյեմբերի Դ (4) եւ օրն էր երկուշաբթի, զտի զվեհն ի մահճի ընկողմանեալ եւ հիւանդացեալ՝ Բ (2) աւուրքք յառաջ: Եւ հանդիպեալ նմա առժամայն սկսայ հարցանել զպատճառէ խօթութեան, եւ վասն ցաւոյն, եւ թէ՛ յոր անդամ եւ յոր կողմն ունի զխստութիւն ցաւոյն: Իսկ երանելին ասէր, եթէ՛ «Բոլոր անձն իմ ցաւի, եւ ոչ զիտեմ զպատճառն եւ զուստն»:

Իսկ ես՝ տառապեալս եւ վարանեալս, սկսայ յուսադրել, եւ միսիթարել եւ սփոփել մինչեւցմասն մի գիշերոյն՝ մինչեւ երից եւ չորից անգամ ասաց, թէ՛ «Գնայ

հանգստացիր: Խեղճ ես եւ ի ճանապարհէ եկեալ դադարած ես»: Իսկ ես գմտաւ ածեալ՝ «Մի գուցէ նեղասցի կամ տրտմեացի սակս չգնալոյս», ելեալ գնացի ի տեղի իմ:

Եւ այսպէս շիւարեալ եւ վարանեալ կացաք զցայգ եւ զցերեկ մինչեւ ցկիրակի: Եւ ի նոյն օրն եւս շուրջ զմահճովն նստելով վարանեաք եւ ընդ միմեանս հայելով լռելեան, տրտմեալ երեսօք տարակուսեաք: Որ եւ ի նոյն գիշերն եւս մինչեւ ի Դ (4) եւ Ե (5) ժամ ի մօտն մնացեալ, եւ ապա յորդորեցին զիս փոքրաւորքն, թէ՛ «Գնա դու ի քո տեղն եւ թող որ սակաւ մի հանգչի, զի անհանգիստ լինի ի տառապիլն քո»: Եւ ես ելեալ գնացի ի մենարանն իմ: Եւ մնաց անդ որդեակն իմ՝ Յովաննէս վարդապետն, ընդ տէր Յակոբին: Եւ յետ հասարակել զգիշերոյն եկեալ առ իս ասելով, թէ՛ «Ե՛լ, գնա՛յ հոգեւոր տիրոջ մօտն, զի այլիմնապէս երեւի, եւ իւրայինքն ամենայն տարակուսեալ կան»:

Որ եւ վաղվաղակի ելեալ հասի ի մօտն եւ տեսի, որ եւ ի առ եւ տուր շնչոյն էր՝ ի հոգեվարութեան: Եւ սկսայ աղաչանօք խնդրել տալ օրհնութիւնն ամենեցուն, այլե՛ւ արձակումն բանիւ եղելոցն, եւ պատուէր վասն սուրբ աթոռոյն եւ միաբանիցն եւ յանձնարարութիւն վասն իւրայնոցն: Իսկ երանելին երբեմն բանիւ՝ նուազ ձայնիւ, եւ երբեմն օրհնեալ գլխովն նշանակութիւն տայր խնդրոյս:

Եւ այսպէս աջ ձեռն ի մէջ ձեռացս գոլով հեշտ եւ հանգիստ աւանդեաց զմաքուր հոգին իւր ի ձեռն հրեշտակի բարւոյ այնպէս, որպէս թէ ոք հանցէ խնձոր մի ի ծոցոյն եւ տայցէ բարեկամին կամ սիրելոյն իւրոյ՝ Թ (9) կամ Ժ (10) ժամու գիշերոյ նոյեմբերի ԺԱ (11) լոյս երկուշաբթի:

Որ եւ ի լուսանալ առաւօտին ծանուցաք Երեւանայ մէլիքին՝ պարոն Յակոբջանին, որ հրաման էառ ի դքսէն Երեւանայ, որ էր տէրթերտար: Ալի-փաշայն տկարացեալ գոլով եւ անկեալ ի մահճի, եւ մինչ կամէին առնուլ ի նմանէ զհրաման թաղելոյն, առժամայն մեռաւ եւ փաշայն՝ առաւօտեան ճաշու ժամու: Զի հոգեւոր տէրն ի գիշերին վախճանեցաւ, եւ ի նոյն առաւօտին փաշայն եւս մեռաւ Երեւան: Վասն որոյ գեխեան ետուր հրաման, զի թաղեսցի:

Եւ ի միւս օրն ի տեղի փաշային եղին զհաճի Հիւսէին փաշայն, որ էր տեղեալ տէրէնտեցի եւ կայր Երեւան մաֆազայ՝ պահող:

Եւ եկեալ մէլիք Յակոբջանն փաշա<յա>ի չուխատարի մի Էջմիածին, եւ երեքշաբթի անարժանս ժամ արարի եւ օծի, եւ տարեալ թաղեցինք ի սուրբ Գայիանէն: Եւ ես ոչ կարացի գնալ վասն սաստիկ ջերմանս, որում տենդէր զիս օր ընդ մէջ, այլ յուշաթափեալ եկի եւ անկայ ի մահիճս:

Իսկ ի միւս օրն առեալ իմ զբոլոր ուխտ սուրբ աթոռոյս գնացինք ի Գայիանէ, եւ կատարեցինք զայդն, եւ յետ այգոյն դարձանք ի վանքն:

Եւ ի նոյն օրն կամայ ակամայ զմեզ Ե (5)-Զ (6) վարդապետօք տանէին յԵրեւան: Որ եւ ի ճանապարհին, յորժամ անցաք զհանգուցեալ եկեղեցին, տեսաք զբազմութիւն արանց եւ կանանց՝ Երեւանայ բնակողացն մեր ազգէն, որ փախստեայ գային: Յորմէ սոսկացաք եւ հիացաք զխեղճութիւն նոցին: Եւ կամեցաք եւ մեք դառնալ անդրէն ի

վանքն, զի մի գուցե ի գալ զօրացն պարսից գտանիցիմք ի մէջ բերդին Երեւանայ: Եւ այսպէս աղաչելով զմէլիքն եւ զչուխատարն, որ էր մուպաշիր ի վերա մեր, հասանք ի Փարագար: Եւ սակաւ մի նստեալ անդ եզերս առուի միոյ հանեալ եղի ի ձեռս նորա Ե (5) ոսկի: Բազում աղաչանօք հազիւ զերծաք եւ դարձաք ի վանքն:

[Է]

Իսկ ի միւսում օրն, որ էր հինգշաբթի, կանուխ առեալ զմեզ Ե (5)- Զ (6) վարդապետօք եւ յակամայ կամօք քարքաշ տարան յԵրեւան: Որ եւ իմ տենդիս օրն էր, յորում զերծայ ի նոյն օրն, քանզի մուպաշիրն չորեքշաբթի յերեկոյին եկեալ էր: Վասն որոյ հինգշաբթի կանուխ ելեալ գնացաք: Որ եւ զճանապարհն առողանէի արտասուօք վասն զանազան պատճառաց:

Եւ յորժամ հասանք յԵրեւան, տարան զմեզ ի դուռն քաղաքապետին եւ նախ՝ ի մօտ ռայիսին, որ էր քէլեան: Եւ սկսաւ նախ ողորանօք յորդորել զիս, թէ՛ «Որովհետեւ վախճանեցաւ խալիֆայն, եւ դու նորա ծանօթ սիրելի ես, եւ ամենայն միաբանքն զքեզ կամին, եւ ծանուցանեմ փաշային, որ դու լիցիս ի վերա նոցա խալիֆայ ի տեղի հանգուցելոյն»:

Իսկ եւ հրաժարեալ յայնմանէ սկսայ ասել, թէ՛ «Չեմ բաւական այդմ գործոյ եւ ոչ ունիմ կարողութիւն յամենայն կողմանց: Մանաւանդ՝ դարիպ եւ օտար եմ: Ուխտի աղագաւ եկեալ եմ այսր: Որ եւ հրաման ունիմ, զոր տուեալ են ինձ յարքունուստ, այլ եւ՝ զիր դըզլար աղասուցն եւ դափուճիպաշի Գուլ Ահմէտ աղայէն, որ ինձ տիրութիւն արարեալ զիս անդրէն ի վիճակն իմ դարձուձանէք: Այլ եւ՝ բազում բանս պաղատանաց, զոր մի ըստ միոջէ գրելն ձանձրութիւն է:

Բայց ոչ եղէ հնար զերծանիլ, այլ դարձոյց զողորականն ի խրոխտական եւ սպառնական: Եւ սկսաւ կերպիւ կերպիւ ահացուցանել զիս եւ մահու եւս սպառնացաւ: Յորում կայի շիւարեալ եւ տարակուսեալ: Եւ առժամայն ոտին կացեալ գնաց մօտ փաշային: Եւ իսկոյն յետ եկեալ ասաց. «Տարեք զայդ փաշային մօտն»: Պատուէր տալով ինձ, թէ՛ «Չլինի՛՝ հրաժարիս, որ փաշայն զքեզ կմահացուցանէ»:

Եւ յորժամ տարան զիս յանդիման փաշային, սկսաւ եւ նա սաստկութեամբ եւ մեղադրանօք խօսիլ ընդ իս: Որ եւ նորա պատասխանեցի, թէ՛ «Մեր նախնի սովորութիւնն այն է, որ մահսար անեն Սպահան եւ Ստամպոլ, որ այն Բ (2) քաղաքացիք միաբանին եւ զմի ոմն ընտրեն եւ կացուցանեն: Ապա թէ՛ ոչ, սուրբ աթոռին եւ կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի: Որ եւ զիր ունիմք այսպէս՝ հաստատեալ բազմաց գրով եւ կնքով եւ նզովիք փակեալ»: Եւ այլ՝ շատ խօսք եւ զրոյց եւ թէ՛ որչափ լացի եւ ողբացի՝ ոչ եղէ հնար:

Այլ բարկացեալ ի վերա իմ եւ ասաց, եթէ՛ «Սպահան եւ Ստամպոլ մինչեւ երթեւեկութիւն գրերաց լինի եւ ընտրութիւն վասն ումեմն, ի մէկ տարին չլինիր: Եւ ահա երկուց կողմանց զօրք եւ պատերազմունք երեւին, եւ Էջմիածին ի վերա ճանապարհին: Մինչեւ ցայն օրն վանքն պիտի քակուի, եւ միաբանքն անգլուխ գոլով՝ մինն ոչ մնայ, այլ՝ ցրուին: Այնուհետեւ ինչ օգուտ է ձեր ընտրութիւնն: Գնա՛՛,

ահա հրամայեցի քեզ, եւ յանձն առ: Եւ ըստ օրինաց ձերոց կատարեսցեն զկարգ կաթողիկոսութեան ի վերա քո, եւ կառավարեայ զայն թեքքէն: Չի ոչ միայն ձերն է, այլ մեր թագաւորին է, եւ մեզ ասպնջատեղ եւ պիտանացու: Եւ ես մարդ առաքեմ հանդերձ գրերով, արգիլամով եւ տամ բերել զհրաման ի յարքունուստ վասն քո»:

Եւ այսպէս քարշեցին զիս արտաքս եւ գրեցին զպոյրութի մի, թէ՛ «Դուք՝ միաբանք Էջմիածնայ, որովհետեւ ընտրեցիք եւ կամեցաք զդա լինել ձեզ զլուխ, ահա հրամայեցի նստիլ դա խալիֆայ ձեզ: Եւ դուք, զոր օրէնք եւ արարողութիւնք՝ կատարեցէք եւ հնազանդ լերուք, որպէս յառաջնոցն: Եւ զայլ հարկաւոր բանսն ի յարքունուստ եւ հոգամ, ձեզ հոգ չլինի»:

Եւ առեալ զիս տարան ի տուն մէլիք Յակոբջանին, եւ Գ (3) օր մնացեալ ի տուն մէլիքին: Եւ ապա ժողովեալ զքէտխուտայքն Քանաքէռու, զԵրեւանայ եւ այլոց տեղեաց, այլ եւ, զառաջնորդս վանորէից յԷջմիածին: Եւ անտի եւս գրեցին Կարբի, յԱշտարակ եւ այլ տեղիս՝ զալ իշխանաց եւ քէտխուտէից, որ եւ եկեալ ժողովեցան ի սուրբ Էջմիածին մնացեալ վանորէից առաջնորդքն:

Եւ նոյեմբերի ԻԴ (24) յիսնակաց կիրակին օծին զանարժանս կաթողիկոս եւ եղին ի ծառայութիւն եւ ի ներքոյ լծոյ սուրբ Էջմիածնի աթոռոյն մեծի սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որ էր թուին մեր ՌՃՁԳ (1734):

[Ը]

Յետ այսորիկ սկսայ մտախոհ լինիլ եւ յամենայն զօրութենէ ջանալ եւ արիանալ վասն մեծի գործոյն եւ կառավարութեան սուրբ աթոռոյն մեծի. եւ զի անձանօք գոլով իմ երկրի, եւ մարդկանց, եւ միաբանից, եւ ամենայն ելից եւ մտից եւ արարողութեան եւ վասն պակասութեան փողից, որս ոչ գոյր ամենեւին: Իսկ վանից ծախքն՝ բազում եւ անթիւ:

Յոյժ վշտանայի, տառապէի, բայց ողորմածն Աստուած ինամեր եւ ստածեր. երբեմն ի հողոյ արդեանց վաճառելով եւ երբեմն ողորմութիւն ի եկողաց օգնութիւն հասանելով եւ երբեմն փոխ առնելով: Մինչ զի ԻՌ (20000) դուռուշ մինչեւ ցայսօր պարտք արարեալ եմ:

Եւ այսպէս տանջանօք եւ խղճութեամբ կառավարեցի զսուրբ աթոռն:

Յորում ժամանակի պաշարեալ կայր Կենճէն ի պարսից: Եհաս եւ Քեօփրլու օղլուն ի Յամթայ բազում զօրօք ի Պայագիդ եւ անտի ի Ղարս՝ ձմեռելով: Եւ ԺՌ (10000) սօմար ցորեան Թէմիր փաշային հրաման արարեալ՝ որ տարաւ հասոյց ի Թիֆլիզ եւ եկն դարձեալ ի Ղարս: Նոյնպէս եւ Ղարսայ՝ բազում պատրաստութիւն ցորենոյ, եւ զարւոյ եւ այլոց իրաց: Եւ պատերազմողական անօթից յղեաց յԵրեւան:

[Թ]

Եւ յորժամ էանց դառնութիւն օդոյն ձմեռայնոյ, եւ կակղացաւ սակաւ մի եղանակն եւ մտաք ի թուականն ՌՃՁԴ (1735), եւ ապրիլ ամսոյն չուեաց իսողաց Թահմազ[ղուլի] իսանն ի վերա Ղարսայ քաղաքին՝ կողմամբն Ղազախու եւ Լօռու՝ մինչեւ սպառեալ

Էր ձիւնն ի լեռնային կողմանցն յայնցանէ: Քանզի լուաք ի գորաց պարսից եւ մերձակայից Խանին, թէ զծործոր մի յորում կամէին անցանել եւ շրջիլ ի վերա Ղարսայ, սուսերօք իւրեանց պեղեցին, հատին եւ ճանապարհորդեցին անցանել: Որ եւ ի գիշերին այնմիկ կրկին ձիւն եկեալ ելից զճանապարհն, յորում աշխատեալ էին աւուրս Բ (2): Եւ ապա այնուհետեւ ընդ այլ ճանապարհ անց գտեալ բազում դժուարութեամբ հասին ի սահմանս Ղարսայ:

Որ եւ ելեալ ընդդէմ միմեանց զմի օր պատերազմեցան ընդ իրեարս: Եւ երկուց կողմանց անկան մեռեալք եւ վիրաւորեալք՝ իբրու Զ (6)-Է (7) հարիւրից: Բայց կողմն հազարացոց ի փախուստ դարձան: Եւ Խանն դարձաւ ի բանակտեղն իւր՝ ի տեղի անուանեալ Եախնի թէփէ: Եւս վասն ոչ գոյ խորակ բաւական զօրացն եւ գրաստուցն դարձաւ հանճարեղն եւ երկրորդ Աղեկսանդրն ի յԱյրարատ՝ Պաշ Ապարանովն գալ յԵրեւան եւ յԷջմիածին:

[Ժ]

Արդ ի դառնալն Ղարսայ մեծի Խանին եւ ծանր-ծանր գալ ի կողմանս Արարատու եկեալ եհաս ի յԱպարան՝ ի Շիրաղալայ կոչեալ տեղի: Եւ զօրքն սփռեցան մինչ ի Կարբի, եւ Աշտարակ եւ յՈւշական: Եւ յուշ արարին ինձ իշխանքն մեր, որք կային ի բանակին, եւ Մելիքջան քալանթարն, թէ՛ «Հարկ է գալ քեզ ի տեսութիւն Խանին ընծայիք եւ պատրաստութեամբ»: Որ եւ ելեալ անյապաղ Ե (5)- Զ (6) վարդապետօք եւ նուիրօք ըստ կարողութեան մայիսի ԻԷ (27) որ էր հոգեգալստեան երրորդ օրն երեքշաբթի, եւ հասայ ի նոյն օրն ի Յոհանավանքն: Եւ չորեքշաբթի գնացինք ի յԱպարան՝ ի կողմն Շիրաղալայ կոչեցեալ տեղոյն մերձ: Որ եւ ազդեցին Խանին վասն մեր, եւ ետուր հրաման նասաղչի պաշուն՝ Ապդուլ-հասան բեկին, դօնաղ առնուլ զմեզ: Եւ գնացեալ առ նա հանգեաք գայն գիշերն:

Իսկ լոյս հինգշաբթի վաղ քաջ ընդ առօտն, մինչ կամէր լուել, տարան զիս ի դէմ իւր ընծայիք: Եւ գնացեալ իմ բարեւեցի եւ շնորհաւորեցի զգալուստ իւր: Որ եւ ինքն եւս ասաց. «Խօշ կէլտին Խալիֆայ նիճէ սէն: Չաղ սէն: Տէ աթլան Խալիֆայ կէտէք իլէրի»: Եւ առժամայն ձիաւորեալ ինքն գնաց զօրօքն իւրովք եւ բանակն՝ զկնի: Եւ ետուր ինձ զինուորս իւր սպասաւորացն, որ անկեալ առաջի իմ տարան եւ զիս զկնի իւր:

[ԺԱ]

Եւ յորժամ հասանք ի տեղի բանակին, եւ իջաւ ի վրանն իւր, խնդիր արար ինձ: Եւ փութացան խնդրակքն մինն զհետ միոյ՝ շեշտիւ եւ ստիպով: Քանզի այսպէս սովորութիւն ունին զամենայն գործս իւրեանց ծառայական շտապով եւ շուտափոյթութեամբ կատարել: Եւ առժամայն փութացուցին զիս եւ հասուցին ի վրանն իսանին որ եւ հրաւիրեալ զիս ի ճաշ ի սեղան իւր: Եւ այսպէս զաւուրս երիս ընդ իւր ունելով ի բանակին, մինչեւ եկեալ հասանք ի Դոդս գիւղն:

Եւ ապա հրաման ետ ինձ գնալ յԷջմիածին: Յորմէ վստահացեալ հրաւիրեցի եւ եւս զնա գալ ի վանքն՝ թամաշայ եւ զիարաթ: Եւ խոստացաւ գալ: Որ եւ շաբաթ օր մայիսի ԼԱ (31) եկեալ բանակեցաւ մերձ քանքանին՝ եզերս գեղին, ի հանտն: Որ եւ

զգորեանն եւ զգարին իսպառ կերցուցին երիվարացն եւ արաթուր կոխեցին: Չի ժամանակ էր հնձոց, եւ չեւ եւս էր հնձեալ, եւ իսպառ հատուցին ի դաշտէ անտի:

Իսկ ես ակն ունէի, թէ՛ ինձ իսպար լինի ի նմանէ, եւ կիրակի ոչ գնացի: Բայց երկուշաբթի առաքեցի զաթոռակալ Աղէկսանդր վարդապետն ի բանակն որ զրոյց բերցէ զորպէս կամիլն իւրեանց: Եւ իսկոյն դարձաւ առ իս աթոռակալն տրտմեալ երեսօք եւ թախանձեալ լքեալ սրտիւ՝ որպէս կիսամեռ: Որ եւ ի տեսանելն իմ գնա այնպէս տխուր եւ իմացեալ զպատճառն՝ որ բարկացեալ էր խանն, թէ՛ «Վասն էր ոչ եկին առաջի իմ, յորժամ եկի ի յօթեւանս եւ անտի առեալ տանէր զիս Էջմիածին»:

Արդ ես ոչ գիտացի, եւ այլք՝ քան զիս անբանացեալք, ոչ ուսուցին զիս զձէսս պարսից եւ զսովորութիւնն երկրին:

Վասն որոյ ահիւ պակեայ եւ ի կենցաղս յուսահատեցայ: Եւ սկսայ այնուհետեւ զյետին եւ զհրաժարական զողջոյնն տալ եւ ներումն եւ զաղօթս խնդրել ամենեցունց: Եւ մտեալ ի սուրբ տաճարն անկեալ առաջի սուրբ իջման տեղոյն լալով, հառաչանօք եւ դառն արտասուօք յանձնելով զհոգի իմ յԱստուծոյ, եւ այսպէս պաշարեալ երկիւղիւ եւ լքեալ սրտիւ գնացի ի բանակն կիսամեռ:

Եւ մինչ ակն ունէի տանջանաց եւ մահու եհարց Խանն, թէ՛ «Խալիֆայ նիչին օ չաղ քի կէլտրմ սան կէլմատրն դարշուլամաղայ պիզի, ինտի քի նէ չուն թաքիֆ էլլատուն Ուչքիլիսայէ»:

Իսկ ես լալով եւ դողալով պատասխանեցի. «Խանըմ, պէն Ուռումտէն գէլմիշէմ, քի մալում տուր, պու էրն էտէթին պիլմէմ: Քիմսանն սուչի եօքտուր, սուչ պէնումտուր: Օլտուրսան պէնի օլտուր»:

Քանզի բարկացեալ էր ի վերա միրզայ Մեհթուն, թէ «Վասն էր ոչ ազդեցեր Խալիֆային զի նա օտար երկրէ է եւ ոչ գիտէ»: Եւ առժամայն ողորմածն Աստուած յեղաշրջեաց զսիրտն ի քաղցրութիւն: Եւ խանդաղատեցաւ նշդեհութեանս իմում եւ ասաց. «Ճշմարիտ է իսօսքն Խալիֆային եւ ոչ գիտէ զորպիսութիւնն երկրին: Բայց մեզ պարտ է Խալիֆային խիլաթ տալ»:

Եւ զի առաջի նուագին՝ որ գնացի ի տես, շնորհեալ էր ինձ զկաթողիկոսութեան րախամն եւ այլ Գ (3) րախամ եւս: Որ էր մինն վասն աւանդիցն, զոր շահի եկած տարին զայնոսիկ, զոր քջեց շահն եւ տարաւ ընդ իւր, տուեալ էին ի պահեստ սուրբ Էջմիածնայ եւ այլոց վանորէից եւ գիւղորէից: Եւ յետոյ լուեալ օսմանցօցն յափշտակեցին զայն: Մի կարասցեն յետս պահանջել:

Եւ երկրորդ. զի թուրքացողքն ի հայրենեացն զրկեցին:

Իսկ երրորդն. մի ոք զայցէ ի վանքս եւ նեղացուցէ առանց հրամանաց Խանին:

Եւ առժամայն հրամայեաց Խանն, եւ բերին զխիլայն եւ արկին ի վերա իմ, որ էր քէթիպի զարպաֆ սամուր գրապանաւ:

Եւ այսպէս, մինչ մահու սպասէի, խիլայեաց զիս:

Եւ ով որ ոչ զարմացի: Փա՛ռք Աստուծոյ հրաշագործութեանն: Մեծ են գործք քո Տէր եւ յոյժ խոր են խորհուրդք քո:

Վասն որոյ համարձակութիւն գտեալ ասացի: «Խանըմ, եթէ հրաման տաս, գնամ բերեմ զմիաբանքն ուխտին մեր զինաթով, եւ անկեալ առաջի խանիս տարցուք զհրամանդ ի վանքն»: Եւ ասաց. «Բարի է: Այդպէս արարեք»: Եւ առժամայն դարձայ ի վանքն:

Եւ մինչ ակն ունէին ի դագաղի տեսանել զիս, տեսին կենդանի եւ խիլայեալ:

Որով զարմացեալ եւ հիացեալ փառս ետուն Աստուծոյ բոլոր միաբանքն:

Եւ ուրախացեալ ամենեցուն տօն մեծ կատարեցին:

Եւ վաղվաղակի զգեստաւորեցայ: Եւ միաբանքն ամենայն շուրջառով, եւ մանկունքն շապկով, եւ խաչալամով, իւղաբերից մոմերով, թափօրական պատրաստութեամբ զնացեալ առ նա եւ առեալ մեծաւ փառօք բերաք ի սուրբ աթոռն:

Եւ մտեալ ի սուրբ տաճարն առաջի սուրբ իջման տեղոյն կանգնեցաւ եւ եհարց, թէ՛ «Զի՞նչ տեղ է, եւ վասն է՞ր՝ կաթողիկէս»: Նոյնպէս եւ՝ վասն պատկերացն, եւ վասն մեծ կաթողիկէին, եւ շինմանն եւ շինողացն: Եւ ըստ պատշաճի տուաք զպատասխանին:

Եւ եղեալ առաջի աւագ խորանին աթոռ եւ խալիչայ եւ հրաւիրեցի անդ նստիլ: Որ եւ նստաւ վաղվաղակի եւ հրամայեաց ժամ ասել: Եւ ասացաք զերեկոյեան ժամն, զի էր ի տօնի սրբոց Հռիփսիմեանց եւ օրն երկուշաբթի: Եւ ինքն նստեալ հայեր եւ ուրախանայր: Եւ առժամայն զիս յորդորեալ ծերագոյնքն ի միաբանից կանգնեցուցին ի կաթողիկոսարանի զգեստով իմով:

Եւ յետ ասելոյն զերեկոյան ժամն կրկին յորդորեցին զիս ծերագոյնքն, թէ՛ «Ծանուցումն եւ շնորհակալութիւն արա՛ւ եւ օրհնեայ», որպէս եւ արարի իսկ: Եւ վասն զի այլազգեաց լեզուով խնդրեաց Խանն, եւ ես այնպէս խօսեցայ առաջի իւր:

Յորմէ ուրախացեալ եւ յետ արձակմանն ելեալ արտաքս եկեղեցւոյն, եւ ետուր ձեռամբ միրզին իւրոյ ԳՃ (300) փլօրի ողորմութիւն եւ գնաց: Գնացի եւ ես մինչ ի միջի դուռն, եւ յետս դարձոյց զիս: Եւ ինքն գնաց ի բանակն:

[ԺԲ]

Եւ ի նոյն գիշերի, մինչ չեւ էր լուսացեալ, արձակեաց եւ զուհիքն իւր, որք եկին եւ նոքա ի տեսութիւն սուրբ իջման տեղոյն: Եկաւ եւ ինքն կրկին անգամ ի լուսանալն: Եւ ուրախացեալ ի մէջ տաճարին զուարճացոյց զիւրայինքն՝ պատմելով նոցա զամենայն , զոր լուեալ էր: Եւ վայելեալ զշարպաթներն, եւ զծխանելիքն, եւ զկուլապն եւ զայլ պատրաստութիւնս քաղցրեղինաց եւ ընթակայից, եւ ապա ելեալ արտաքս ի վանից մեծ դարվազէն՝ առաջի զերեզմանացն, եւ իսկոյն կոչել ետուր զիս առաջի իւր:

Եւ շնորհակալեցաւ եւ մխիթարեաց ասելով. «Մի հոգար, եւ մի տրտմիր եւ բնաւ մի երկնչիր: Այս օճադս մեր է, եւ դու մէկ եախշի ծեր մարդ ես: Տունդ աւատան լինի, (իբրու ասել է, թէ՛ տունդ շէն լինի): Կացիր բարով: Եւ թէպէտ զանդս ձեր եւ զբարիս զերիվարաց եւ զօրաց իմոց կերցուցի, բայց զփոխարէնն ձեզ հատուցանելոց եմ ի ժամանակին»:

Եւ մտրակեալ զերիվարն գնաց խաղաղութեամբ եւ սիրով զճանապարհն իւր՝ ի վերա Փարագարու եւ անդ բանակեցաւ:

Եւ ես ի նոյն օրն զկնի իւր գնացի ի բանակն ի Փարագար սակաւ ընծայիւք: Եւ կրկին յուսադրեաց եւ դարձոյց զիս ի վանքն, եւ ինքն գնաց ի վերա Երեւանայ ի Եղեւարդոյ կողմն:

Եւ օսմանցիք ելեալ Երեւանու բերդէն դիպան իրար սակաւ մի եւ դարձան կրկին ի բերդն: Որ եւ սպանին ի թուրքաց Է (7) այր, եւ Բ (2) կենդանի ըմբռնեալ տարան ընդ ինքեանս եւ գնացեալ բանակեցան մերձ Եղեւարդոյ ի վերա բլրի մի օրն հինգշաբթի, որ էր յունիսի Ե (5): Բայց, մինչ Փարագարն էր, ի նոյն գիշեր բերին զրոյց առ նա, եթէ՛ «Օսմանցոց սարասկար Ապտուլահ փաշայն էանց զգետն Ախուր[ե]ան բազում զօրօք եւ գայ ի վերա քո: Պատրաստ լեր ի պատերազմիլ, զի բանիւ եւ փախչելով պատերազմ ոչ վճարի»: Իսկ մեծախելք Խանն խիլայեաց զեկողն եւ ասաց. «Գոհութիւն Աստուծոյ. զի եւ ես ի բազում ժամանակաց՝ ի հեռուն հետե, զայն խնդրէի»:

[ԺԳ]

Եւ սկսաւ այնուհետեւ տեսանել զպատրաստութիւն իւր վասն պատերազմի: Եւ զատոյց զամենայն ծանրագոյն կա[րա]սին այսինքն՝ զմեծամեծ վրանսն, զգերիսն, եւ զայլ անօգուտ չպատերազմողն եւ զուհիսն. ընդ Գեղամայ ծովուն եզերովն խաղացոյց գնալ ի Թարվէզ:

Եւ ինքն մնաց արիական պատերազմողօք ԺԸ (18) հազարաւ, եւ ընտրեաց իւր տեղի բանակի եւ վրանի զբլուր մի բարձաւանդակ, որ ի հնուց անուանեալ էր Ախի Թէփէսի: Եւ անդ հարեալ զվրանն ամրացոյց զբլուրն բլրի այն քարէ կարկառիւ, իբրեւ զբրքունս՝ կիսագունդ, ի չափ Բ (2) գազի զբարձրութիւնն՝ իբր զպատնէշ, զոր այլազգիքն մաթարիզ անուանէն: Որ թէ յանկարծակի գայցեն օսմանցիքն ի վերա սոցա, անտի կարիցեն պատերազմիլ ընդ նոսա հրահանելեօք, կամ՝ այլովք պատերազմական զինուք: Եւ այսպէս զբլուր բլրին երիցս եւ չորիցս շրջապատեաց:

Եւ ի շաբաթ օրն եհաս եւ Քօբրլու օղին զօրօք իւրովք: Ի յԱպարանու վերի կողմէն էջ ի ստորոտն Արայի լերան՝ յանդիման Եղուարդու: Եւ ելեալ չարխաճիքն ընդդէմ միմեանց դիպան եւ անկեալ երկուց կողմանց սակաւ դիակունք, ի բաց կացին ի միմեանց:

Իսկ զգիշերն ամենայն աշխատեցան պարսիկքն վասն ջրոյն պակասութեանն: Եւ զոր ինչ ոչխար եւ այծ ունէին՝ զենին եւ զտիկս հանեալ ջրով լցրին: Նոյնպէս եւ զայլ ջրի ամանսն լցուցեալ պատրաստեցին ի բլրին, զի հեռի էր գետն Չանկի, իբրեւ ձիու արշաւանս Բ (2)՝ յետուստ կողմանէ, եւ առաջի նոցա՝ զօրքն թուրքաց:

[ԺԴ]

Մեծ են գործք Աստուծոյ, եւ յոյժ խոր են խորհուրդք ամենակալին: Եւ ո՞վ է այն ի հողեղինաց որ կարիցէ քննել կամ վերահասու լինել: Մքանչանամ այժմ, եւ հիացումն ունի զմիտս իմ: Բարե՛ հրաշիցն Աստուծոյ եւ արդար իրաւանցն Արարչին:

Զի այնմ վայրի եւ ի նոյն տեղի, որում ԺԵ (15) ամաւ յառաջ Գ (3) զօրագլուխ Յ (300) արամբքն զԺԲՌ (12000) պարսիկս կոտորեցին, եւ արեան ճապաղի դիաթաւալ ընդ երեսս դաշտին զգէշս մարդկան արկին կերակուր լինել զազանոց եւ թռչնոց, նոյնգունակ զտրիտուրն փոխարինաց հատոյց ամենակարողն:

Զի յետ շաբաթուն յաւուրն կիրակէի, որ էր Ը (8) ամսոյն յունիսի, ի յերկրորդ ժամէ աւուրն սկսան պատերազմիլ:

Իսկ մեծ Խանն եւ արին Թահմագոլի, մինչ պատերազմէին, զգօրս իւր սակաւ ցուցեալ, որպէս թէ երիս գունդս հազարական թուով, մինչ զի առ ոչ ինչ համարեալ օսմանցոցն զօրս պարսից վասն սակաւութեան՝ իսկոյն հրամայեցին բանակին իւրեանց բառնալ զկարասին եւ ենկիչարիք հետեւակ՝ առաջի, եւ թօփերն՝ զկնի:

Որպէս ասի յոմանց, թէ Կ (60) թօփ ունէին օսմանցոց, որ եւ ես տեսի զքառասունս:

Եւ զկնի թօփերաց հեծեալքն, եւ ի միջի իւրեանց՝ սերասքեր Ապտուլահ փաշեն, եւ Մարու Մուստաֆայ փաշայն, եւ Թէմուրն, եւ Փօլատն այլեւ՝ Քոռ չաւուշն, որ եւ պարծեցեալ էր ի նոյն զիշերին, եթե՝ «Ի՛նչ պիտի լինին պարսիկքն, զի առ ոտս հեծելագօրացն իմոց տամ առաթուր կոխել զնոսս»:

Իսկ ի խմբել պատերազմին՝ որովհետեւ վասն սակաւութեան պարսից զօրաց պատրեցան օսմանցիքն, եւ հեռացան ի ստորոտէ լեառնն Արայի եւ դիմեցին ի վերա պարսից զօրացն, եւ սոցա խոյս տուեալ սակաւ սակաւ հեռացուցին ի լեռնոտէ անտի եւ ածին մինչեւ Եղարդայ դաշտն: Ապա ելեալ ի ձորոց ի կողմանցն Երեւանու զօրք պարսից, որպէս ասեն թուօք ԺԸՌ (18000) աց, եւ թէպէտ այնքան էին եւ գունդ գունդ կազմեալք, բայց հայէին ի հեռաստանէ եւ ոչ պատերազմէին, զի ոչ ունէին հրաման ի Խանէն, այլ միայն՝ Գ (3) գունդն՝ հազարական արամբ: Այն՝ որ կարգեաց Խանն, նոքա պատերազմէին:

Իսկ Խանն ըստ արիական սովորութեանն իւրոյ կազմեր, յօրիներ, կարգեր, յորդորեր եւ զիւր հրահանելիքն յաջմէ, եւ յահեկէ եւ ի մէջտեղաց տեղաւորեր: Նոյնպէս եւ՝ զամպարական, որք են մեծամեծ թֆանկներ՝ ամէն ըղտի վերա մի հատ ի ճակատ սամարին, որ է ի վերա ողին ըղտոյ թուով՝ ԷՃ (700): Եւ այսպէս նախ՝ զմեծ թօփերն ետուր ձգել, եւ ապա՝ զամպարական:

Եւ խմբեցան ընդ միմեանս ճակատ առ ճակատ: Եւ ընդ թֆանկսն զմիմեանս յաղթահարէին հետեւակք ի յերկուց կողմանցն յունիսի Ը (8) օրն կիրակի: Սկսեալ ի երրորդ ժամէ աւուրն մինչեւ ցիինգերորդ ժամն հրօք եւ հրահանելեօք պատերազմեցան: Օսմանցիքն Բ (2) կամ Գ (3) թօփ միայն կարացին ձգել, իսկ

պարսից կողմն՝ թուի, թե 3 (300) եւ այլ աւելի թօփ ձգեցին, եւ զամպարակներն՝ զամենայն եւ ձեռաց թֆանկներն՝ բազում:

Եւ յանկարծակի Խանն հասաւ ի թօփխանային օսմանցոց եւ տիրեաց: Եւ յորժամ տեսին եւ լուան զտիրելն թօփխանային, առժամայն ի փախուստ դարձան օսմանցիքն, եւ եւ պարսիկքն՝ զկնի կոտորելով: Կոտորելով հասուցին զմի ծայրն ի վերի կողմն Արայի լեառն՝ հանդէպ Սաղմոսավանից եւ զվարի ծայրն զօրաց՝ ի կողմն Աշտարակու, եւ ի միջի եղեալսն՝ դէմ ածին Քարսահ գետոյն դիմաց Յոհանավանից եւ Կարբու եւ Սօղնու: Որ եւ թուի, թե բազումք էին զահավիժեալքն ի ձորն Քարսահ գետոյն, քան թէ սրով սպանեալքն:

Որ եւ զօրավարն նոցա զՔեօբրլու օղլին, ի նեղ արկին: Եւ մինչ կամեր իջանել ի քարափէն ի ձորն նեղ եւ դժար քարոտ ճանապարհաւ մի ոչ ժուժեաց ի վերա ձիոյն, այլ անկաւ ի ձիոյն ի վերա քարանց, եւ կարի վիրաւորեցաւ զլուխն եւ մերձ էր ի մեռանիլ: Վասն որոյ զլիատեաց զնա անարգ պարսիկ մի եւ երբ զլուխն առաջի Խանին: Եւ յորժամ տեղեկացաւ Խանն ի կենդանի կալանաւորաց օսմանցոց, թէ ճշմարիտ սերասքեր Ապտուլահ փաշային զլուխն է, իսկոյն խիլաեաց զբերողն զլիտոյն եւ խոստացաւ այլ եւս խիլայս, զի թէ եւ զմարմինն բերցէ: Որ եւ իսկոյն զնացեալ գտին եւ բերին եւ ետ տանել ի Կարբի: Եւ դիագարդեալ եղին ի դագաղն, եւ հասուցին ի Ղարս եւ անդ թաղեցին:

Այլ եւ, զտամաթ Մուստաֆայ փաշայն եւս սպանին ի պատերազմին: Եւ զնա ետ զտանել եւ դիագարդեալ յդեաց ի յԵրեւան, որ անդ թաղեցին ի մէջ նոր ջամուն:

Եւ այլ Բ (2) թուողով փաշայք կային. մէկն՝ առնաւուտ եւ միւսն՝ պօշնախ, զոր անկան եւ նոքա ի պատերազմին, որպէս պատմեցին մեզ:

Եւ այսպէս մեծ կոտորած առնելով հասուցին զմի ծայրն վերի կողմամբն ի Ախուր[ե]ան գետոյ, որ է Արփաշային: Եւ զմի ծայրն վայրի կողմամբն ստորոտով լերինն Արագածու՝ կրկին մինչեւ ի նոյն գետն:

Որ եւ յետ կոտորածին հանդէս արար եւ ետ ի թիւ արկանել զսպանեալսն: Եւ գտին ԽՌ (40000) դի ի յօսմանցոց: Իսկ ի պարսից թուի, թէ ԺԵ (15) կամ Ի (20) մարդ չպակասեցաւ, զի հիացումն էր կարկամիլն եւ կապիլն օսմանցոց առաջի պարսից: Որք եւ ձեռք անգամ ոչ կարէին վերացուցանել, որպէս թէ կապեալ էին առաջի սպանողաց:

[ԺԵ]

Իսկ յետ երից ատուրց օրն երեքշաբթի զնացի ես՝ տրուպ Աբրահամ հոգեւոր տէրս ի տեսութիւն Խանին ի կողմն Եղւարդու մերձ բլրոյն Մուրատ թէփէսի անուանելոյ: Եւ ի ճանապարհին հանդիպեցայ դիականցն՝ սկսեալ ի Աշտարակոյ հանդէն մինչեւ ցԵղւարդ անթիւ բազմութեան սպանելոցն: Եւ դեռեւս կային ոմանք կենդանի, որ եւ խուզէին պարսիկք: Զայնպիսիսն եւս սպանէին: Որպէս եւ տեսայ աչօք իմովք, մինչ զնայի ի ճանապարհին:

Որ եւ վերա հասայ հայու մի կիսամեռի, մինչ կամէին մահացուցանել, եւ թափեցի ի ձեռաց նոցա: Եւ զիմ շաթիր Պօղոսն ի հետն եղի բառնալով ի վերա գրաստու եւ ետու տանել ի յԱշտարակ ի խուցն եկեղեցոյն: Եւ պատուիրեցի, զի քահանայք հոգ տարեալ խնամք տարցեն: Որ եւ գտեալ զառողջութիւն եւ կատէպան մտեալ, որ է այգէպահող, եւ անդ ումեմն մնաց անդանօր:

Այլ եւ բազում վիրաւորեալք, որք զերծան ի պատերազմէն, եկին երկրորդ օրն ի յԷջմիածին՝ թուրք, հայ, հռոմ, առնաւուտ: Եւ բազմաց դեղ առնել ետու: Եւ զիշերով զտաճկունսն յուղոյ եղինք Երեւան: Եւ այլ ի մերայնոց եւ յունաց՝ ոմանք մեռան, եւ ոմանք առողջացեալ գնացին ուր եւ կամեցան:

[ԺԶ]

Եւ ապա այնուհետեւ հետեւեցաւ Խանն ելանել ի գագաթս լերանց ի կողմն Ղրիսպուլախու՝ մերձ Գեղարդայ եւ Գօրատարայի: Որ եւ սփռեալ տարածեցան զօրք բանակին մինչեւ Ծաղկունաձորն եւ մինչեւ եզրն Գեղամայ ծովուն: Որ եւ մնաց ի զբօսանս մինչեւ ցյուլիսի վերջն: Եւ օգոստոսի սկիզբն սկսաւ ի լեռնէն նոյն ճանապարհաւ, ընդ որ գնաց, եւ եկեալ եհաս մերձ ի տեղի պատերազմին՝ ի բլուրն Մուպարաք թէփէսի ասացեալ: Զի սկիզբն բլրիս անունն Ախի թէփէսի էր, իսկ ի պատերազմին՝ որովհետեւ յաղթեաց Մուպարաք, թափայ կոչեցաւ, եւ մնաց անունն այսպէս:

Եւ յորժամ եկն մեծաբաղդ Խանս մերձ այսմ բլրիս, էի եւ ես ընդ նմա, քանզի խնդրեալ էր զիս: Եւ յառաւօտուն, երբ կամեր չուել, ել ի բլուրն այն. կոչեաց եւ զիս ընդ մեծամեծս խաներօք եւ միրզօք հանդերձ, զքեալանթարն եւ զմէլիքն եւս, ի գագաթ բլրին՝ ի տեղին, որում հարեալ էր զվրանն իւր յաւուր պատերազմի, յորում զյաղթութիւն արար:

Եւ շատ երկար խօսեցաւ ընդ մեզ: Նախ՝ վասն գմբեթին, որում հրամայեաց շինել օրինակ վրանին իւրոյ, զի մնացէ յիշատակ եւ յիշեցցի ապագայիցն: Եւ երկրորդ՝ խօսեցաւ պատրաստելոյ վասն զմեզ եւ պահպանելոյ ի նենգութենէ հազարացոց մերձասահման գոլոյն մեզ սահմանացն նոցին:

Եւ այսպէս ժամ մի խօսելով ընդ մեզ երբեմն ընդ խաներացն եւ մերթ՝ ընդ իս, մինչեւ իջաք ի բլրոյն ի դաշտն: Եւ ապա հրամայեաց մեզ ձիաւորիլ եւ գնալ զկնի նորա: Եւ այնմ զիշերի օթագայեցաւ ի Պաշ Ապարան անուանեալ տեղին: Եւ երեկոյան հացին հրաւիրեաց զիս ի սեղանն:

Եւ առաւօտուն դարձոյց զՊապա խանն, եւ զՄերտար խանն, եւ զԵրեւանայ խանն եւ զՆախչուանայ խանն իւրեանց տեղիս: Որում պաշարեալ էին զԵրեւան. այս չորեքեան խաներս կրկին պաշարեալ ի Դ (4) դիմաց պահեսցեն, որ ոչ կարիցեն մուտ եւ ել առնել:

Իսկ զիս տարաւ ընդ իւր մինչեւ ցճինլի գօլ կոչեցեալ վայրն եւ կրկին հրաւիրեաց զիս ի սեղանն: Եւ զի էր պահք փոխման սուրբ Աստուածածնին, վասն որոյ համարձակեալ ասացի «Խա՛ նըմ, այս Ե (5)- Զ (6) անգամ է, յորմէ հրաւիրես զիս ի սեղան քո: Եւ յամենայն ժամ պահոց օր պատահեցաւ: Եւ ես կարօտ մնացի ի քո

քաղցր կերակրոցդ յորմէ թուի ինձ, որպէս զմանանայն իջեալ ի բարձանց: Վասն որոյ խնդրեմ ի մեծութենէդ, զի հրաման տայցես տուածիյիդ քո, որ իմ առաջելի կերակուրն տանիմ ընդ իս իմ օրջեւանն: Յորմէ ծիծաղեցաւ ուրախութեամբ եւ ասաց. «Խալիֆա՛յ, ապա վաղն կուտե՛ս»: Ասի. «Ոչ»: Որով խանդադատեցաւ եւ ասաց. «Բարի է: Վաղիւն այլ եկ ընդ իս: Եւ կրկին հրաւիրեալ ես յիմ սեղանն, քանզի եւ ես զհաց քո շատ եմ կերեալ: Եւ ապա արձակեցից գնալ Ուշքիլիսէն»:

Եւ վասն այսմ պատճառի գնացի ընդ նմա եւ զմիւս օրն: Եւ այնմ երեկոյին եւս հրաւիրեաց ի սեղանն կրկին եւ ետ լցուցանել իւր առաջի եղեալ փլաւէն աման մի: Եւ հրամայեաց սպասաւորացն պահել զայն եւ հասուցանել ի վրանն իմ, որպէս եւ արարին իսկ:

Եւ յետ ուտելոյն մեր, իւրեանք՝ ի յուտեաց կերակրոցն եւ ես՝ ի մեղրէն եւ այլոց քաղցրեղինաց, աւարտեցաւ հացկերոյթն: Եւ լուացեալ զձեռն նոյնպէս եւ մեք յարուցեալ ես ի վերա ոտից շնորհակալեցայ եւ կանգնեցայ: Որ եւ ասաց. «Խալիֆայ, մուրախաս արարի զքեզ: Գնայ բարով ի քո մանաստուրն եւ աղօթեայ վասն մեր»:

Իսկ եւ պաղատելով խնդրեցի գնալ ընդ նմա մինչեւ ցԱրփաշայն: Բայց երկրորդ Աղէկսանդրն ոչ կամեցաւ բնաւ եւ ոչ ետ թոյլ, այլ զայս ասաց, թէ՛ «Ըխտիար ես, իւեղճ ես, ափսոս ես: Դարձիր, դարձիր ի տեղի քո եւ տուայ արա մեզ»:

[ԺԷ]

Եւ կանուխ վաղ քաջ դարձանք ի բանակէն: Եւ եկինք յԷջմիածին օրն շաբաթ նաւակատեաց սուրբ Աստուածածնին: Եւ ի գիշերի հասանք ի սուրբ գահն: Իսկ առաւօտն յետ պատարագին ի սեղանն վայելեցինք զկերակուրն, զոր շնորհեաց Խանն, ըմպելով զբաժակն յանուն նորա:

Եւ ապա փութացուցաք զգործաւորս ամարաթին, զոր պատուիրեաց Խանն շինել ի գլուխ բլրին ի տեղի վրանին իւրոյ: Եւ յանձնեաց ինձ եւ մելիք Մկրտումին, զի վերակացու լիցուք, եւ մեր գիտութեամբն ծախքն լիցի: Եւ կամ՝ ի կողմանէ իմմէ գիտուն մարդ մի դիցեմ, զի եւ նա վերակացու լիցի ի վերա վարպետաց եւ շինուածոց: Այլ եւ՝ Բ (2) մոհթէմէտ, զոր նոքա սարգեար անուանեն, զի գրեցեն նոքա եւ զխարճն եւ օգնութիւն արասցեն վերակացուացն՝ կրել տալու զքարն եւ զկիրն ի գիւղորէից: Որ եւ ես իմոյ կողմանէ եղի զՂալայճի օղլու Ստեփանոս վարդապետն Արգրումցի, որ էր ընդ մելիք Մկրտումին ի բլուրն այն ի վերա շինուածոցն եւ աշխատեցաւ անդ Ի (20) աւուրն՝ մինչեւ ցաւարտումն նորին:

Եւ կատարեցաւ զշինուածն, զի էր վրանաձեւ գմբեթայարկ, եւ ի ներքոյ՝ խորափիտ. եւ՝ ի տեղի ժողովելոյ ջուրց, զոր ի անձրեւ գայր ի վերնտէ այնմ բլրին հորդեալ ճանապարհաւ ինչ եւ ժողովէր այնմ խորափտի սարընձաձեւ, յորում վերա կայր շինուածն: Եւ յորժամ լնանի աւելորդն, ելեալ ի ճանապարհէ խողովականման եւ հոսի զառ ի վայր ի ձորն:

Եւ զիւղ կայր ի ստորոտ բլրին: Եւ էր աւերակ ի բազում ժամանակաց, որպէս պատմեն՝ Ճ (100) ամէն ի վեր: Չայն գիւղն քննեալ եւ գտեալ զգիւղականս ետ նոցա րախամ մի, զի մաֆ լիցին եւ ԸՃ (800) սօմարի ցան եւ վար արասցեն եւ պահրայ, որ

Է օշուր, մի տայցեն: Որ եւ վաղվաղակի շինեցին զգիւղն, եւ կան բնակեալ այժմ զհիւղականքն:

Եւ ինքն Խանն անց գնաց ի վերա Ղարսայ եւ պաշարեաց գնա ամսօրեայ ժամանակ: Արգիլեաց զգետն որ առոգանէր եւ արբուցանէր զքաղաքն, կտրեաց զջուրն, որ ի վերուստ գայր խողովակով ի բերդն: Եւ յամենայն կողմանց նեղ էարկ զքաղաքն: Եւ պատեալ պաշարեցան յամենայն դիմաց:

Այլ եւ ասպատակս արձակեաց երկուց կողմանց, մինչ գնայր ի Ղարս՝ յաջ եւ յահեակ, զմի կողմն ի վերա Պայագիտու կրկին, եւ զմիւս կողմն ի վերա Կաղզուանայ եւ ինքն ի միջի: Յորում գնացեալ քանդեցին զերկիրն, այրեցին զշինուածսն, զերեցին զմարդիկք եւ զանասունս եւ բազում աւարաւ դարձան ի բուն բանակն՝ ի Ղարս: Եւ անտի կրկին արձակեաց ասպատակս, որ գնացեալ հասին մերձ Թեոդուպօլսոյ: Եւ զերեցին զՆարիմանու նահանգն, զԶաւախեթու, զՉլտրու եւ զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ: Եւ քչեցին գայր եւ զկին, զծեր եւ զտղայ եւ տարան ի Խորասան՝ թուով ԶՌ (6000), որպէս եւ լսեմք:

Եւ ապա զիջան եւ հազարացիքն ի բարձրավզութենէ եւ ի գոռոզութենէ իւրեանց: Եւ ելեալ Արգրումայ արք ոմանք երեւելիք եւ եկին իբրեւ դեսպանս առ Խանն, որ դեռեւս նստեալ կայր ի վերա Ղարսայ: Եւ միաբանեալ ընդ դարսեցւոց մեծամեծացն գնացին առ Խանն աղերս եւ աղաչանս, զի մի աւերեսցէ զերկիրն իսպառ: Եւ խոստացան տալ զԵրեւան, յորմէ բերկրեցաւ Խանն եւ պատուեաց զնոսա խիլայիւ: Եւ եղեալ ընդ նոսա խան մի, որոյ անուն խանի էր....., սակաւ ձիաւորօք: Եւ յղեաց յԵրեւան: Որ եւ եկեալ նախ յանդիման եղեն Պապա խանին որ էր նստեալ ի քալարէն ունելով ընդ իւր զԵրեւանայ խանն եւ զՍարտար խանն:

Եւ առեալ ի նմանէ եւս մարդ եւ հրաման եւ ապա մտան ի յԵրեւան. համոզել զնոսա ի խաղաղութիւն եւ տալ զբերդն Խանին:

Եւ յետ Գ (3)-Դ (4) ատուր ել համբաւ, թէ՛ ահա տալու եղան զբերթն այնու պայմանաւ, որ զպատերազմական պատրաստութիւնս, որ է հրահանելիքն եւ ճապխանայն, կիսիցեն. զկէսն տարցեն ընդ ինքեանս եւ զկէսն թողցեն ի բերդին: Եւ այնպէս ուխտ եւ դաշինք հաստատեցին: Եւ խնդրեցին սայլ, զի բարձցեն զինչս իւրեանց: Որ եւ ետուն զԸ (100) սայլ երկրաւ, որում բարձեալ զկահն եւ զկարասինս իւրեանց ելին ի բերդէն սեպտեմբերի ԻԲ (22) օրն երկուշաբթի, Վարագայ սուրբ խաչի պահոցն: Եւ տարեալ հասուցին մինչեւ եզրն Ախուր[ե]ան գետոյն, որ է Արփայչային՝ գնալ անտի ի Ղարս: Եւ սայլավարքն հանդերձ սայլիւք դարձան իւրաքանչիւր ի տեղիս իւրեանց:

Իսկ Խանն դարձ արարեալ ի Ղարսայ գնաց ի Թիֆլիզ: Բայց մինչ կամեր չուել, հրամանագիր յղեաց Երեւանայ խանին, թէ՛ «Առցես ընդ քեզ զԽալիֆայն եւ զքալանթարն, մելիքն եւ զԵրեւանայ աղայներն եւ զքէտխուտէքն եւ գայցէք առ իս ի յեզրն Ախուր[ե]ան գետոյս»: Բայց որովհետեւ դանդաղեցանք ի գնալն եւ ինքն աճապարեաց ի Տփլիզ, վասն որոյ ոչ կարացաք հասանել նմա ի ճանապարհին, այլ հետեւեցանք նմա եւ գնացինք ի Տփլիս օր մի յետոյ, քան զինքն, զի հոկտեմբերի Ա

(1) չուեցինք յէջմիածնայ եւ Երեւանու քաղաքն եւ ԻԷ (27) հասանք ի Թիֆլիզ քաղաքն:

[ԺԸ]

Եւ յորժամ յանդիման եղաք Խանին, յոյժ ուրախացաւ եւ բազում բանս մխիթարականս խօսեցաւ ընդ մեզ եւ՝ պատուէրս շահեկանս եւ յանձնարարականս: Եւ քաղաքական օրինադրութիւն եւ սահմանադրութիւն ասաց ի լսելիս ամենեցուն: Մանաւանդ երկար բանիւք եւ սաստիկ պատուիրանադրութեամբ յանձնարարեալ զսուրբ գահն եւ զիս յԵրեւանայ խանին եւ մեծամեծացն երկրին թէ «Չլինի նեղացնէք կամ տրտմացնէք զԽալիֆայն, զի աղօթող է եւ տրւաճի վասն մեր: Այլ եւ աղար չտայք այն թէքէին՝ Ուչքիլիսային: Եւ մի պահանջէք ժամու տարածամու զենուլ վասն ձեր ոչխար գառ կամ հաւ այլ եւ զոր ինչ պատրաստի ունի եւ գտանիցի այնու բաւականասջիք»:

Այլ եւ ազգիս մերոյ գոհ եւ շնորհակալութիւն երեր, թէ՛ «Ինձ լաւ ծառայութիւն արարին մտերմաբար եւ միամիտ սպասաւորեցին յամենայն զօրութենէ եւ յամենայն յանձնէ յամենայն դիմօք: Եւ չի՛ լինի թէ նեղացնէք զազգս հայոց կամ վնասէք, զի զայնպիսին պատուհասակո՞ծ առնեմ: Եւ բաց ճիզիւնէն զամենայն հարկս դիւանին հաւասար տայցեն, զինչ եւ պատահիցի. զկէսն՝ հայք եւ զկէսն՝ ղզլպաշք»:

Եւ այլ բազում բանս օգտակարս պիտանացուս խօսեցաւ ընդ մեզ: Եւ յետ ամենեցուն ասաց, թէ «Գնացէք եւ զոր ինչ խնդիրք ունիք, գրեցէք արգաներն եւ բերէք որ հրամայեմ»: Որ եւ գնացեալ նստանք ի խորհուրդ եւ ի մտածմունս: Եւ զոր ինչ պատշաճ եւ հարկաւոր համարեցաք, զայն բախամներն խնդրեցաք: Որ եւ շնորհեաց աւելի քան զԺԵ (15) բախամ: Եւ այսպէս ուրախութեամբ դարձոյց անդրէն ի կրունկն ի յԱրարատ եւ յԵրեւան:

[ԺԹ]

Իսկ յետ չուելոյն նոցա եւ մնացի ի Թիֆլիզ Գ (3) օր եւս, վասն զի մեծագոր Խանն հրաման էր արարեալ, թէ՛ ի քաղաքէն ԳՃ (300) տուն հանեալ տարցեն ի Խորասան, որպէս եւ՝ Արարատու ետուր: Հրաման ետուր խանին Երեւանայ այլեւ քալանթարի մելիքի, որ գնացեալ ԳՃ (300) տուն գրեցին եւ յակամա կամօք բռնութեամբ հանեալ ի բնակութենէ իւրեանց քջեցին ի Խորասան, այսպէս եւ ի Տփիսիսու առնել: Որ եւ գրեցին ի քաղաքէն Յ (300) տուն եւ սկսան ժողովել եւ լցուցանել յեկեղեցի մի: Եւ բազումք, որ լսէին զգնալն եւ զգրուիլն իւրեանց, զային եկեղեցին, յորում ակաստանեալ էի, եւ կական բարձեալ ողբային, եւ աղաղակն յերկինս ելանէր: Լային գոռային, գոչէին, երկիր անկեալ թաւալէին եւ աղերսէին, զի խնդրիցեմ ի խանէն ազատել զնոսա եւ մի վարել ի յօտար երկիր:

Իսկ եւ՝ տառապեալս, տեսանելով զաղէտս ժողովրդեան՝ արանց եւ կանանց, փղձկեալ այրեցեալ սրտիկս եւ արեան արտասուս իջուցանէի, եւ դեզերեալ աստանդական ի դրունս մեծամեծաց պաղատէի, աղաչէի, հայցէի եւ աղերսէի ազատիլ նոցա ի յայն վշտաց:

Որ եւ ողորմութեամբն Աստուծոյ եւ ի պատճառէ իմեքէ քաղցրացաւ սիրտ Խանին, եւ եթող զնոսա: Բայց ԳՌ (3000) թուման եւ ԳՌ (3000) սովար ցորեան, որ եւ ժողովեալ հասուցին եւ զերծան:

Նոյնպէս եւ վասն Արարատու երկրին 3 (300) տանն շատ եւ անխոնջ տանջեցայ եւ տառապեցայ, եւ ոչ եղէ հնար: Այլ տան գլուխ Բ (2) գօմէջ հրամայեաց տալ ի յարքունուստ, զի բարձեալ տարցեն, զինչ եւ կամեսցեն: Այլեւ իւրաքանչիւրոցն մնացողքն երկրիս Գ (3) եզն, Գ (3) կով, Գ (3) լիտր պղինձեղեն, Գ (3) կարպետ, Գ (3) լիեպ, ալիւր եւ ցորեան եւ Ա (1) Ա (1) թուման փող ետուն գնացողաց տան գլուխ եւ ճանապարհորդեցին:

[Ի]

Յետ այսորիկ մտածեցի վասն երկրին ազատութեան եւ տառապանաց, զի փողն կարի յոյժ նուազեցաւ եւ քարշեցաւ եւ գրէ թէ իսպառ հասաւ: Վասն որոյ խնդրեցի ի մեծագոր Խանէն տալ հրաման վասն զառապիսանային բանալու ի յԵրեւան եւ արգ արարի վասն մելիք Յակոբջանին: Որ եւ վաղվաղակի շնորհեաց, վասն զի յոյժ ուրախացաւ ընդ այս եւ առաջի մեծամեծաց գովեաց ասելով. «Ինտի պու Խալիֆանի գօրուփսգ: Պիր եախշի փիր քիշի տուր: Մուպարաք քիշի տուր: Չօխ եախշի տուր: Բախ քի համ ռահաթի դայիրուր համ դիւան սալինայ վայտայ օլուր: Տէ թէզ ինտի րախամի եախշի եագնլար ու վերսինլեր»: Որ եւ առժամայն կատարեցին եւ ետուն:

Այլ եւ վասն մելիք քալանթարի խնդրեցի՝ որ առանց իմ գիտութեան, գոր ինչ թելճի որ հանդիպե[ս]ցի արքունուստ եւ կամիցեն ձգել ի վերա երկրին, առանց իմ գիտութեան մի արասցեն:

Նաեւ Է (7) գիւղորայսն, որք են այսոքիկ՝ Էջմիածնայ գեղն, Մաստարայ, Ֆռանկանոց, Յուշական, Քիրաշլուն, Տիպաքլուն, Չէլէպի Ղշլաղն, գոր երբեմն ունէր մուք սուրբ աթոռս, այժմ նոր նորոգեցաւ: Եւ կրկին րախամ առի եւ մեծագոր Խանէն եւ հաստատեցի մուքն ի վերա սուրբ աթոռոյս ըստ առաջի սահմանին:

Այլ եւս խնդրեցի զրախամ մի, զի մի ոք եկեալ նեղացուցէ զնոսա գիւղական գոլով, նաեւ՝ առանց իմ գիտութեան գիւղորայից քէտխուտայք թելճիի մի ձգեսցեն ի վերա աղքատաց, զի չար սովորութիւն ունէին, որ զբեռս իւրեանց ի վերա աղքատաց շրջէին: Որ եւ զնա եւս շնորհեաց: Եւ այլ րախամք, գոր ինչ եւ խնդրեցի, շնորհեաց զամենայն անյապաղ: Որ եւ առեալ եմ մինչեւ ցայսօր աւելի քան զԼԵ (35) րախամ:

Եւ ապա չուեցի Թիֆլիզու ի վերա Սանահինու եւ Հաղպատու հոչակաւոր վանորէից, եւ ապա՝ Աղարծնու վանքն: Եւ եկեալ հասի ի սուրբ Էջմիածին:

Եւ ըստ պատուիրելոյ մեծի Խանին եւ եւ Երեւանայ խանն գրեցաք ի Ղարս, յԱրգրում եւ յայլ տեղիս. ես՝ իմ ազգին, եւ նա եւ ես՝ յատուկ յատուկ Ղարսայ փաշային, եթէ՝ «Հրաման եղէ մեզ ի մեծ Խանէն ծանուցանել երկրին եւ արգ առնել մեծի տէրութեան ձերում. որովհետեւ իսաղաղութիւն եւ հաշտութիւն եղէ, յայսմ հետէ անկասկած գայցեն սեւտակարքն, եւ ամենայն ոք անկասկած եւ աներկիւղ վաճառեսցեն եւ գնեսցեն: Չոր ինչ կամեսցեն, եւ արասցեն»: Եւ այնպէս կոնդակաւ ծանուցի ի Ղարս, յԱրգրում, Թօխաթ, ի Պայազիտ, ի Վան եւ ի Բաղէշ:

[ԻԱ]

Զկնի այսորիկ մինչ էի ի Երեւան վասն շնորհաւորելոյ զհաստատութիւն եւ զիշխանութիւն Երեւանայ խանին ահա կրկին հրաման եկն ի մեծ Խանէն Երեւանայ խանին, զի ի նորանալն լուսնի երեքին չուիցէ Երեւանու եւ ի գաւառէն Արարատու եւ գնասցէ ի դաշտն Մուղանու որ է ԺԵ (15) աւուր ճանապարհ Երեւանայ: Եւ պատուիրեալ էր ի մեջ բախամին, թէ՛ «Առցես ընդ քեզ զԽալիֆայն եւ զաղայներն, զքալանթարն եւ զմէլիքներն, եւ քանի մի քէտխուտայք, եւ զայցէք անյապաղ ի Մուղանու չօլն, զի պատշաճաւոր խօսք եւ խորհուրդ ունիմ ընդ ամենեսեանդ»:

Եւ ահա պատրաստեալ եմ գնալ յետ չորից եւ հնգից աւուր, զօր Տէր Յիսուս եւ Աստուածն ամենակարող ի բարին յաջողեցէ եւ խաղաղութեամբ հասուցէ զմեզ ի սուրբ Աթոռս եւ ի մետաղս մեր: Աստուծոյ եւ աղօթից ձերոց ապաստան, զի ի բարին եզերեցի կամքն եւ յառաջարկութիւն մեծի Խանին: Եւ ընդ այս յոյժ զարմացեալ եմք:

Եւ ոչ գիտեմք, թէ վասն է՞ր է կոչումս այս: Միայն Աստուծոյ է գիտելի: Բայց կարծիք ումանց, թէ զշահն նստուցանելոց է ի գահոյս իւր: Եւ իսկ՝ ումանք, թէ ինքն նստելոց է: Բայց հաւաստին եւ վասն էրն ոչ է յայտնի: Իսկ մէք աղաչեցուք զԱստուած, զի բարին առաջնորդեցէ եւ ի հաճոյս իւր յաջողեցէ: Ամէն:

[ԻԲ]

Ապա յորժամ եհաս ժամանակն գնալոյն մեր ի Մուղան, կրկին գնացի Երեւան վասն հարկաւոր իրաց ինչ: Հանդիպեցայ խանին որոյ անունն էր Մէհմէտղուլի եւ էր բնիկ ի գաւառէ Գողթան՝ Մուսայբէկէնց ազգէ: Որ էր պապն ուրացեալ ի ժամանակս մեծի Շահ Ապասին: Եւ այս Մէհմէտղուլի, խանս, թոռ գոլով նորա, եհաս խանութեան: Զի որպէս լսեմ, Բ (2) եւ Գ (3) խան է մնացե[ա]լ ի շահ Թահմազի եղեալ խաներիցն: Եւ զայլս վերջացուցեալ է մեծագօր Խանն: Որոց մնացելոցեն՝ մինն է այս, զոր ասեմս: Վասն որոյ մեծարեաց զիս ի պատիւ ճաշ առնել ի միասին:

Եւ յորժամ ճաշեցինք եւ գոհացանք, մինչ նա դալիօն քաշէր եւ ես չայ խմելի, ասի. «Խանում շինտի նէչաղ գէթմաղ օլուր Մուղան չօլինայ քի թատարիք գօրալում»: Ասաց. «Խալիֆայ պիրդաչ գունդան սօրայ գէթմակ օլուր»: Վասն որոյ ասի, թէ «Որովհետեւ այդպէս է, ես քանի մի օր յառաջ գնամ կամաց կամաց զի տկար եմ եւ չեմ դիմանար: Աստապատ, Ագուլիս մի քանի օր նստիմ մինչեւ որ գաս եւ ի միասին գնամք ի Մուղան: Եւ ինքն եւս հաճեցաւ ընդ այս եւ ասաց. «Բարի է այդպէս արա: Բայց զթօշակդ, թէ մարդկանց, թէ անասնոցդ շատ առ, զի այնտեղն ոչ գտանի»:

Վասն որոյ փութով դարձայ ի վանքն եւ սկսայ հոգալ զճանապարհի պատրաստութիւնն: Եւ տարայ ընդ իս Ժ (10) ուղտ, Ժ (10) ջորի եւ ԺԶ (16) ձի: Իսկ ի միաբանից՝ ճանապարհի աթոռակալ Ղալայջիգատայ Ստեփաննոս վարդապետն, գաւազանակիր Բարսեղ վերդապետն, իմլայիսօռ Հնձուց վանից, Եղիայ վարդապետն՝ քրտաստանցին, մէհմանտար Տաթևու Մկրտիչ վարդապետն, Էտաքչի սպահանցի Խաչատուր վարդապետն, ժամասաց ամպարտար Սարգիս վարդապետն եւ զլուսաւորիչ անապատին հայր Սարգիս վարդապետն Կեսարացի, Բ (2) սարկաւազ՝ զՂուկասն եւ զԹաչատուրն եւ զգրագիր Յովհաննէսն Գամրիսեցի, այլ եւ Գ (3)

շաթիր՝ զՄկրտումն, զՊօղոսն եւ զՄաղաքիէն, Գ (3) սարվան յղտաց, Գ (3) մէհտար ձիոց եւ Գ (3) ջորեպան, այլեւ ի Ագուլեաց գաւազերէց Տէր Թուման, քելխայ աշխիպաշխի: Ընդամենն՝ ԻԵ (25) հոգի:

Եւ դէկտեմբերի ամսոյն Գ (3) չուեցի ի սուրբ Էջմիածնայ: Նորագաւթով, Խոր Վիրապով, Շարուրով անցեալ գնացի ի Ե (5) օրն Աստապատ ի դէկտեմբերի Ը (8) սուրբ Յակոբայ պահոց երկուշաբթին: Եւ մնացի Բ (2) գիշեր: Եւ ապա ելայ ի վանքն, մնալով անդ եւս Բ (2) գիշեր: Եւ անտի Երինջակու սուրբ Կարապետու վանքն գիշեր մի, եւ ի Յղնայ՝ գիշեր մի: Եւ դէկտեմբերի ԺԱ (11) հասայ Ագուլիս: Եւ մնացի անդ Գ (3) օր: Եկն եւ Մէհմէտղուլի խանն: Եւ դէկտեմբերի ԺԴ (14) չուեցաք ի յԱգուլեաց: Ի նոյն օրն անցանելով զԵրասիս եւ Ղարատաղով ճանապարհորդեցանք մինչ ի Մուղան: Եւ հասանք ծննդեան պահոց շաբաթ օրն ի Մուղան, մերձ ի տեղին այն, ուր խառնի Երասիսն ընդ Կուռ գետոյն: Դէկտեմբերի Գ (3) ելանք ի սուրբ Էջմիածնայ եւ յունվարի Գ (3) հասանք ի Մուղան՝ բանակետողն Պարսից:

[ԻԳ]

Եւ իբրեւ իջեւանեցոյց մեզ փոխանորդն մեծի Խանին, որ կառավարէր եւ պահէր զտեղեալ բանակն, որ էր նասաղչիպաշի Ապտուլ-Հասան բէկն, սակաւ մի բացեայ ի բանակէն ի խուղս եղեգնեայս, զոր պատրաստեալ էին վասն եկող խաներաց աւելի քան զԵՃ (500) խուղ եզերն Երասիսայ ի վերի կողմն բանակին: Յորմէ ճրագալուցի օրն վերելեակաւ գնացեալ զքօսանեցաք եւ տեսաք զտեղին, ուր խառնէր Երասիսն ընդ Կուռ գետոյն: Եւ Բ (2) կամուրջս շինեալ մինն ի վերա Երասիսայ եւ մինչ դեռ չէր խառնեալ ի Կուռն գետ, եւ միւսն՝ յետ խառնելոյն ի վերա Կուռ գետոյն: Փոքրիկ նաւճակներ շինեալ միաբերթ, որ էր ի փայտէ փորեալ չոնխներ եւ միմեանց ընթեր շարեալ ի վերա ջրոյն՝ գետոյն լայնութեամբն: Եւ շղթայիւք եւ հաստ առասանաւ որ էր կապեալ զչոնխներն ի յերկուց կողմանց զլիցոն նաւճակաց, զվերի կողմն՝ շղթայիւք եւ զվարի կողմն՝ առասանաւ, որ էր որպէս դալիօնի երկաթի հաստ փալամար: Եւ ի վերա նաւճակաց տախտակ հաստագոյն եւ փայտ շարեալ եւ պնդացուցեալ մամարաւ, որ երթային եւ գային անցորդք:

Բայց Կուռ գետոյն կամուրջն Բ (2) գլուխն դղեակս եւ բրզունս ի նմա բերթաձէլ շինեալ եւ ի միջի նոցա պատրաստութիւն տեսեալ հրահանելեաց, զի մի յանկարծակի թշնամիք ասպատակեալ վնաս ինչ գործիցեն կամրջին: Այլեւ պահապանք կացեալ ի վերա, որ պահէին ի տուէ եւ ի գիշերի, եւ առանց հրամանի ոչ որ իշխէր անցանել: Զի այն էր ճանապարհն Շամախու, Լակզիստանու, Տարպանտու, որ էր Տէմիր Ղափուն, Աժտարիսանու, Մօսկօֆու եւ Հոնաց, որք են թաթարք:

Իսկ կամուրջն որ էր ի վերա Երասիսայ միւս կողմն, էր՝ Ղարապաղու, Տուգաղու, Կէնճեպասանու, Կէնճու, Գանձասարու, Ղափանու, եւ Միսիանու: Վասն որոյ ոչ ինչ փոյթ առնէին պահել գայն, բայց միայն վասն փաղջօղ գերեաց զարս ոմանս եղեալ էին, զի մի թողացուցեն զգերիսն փախչել:

Եւ յետ տեսանելոյն մեր գայս ամենայն դարձաք ի մետաղս մեր որ էր հեռագոյն ի տեղուղէ յայնմանէ, ուր խառնի Երասիսն ընդ Կուռ գետոյն, իբրեւ ժամի միոյ

ճանապարհ, զի կամուրջն Երասխայ ի մեջ բանակին էր, եւ կամուրջն Կուռ գետոյն՝ ի ներքոյն քան զբանակն, իսկ մեք՝ ի վերի կողմն բանակին:

Եւ միւս օրն որ էր երեքշաբթի, հարինք զմեծ վրանն, զոր բերեալ էաք ի սուրբ Էջմիածնայ՝ սագաշէն, եկեղեցւոյ նման, զարդարեալ ազգի ազգի երանգով եւ բազմազան խաչերօք եւ ծաղկօք: Եւ անդանօր հրամայեցի եւ զմերային լուսաւորչածին ազգն կանչել, որք կային ի բանակին ի ճրագալուցին օրն, զի վաղին եկեացէն ի վրանն: Որ եւ եկին ամենեքեան ի ծննդեան օրն ի վրանն իմ, որում կատարեցաք զոսն ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ առանց ժամատեղի եւ պատարագի, զրկեալ յամենայն հոգեւոր ուրախութենէ, դառն ողբով եւ արտասուօք, որպէս երբեմն հինն Իսրայէլ կախելով զկտակարանս մեր ի մեջ ուռեաց: Ապա տրտմեալ դիմօք, լքեալ սրտիք, յակամայ կամօք զգեստաւորեցուցեալ զիս մերայնոցն եւ ըստ բաւականին փոքր ի շատէ, զոր ինչ եկեղեցական անօթ եւ թափօրական պատրաստութիւն ունէինք ընդ մեզ, կարգաւորօք, սարկաւագօք, դպրօք ազուցեալ պատմուճանօք եւ լուցեալ մոմեղինօք, խաչիւ, աւետարանաւ եւ սուրբ մեռօնաւ գնացինք ի վրանէն առընթեր եւ եզրն Երասխայ:

Եւ անդ կատարեալ զկարգ ջրօրհնեացն հեղաք զսուրբ մեռօնն ի ջուրն Երասխայ, յորո էին Երեւանայ քալանթար Մէլիքջանն, մէլիք Յակոբջանն եւ մէլիք Մկրտումն, Տուգախու մէլիք Էկէնն, որ եւ ի նա հանել ետու զխաչն ի ջրէն: Այլեւ՝ Երեւանայ եւ Արարատեան քեօխուտայքն, եւ բանակի եղեալ հայքն, եւ Երեւանայ աղաներն եւ այաններն շէխիւլամն, դազին եւ խանին իւզպաշիքն՝ աւելի քան զԳՃ (300) մարդ՝ հայ եւ թուրք: Եւ այս էր զարմանք, զի պարսիկքն առնէին մեռնախառն ջրոյն եւ օճանէին զերեսս իւրեանց: Եւ ապա արձակեալ ամենայն ոք գնացին՝ իւրաքանչիւր տեղիս իւր: Եւ մեք դարձաք ի վրանն, ունելով ընդ մեզ զմասնս երեւելի արանց՝ հրաւիրեալ ի ճաշ:

[ԻԴ]

Իսկ ի ծննդեան օրն եւ զգիշերն ձիւն եկեալ տառապեցոյց զմեզ: Վասն որոյ երկրորդ օրն ջրօրհնեաց աճապարեցի անցանել զկամուրջն եւ գնալ ի Տուգախ: Որ եւ գնացեալ իմ Երեւանայ խանի մօտն, որ էր եւ նա ի խուղս եղեգնեայս ի նոյն տեղի, յորում իջեւանեալ էաք: Եւ ասացի թէ՝ «Որովհետեւ չէ աստ մեծագօր Խանն եւ չէ յայտնի, յորում աւուր գալոց է, եւ կամիմ գնալ ի Տուգախ, զի ահա կոտորիմք ի ցրտոյ մենք եւ անասունքն մեր: Եւ յորժամ իմանամք զգալուստ Խանին, փութով դառնամ եւ գամ»: Եւ զի թէպէտ ոչ կամէր խանն թողուլ զիս գնալ, զի մի եւ ինքն միայնակ մնասցէ, բայց եւ ոչ լուայ նմա:

Եւ փութով գնացեալ իմ առ վերակացու բանակին Ապտուլ-Հասան պէկն ի տես եւ ծանուցի նմա զկամքն իմ: Որ եւ իսկոյն ելեալ երիվար եւ եկեալ ի բնակութիւնս մեր պատճառելով զտեսութիւն եղեգնեայ խուղերացն, եթէ իցեն բաւական կամ թէ այլ եւս պարտի շինել: Վասն որոյ հանդիպեցաւ եւ Խանին Երեւանայ եւ ի մեջ զրուցատրութեան ասաց, թէ՝ «Մեծին գալն անյայտ է եւ աստ՝ պակասութիւն ամենայն իրաց եւ դու հիւանդ: Որպէս կամիս առնել»: Եւ խանն պատասխանեալ ասաց. «Զինչ արարից զի երկնչիմ ուրեք գնալ զի մի եկեալ զիս ոչ գտցէ աստ եւ պատճառեալ հանցէ զիս ի կենաց: Զի եւ Խալիֆայն խնդրեաց գնալ, եւ ես ոչ թողի

գնա եւս»: Վասն որոյ պատասխանեալ անդրէն Ապտուլ-Հասան պէկին ասաց. «Մի արգելոյր զԽալիֆայն զի եւ նա տկարութիւն ունի եւ ծեր մարդ է: Եւ թող գնայ ի Տուզախ եւ ի գալ մեծաւորին մերոյ դառնայ եւ գայ: Քանզի սիրէ գնա եւ վասն այնորիկ ոչինչ առնէ նմա չար»:

Եւ ապա հեծեալ ի ձի եւ, մինչ գայր ի տեղի իւր ի ճանապարհին, դէմ ելաւ ինձ եւ ասաց. «Խալիֆայ, ահա քո խաթերդ համար գնացի ձեր խանի մօտն եւ խօսեցայ ընդ նմա վասն քո: Եւ գնայ այսուհետեւ, ուր եւ կամիս, զի նա ոչ կարէ արգելել զքեզ: Բայց, յորժամ լսես զգալուստ մեծին, փութով ժամանեա: Եւ ես վասն քո այլ մեծամեծ յարկս շինեցից եղեգամբ, զի, յորժամ գաս, բնակիս ի նա լայն եւ արձակ»: Վասն որոյ եւ ես օրհնելով զմեծագոր Խանն եւ շնորհակալ լինելով ի նմանէ ասացի, թէ՛ «Բարի է: Գնամ եւ, յորժամ լսեմ զգալն, վաղվաղակի դառնամ եւ գամ: Բայց վասն խուղից մի ինչ աշխատիր զի բաւականք են եւ այնք, գոր շինեալ են, եւ չէ փոյթ կրկին շինելոյ»:

Եւ այսպէս ելեալ ձիւնախառն անձրեւով եւ անհնարին տղմով անցաք ընդ Երասխն ի ճիսիրէն: Եւ աճապարեցի գնալ ի Տուզախ: Բայց քալանթարն եւ մէլիքն մնացին յետ անցանելոյ կամուրջին, զի եւ այս կոյս կային բնակեալ օրտուճիքն: Վասն որոյ մնացին միրզոց մօտն, որք էին զապիթք Երեւանայ միրիյի կողմանէ, քանզի բան եւ հիսապ ունէին ընդ նոսա:

Եւ առաւօտն, մինչ կամէին գալ զկնի իմ, լուան, թէ մեծագոր Խանն գալոց է յետ Ե (5)-Չ (6) աւուր: Որով յղեցին եւ ինձ զփայեկ մի եւ ծանուցին զգալն խանին: Եւ յորժամ լուայ, յետ դարձայ ի ճանապարհէ, զի Բ (2) աւուր ճանապարհ գնացեալ էի:

Եւ եկեալ հասի կրկին ի բանակն ծննդեան Ը (8) օրէից երկուշաբթի օրն: Եւ գտի զերկրորդ Աղեքսանդրն եկեալ օր մի յառաջ կիրակի գիշերն լոյս երկուշաբթի: Յորում եւ ես հասի ի նոյն երկուշաբթի երեկոյն: Եւ հասի ի յեզրն Երասխայ մերձ ճիսիրին, ուր էին քալանթարն եւ մէլիքն ի վրանին նոցա, որք էին ընդ միրզոցն: Եւ մնացի անդ զգիշերն:

[ԻԵ]

Եւ երեքշաբթի վաղ քաջ ընդ առաւօտն տեսեալ զպատրաստութիւնն մեր աճապարեցաք անցանել զկամուրջն եւ գնալ ի կողմն բանակին, ուր էր ամարաթն եւ կայանն մեծի Խանին: Եւ գնացեալ իմ եւ միրզէքն, եւ քալանթարն, եւ մէլիքներն ընդ իս, այլ եւ՝ Երեւանայ աղաներն եւ շէխիսլամն եւ այլ այաններն եւ մեր քէտխուտայքն ամենեքեան ժողովեցան ի միասին: Եւ այսպէս մուծին զմեզ առաջի մեծագոր Խանին: Բայց զիս յառաջ մեծարեցին, քան զամենեսեան: Եւ զընծայսն իմ յառաջ քաջեցին՝ զձիանքն, եւ զզորիքն եւ զայլ պատրաստութիւնս, գոր ունէի ընդ իս:

Յորմէ տեսեալ խանդադատեցաւ եւ բերկրեցաւ ի վերա իմ եւ ասաց. «Խօշ գալմիշ սան Խալիֆայ: Նէճայ սան: Եախշի սան: Չաղսան: Եօլտայ ազար չարմիշսան դշտան դարտան, չուն պիր էխտիար քիշի սէն: Չօխտան գալմիշսան»: Եւ ես պատասխանեալ ասացի. «Խանըմ Ալահ չօխ օմր վերսն: Ինտի քի սէնին մուպարաք

լէյլինհար շէֆքէթի իւզուն գօրտում, դըշ մանայ պիար օլտի: Շուքուր փերվերտիկարայ, քի բէն ճէնապնի սադ, սէլիմ վէ ուրուշան գէօրտում»:

Որով ուրախացեալ ծիծաղեցաւ եւ ասաց. «Ապդուլ-Հասան բէկ, խալիֆիայ եախշի օղախ վէր եախշի գօզաթ, պիր եախշի դօճայ քիշի տուր»:

Եւ ապա զայլոց ընծայս մատուցին առաջէն՝ զքալանթարին, զմէլիքներացն եւ զաղաներացն: Որ եւ նոցա շնորհակալեցաւ եւ ասաց. «Էվընգ աւատան: Խօշ գալմիշուգ»: Եւ պատուիրեաց ամենեցունս, թէ՛ «վարուն րահաթ օլուն»: Եւ մեր խոնարհմամբ գլխոյ սէլամլամիշ արարաք եւ գնացաք ի տեղիս մեր յառաջին բնակութիւնն:

Եւ ի նոյն օրն երեկոյեան ժամու ոմն ի սպասաւորաց իւրոց առաքեաց եւ կոչեաց զիս: Որ եւ ես առեալ զքալանթարն փութացայ առ մեծագօր Խանն ի յամարաթն իւր: Եւ ծանուցին նմա վասն իմ: Որ եւ իսկոյն կոչեաց զիս առաջէն: Եւ իմ առեալ զքալանթարն կացի առաջի իւր: Որ եւ սկսաւ հարցանել վասն Երեւանայ կողմանցն, եւ վասն Ղարսայ, եւ կարաւանից երթեւեկողաց, եւ վասն Պայազ[ի]տու եւ Քրտստանայ կողմանց: Որ եւ ըստ պատշաճին տուի զպատասխանին եւ շնորհակալութեամբ գոհ եղայ, թէ՛ «Քո իգպալէն եւ տէվլէթէն, գոհութի՛ւն Աստուծոյ, խաղաղ ենք յամենայն կողմանէ: Այլ եւ ըստ հրամանի քում, զոր պատուիրեցեր ի Թիֆլիզ ինձ եւ խանին գրել ամենայն ուրեք վասն երթեւեկողացն, գրեցաք: Այլ եւ Ղարսայ փաշային եւ Արզրումայ սերասքերին՝ Ահմէտ փաշային գրեցի արգաներ վասն վաճառականաց: Եւ ահա սկսան գալ կարաւանք եւ վաճառականք, թէ՛ մեր ազգէ, եւ թէ՛ օսմանցօց: Ահա եւ մեծամեծ կարաւանք կան, որ մօտ օրերս գալոց են»:

Դարձեալ եհարց, թէ՛ «Երեւանայ խանն զիա՞րդ է: Լա՞ւ կառավարութիւնն ունէր: Ձեզ հետ լա՞ւ ճանապարհ գնաց: Բանին լա՞ւ մուղայեթ էր: Խօշնո՞ւղ էք»: Եւ ես շնորհակալութիւն բերի, թէ՛ «Ամենայն կողմանէ լաւ էր եւ բանին եւ դուլուղին ժիր»: Այլ եւ վասն Պայազիտու, եւ Քրտստանու եւ Ղարսայ կողմանց եհարց եւ եզիտ ըստ սրտին:

Վերջապէս եհարց վասն վարի եւ ցանի: Եւ իսկոյն բողոք բարձի, թէ՛ «Ոչ գոյ ըստ բաւականի: Նաեւ ոչ գտանին եզինք որ վարեն, բայց քո տօլվաթէն լինի, թէ գարնան Պայազ[ի]տու եւ Ղարսայ եզինք ճարեն փողով կամ պարտքով եւ վարուցան անեն, որովհետեւ ջրելով է գարնանավարն, այլ լաւ պիտի լինի»:

Որ եւ վասն այսմ բանի Քալպ-Ալի-պէկ անուն զոմն առաքեաց ի ծածուկ: Որ գնացեալ շրջագայեաց զնահանգն Արարատու քննելով զվարն եւ զցանն, եւ զեզինս եւ զսերմանս՝ գիւղէ ի գիւղ: Որ եւ Էջմիածինն եւս հանդիպեալ էր եւ վասն միւլք գիւղորէիցն պատուէր էր տուեալ եւ յորդորեալ, թէ զսերմն վանիցս տանք նոցա, որ սերմանեն, ապա թէ ոչ ի պէկլիկէն տան եւ զմուլքն պէկլիկ կանեն: Եւ ոչ գիտեմ, եթէ՛ վասն փորձելոյ, զիս այսպէս արար՝ զի իմացի զիրան եւ զսուտն իմ խօսացս, եթէ՛ վասն հոգալոյ զերկիրն, զոայէն: Եւ ապա յուսադրեաց ասելով. «Հոգ մի անէք: Գիտեմ, որ այդպէս է, բայց Աստուած ողորմած է: Զարուր չէք մնալոց»: Եւ ապա ասաց. «Մուրախաս ես: Գնա՛ քո տեղն, տուայ արա»: Եւ ելեալ գնացինք ի մետաղս մեր զիշերով:

[ԻԶ]

Իսկ ի միւս օրն ի հասարակել աւուրն, մինչ գնայի ի վրանն նախշուանցոց, որում կային ակաստանեալ ի մէջ բանակին՝ եզր Երասխ գետոյն, պատահեցան ինձ ի ճանապարհին մեծագոր Խանի սպասաւորքն, զոր ֆառաշ անուանեն, արք Բ (2) ունելով իւրաքանչիւր ոք ի գիրկն իւր զգառ մի: Եւ ի տեսանելն զիս զկայ առեալ կանգնեցան: Եւ յորժամ մերձ եղէ, եկին եւ կացին առաջի իմ ի յանցս ճանապարհի: Եւ ես բարեւ տուեալ ասացի. «Ի՞նչ խնդրէք»: Եւ նոքա պատասխանեալ ասացին «Ողջութիւնդ: Սքէնտէր Նշան խանն քեզ զայս թուրֆանտայ գառս ուղարկեաց, զի ճաշակեալ օրհնեսցես զնա»: Ապա ասացի. «Միւս գառն ո՞ւմ պիտի տանիք»: Եւ նոքա պատասխանեցին, թէ՛ «Եւ զայն Երեւանայ խանին ուղարկեաց»: Յորմէ շնորհակալեցայ եւ ի վերա ձիոյն համբարձմամբ ձեռացս օրհնաբանեցի զԽանն: Եւ բերողացն ոսկի մի պարգեւելով անցեալ գնացի:

Եւ յետ երկուց աւուրց, յունվարի ԺԶ (16), պատուիրեաց մեծագոր Խանն թային տալ մեզ եւ ամենայն եկելոցն. ցորեան Գ (3) մարդոյ Ա (1) լիտր Թարվիզի, որ է Բ (2) օխայ եւ Ճ (100) տրամ:

Եւ յունվարի ԺԸ (18) օրն կիրակի մեծարեաց զիս ի պատիւ աստապատցի պարոն Աստուածատուրն ի վրանն իւր: Եւ մինչ կայի ի վրանին ի սեղանն, լուայ, թէ Ղազպինու բերեալ զմեծ վրանն ահա կանգնեցուցանեն: Եւ մնացի անդ մինչեւ ցԲ (2) պահ գիշերոյն: Եւ ապա դարձաք ի բնակութիւնս մեր:

Բարե՛ սաստիկ իշխանութիւն եւ հրաման երկրորդ Աղեկսանդրիս: Զի անհուն բանակն եւ այնքան խառնիճադանճ բազմութիւնն, իբրեւ զայր մի, անշշունչ եւ համեստ կային սասանեալ: Եւ ոչ ոք իշխէր ասել այր ցընկեր իւր եւ կամ ցռամիկս, եւս առաւել՝ ցմեզ եւ ցմեր ազգն, եթէ՛ «Այսպէս արայ, կամ՝ այնպէս»: Այլ իւրաքանչիւր ի վերա պահպանութեան իւրոյ եւ գործոյն հաստատ եւ ահիւ պակուցեալ:

Իսկ յունվարի Ի (20) եկն Կէնճէու Կէնճ-Ալի փաշայն, որ էր էլչի: Եւ ակաստանեցուցին զնա յայն կողմն Երասխայ եզր գետոյն՝ մերձ տեղոյն այնորիկ, ուր խառնի Երասխ ընդ Կուռ գետոյն:

Եւ յունվարի ԻԲ (22) եկն եւ Իպրահիմ խանն ի Մաշաթու, որ էր եղբայր համահայր եւ համամայր մեծագոր Խանին, բարձրահասակ եւ յաղթանդամ՝ նման եղբօրն:

Եւ ի նոյն օրն առաքեաց ինձ խիլայս Խանն՝ Աղեկսանդր անուն՝ զերկուս պատուական եմփորոնս, որ մինն արժէ Ծ (50) թուման: Եւ է ասղարուր ծայրէ ի ծայր՝ բովանդակն սրմայով, որ եւ ի սուրբ Էջմիածին ի մէջ այնքան եմփորոնացն ոչ գտաւ նման նմա: Որ եւ ունէր ԲԺ (12) - անպատկեր ի հետն բանած, եւ ոչ յետոյ կարած: Որս էին Զ (6) պատկերքն, Քրիստոսի գերեզմանն, եւ յարութեան երեւումն Դ (4)՝ ըստ չորից աւետա[րա]նչացն եւ զալ իղաբեր կանանցն:

Եւ Բ (2) սն զալ աշակերտացն ըստ Ղուկասու, միայն Պետրոսն, որ ետես զկտաւսն լոկ զի կային եւ զնաց զարմացեալ, թէ զինչ եղէ:

Եւ միւսն ըստ Յոհաննու. ել Պետրոս եւ միւս աշակերտն եւ գային ի գերեզմանն: Ընթանային երկոքեանն ի միասին:

Իսկ մնացեալ Չ (6) պատկերք էին մինն՝ ի մէջ բոլորակի Քրիստոսի պատկերքն խաչակնքելով Բ (2) ձեռամբ: Եւ շուրջ Քրիստոսի բոլորակին Ը (8) բոլորակ փոքրագոյն եւս, որս էին չորից բոլորակից մէջն. Դ (4) կերպարանք աւետարանչացն՝ Մարդոյ, Առիձոյ, Եզին եւ Արծույ: Եւ Քրիստոսի բոլորակի գլխին վերա եղեալ բոլորակին մէջն՝ հոգին սուրբ:

Եւ ի ներքոյ Չ (6) երորդ բոլորակն Չ (6) թեւեան սերովբէ: Եւ յաջակողմեան բոլորակին պատկերք սուրբ կուսին Մարիամու: Եւ յահեակ կողմանն բոլորակին սուրբ Յովհաննէս Մկրտիչն:

Իսկ Ը (8) երորդ պատկերն, որ էր մի ծայր եմփորանին ստոր կողմն, զձեռս եղեալ ի գլուխ առաքելոցն օրհնելով զնոսա ի լեառն Չիթենեաց համբարձման օրն: Թ (9) երորդ պատկերն ըստ Յոհաննու, որ մատուցին նման մասն ձկանց եւ խորիսխ մեղու եւ առեալ եկեր:

Ժ (10) երորդ պատկերն դրօքն փակելովք մտանելն եւ շօշափումն Թօմայի, եւ արկանել զմատունս ի կող կենարարին:

Մետասաներորդ ըստ Յոհաննու ի Տիբերական ծովն ձուկն որսալն Պետրոսի նաւաւ ընդ Նաթանայելի, ընդ որդուցն Չեբեթեայ եւ այլք աշակերտաց անտի երկուս: Որ եւ հրաման առեալ արկին յաջակողմն նաւին զուրկանս եւ բազմութեամբ ձկանց հանե[ա]լ ի ցամաք, կրակետդ կայծակամբ եւ ձուկն մի ի վերա խորովեալ եւ հաց:

Երկուտասաներորդ, ի միւս ծայրն եմփորոնին, պատկեր իշխանութիւն եւ զփականս տալն Պետրոսի առաքելոյն:

Այսքան պատկերք կային ի վերա պատուական եմփորոնին, որոյ ծանրութիւնն եմփորոնին էր ԷՃՕ (750) դրամ: Իսկ միւս եմփորոնն ի վերա սեւ քեմխայի Է (7) խաչ սրմայով եւ մարգարտով: Պատուական եւ ծանր խաչեր բանած ասղաբան եւ կարած ի վերա եմփորոնին: Չորս ձանձրութիւն համարեցայ մի ըստ միոջէ զկերպ պատկերացն գրել:

Եւ մէկ կոնքեր սրմայով որպէս զմեր կոնքերն եւ ի միջի զՔրիստոսի պատկերն խաչակնքելով, եւ ի Դ (4) անկիւնս՝ զաւետարանչացն:

Որում եւ ես խիլայեցի եւ շնորհեցի նոցա, զոր ինչ իմ կարն էր: Չի արք Բ (2) ի առաջիկայ սպասաւորաց իւրոց հրամանաւ նորին ի վերա բազկաց իւրեանց բարձեալ բերին եւ եղին առաջի իմ, ողջունելով զթարմատար ի բերանոյ մեծի Խանին եւ հարցանելով զորպիսութիւնն իմ խանդաղատական սիրով: Եւ թէպէտ ոչ կամէին առնուլ զօժիտս իմ վասն երկիրի Խանին, բայց յովով բռնաբարելոյս աղագաւ եւ հաւատացուցանելոյ, թէ՛ «Իմ բերանէն ոչ ելանէ, միայն թէ դուք ձեր ընկերացն մի ասէք», ապա հաւատացեալ ահիւ մեծաւ հազիւ թէ առին: Չի այնպէս սահման ունի մեծախելք Խանն. յորժամ մարդոյ բան ինչ առաքէ, եթէ տանողքն բան ինչ պահանջեն կամ առնուն, անխնայ սպանանէ զայնպիսիսն: Եւ ապա ելեալ

գնացին ի սպասաւորութիւն իւրեանց: Իսկ Երեւանայ խանն եւ ամենայն բանակ նորին, որ կային մերձ ի բնակութիւնս իմ, լուեալ զայս եւ տեսեալ զպարգեւսն, մեծաւ հիացմամբ սքանչացեալ զարմանային ընդ սիրոյ նշանն մեծին եւ զքաղցրութիւնն, որ առ իս: Եւ օր ըստ օրէ գային աչք ի լուսել եւ շնորհաւորել: Եւ թամաշայ արարեալ գնային սքանչացեալ: Փառք Աստուծոյ եւ օրհնեալ է անուն նորա, որ առնէ սքանչելիս միայն:

[ԻԷ]

Յետ այսորիկ հրաման եղեւ ի մեծ Խանէն ինձ, Երեւանայ խանին եւ ընդ մեզ եկելոցն, զի ամենայն օր ի ծագել արեգականն գնասցուք ի տես եւ ի սելլամ Խանին մեծի: Եւ պատրաստեալ էին իւրաքանչիւրոցն մերձ ի բնակութիւն եւ յամարաթն իւր եղեգնեայ հովանոցս սունտուրմային նման, զոր աստ այվան ասեն՝ Ժ (10) գիրկ, ԺԵ (15) եւ Ի (20) գրկով երկայն եւ Բ (2) գիրկ լայն: Որ իւրաքանչիւր քաղաքէ եկողքն ի մէկ մէկ հովանոց նստէին յատուկ՝ քաղաքակցօքն հանդերձ: Եւ վաղ քաջ գնացինք ի սահմանեալ տեղն, եւ ամենայն մարդոյ տեղն մանշուր եւ յայտնի էր: Եւ ամենայն ոք իւր տեղն ճանաչէր:

Եւ երրորդ ժամն ելանէր մեծագօր Խանն ի ներսէն ի դիւանխանան: Եւ չաուշք տուայ արարեալ, ապա ընթանային ամենեքեանքն կարգ կարգ առաջի իւր: Եւ խոնարհմամբ գլխոյ անմռունչ բարեւ տուեալ անցանէին:

Եւ զի էր նստած տեղն Խանին ամարաթ շինեալ փայտաշէն, եւ տանիսն՝ տախտակամած, իսկ շրջապատ պարիսպն եղեգնեայ եւ ուռեաց տեղն, եղեգնեայ պարիսպն եւ բնակութիւնքն:

Էին եւ վրանք բազումք ի ներքո եւ արտաքս ամարաթի Խանին: Նոյնպէս եւ մերս բնակութիւն ի բացեայ ի բանակէն, զառ ի վեր ի յեզերն Երասխայ՝ կէս ժամու ճանապարհ հեռի ի բուն բանակէն, աւելի քան զԵՃ (500) հիւղ շինած եղեգնեայ, զի կամէին թէ զեկեալ խաներաց զմանս անդ իջուցանէին եւ բնակեցուցանէին: Բայց վասն հեռի գոլոյն ի օթախէն Խանին ոչ ետուն թոյլ, այլ ի շրջակայ Խանին բնակեցուցին:

Եւ յետ Բ (2) կամ Գ (3) աւուր հրաման եղեւ ի մեծ Խանէն ինձ եւ ամենայն եկելոցն Երեւանայ, զի գնացեալ նկատեսցուք զչատիրն եւ զքօսնուցուք: Որ եւ ի պատճառէ մերմէ գրէթէ ամենեքեան առհասարակ գրոհ տուեալ ընթացան վաղվաղակի ի տես եւ ի թամաշայ ահագին վրանին, որ էին կանգնեցուցեալ ի եղեգնեայ պարսպին մէջն, ի կողմն հարամին՝ յարեւմտից կուսէ Խանի օթադին: Որ էր հոգացեալ եւ բերեալ ի Ղազպինու: Որոյ էր երկայնութիւնն ԶԺ (110) հալապի, եւ լայնութիւնն՝ Ծ (50) հալապի, իսկ բարձրութիւնն՝ ԺԸ (18) հալապի, սագաշէն, եւ ԲԺ (20)-ան սինք էին ի վրանին, եւ ի գլուխս սեանցն՝ կողակք արծաթեայք, որպէս միջակ ձմերուկ, նշանն այսպիսի ! (սլաք): Իսկ արտաքս վրանին կողմն բոսորագոյն կարմիր խորագոյն գունով: Եւ շրջապատն երկտակ, մինն՝ համակ, եւ մի տակն՝ մահաճար դավաս օյմայ, եւ մէջն՝ Կիլանու դանաւեթ դումաշ: Որ եւ լիապէս թամաշայ արարեալ զքօսնեցաք եւ ելեալ գնացաք ի տեղիս մեր օրհնելով զԱստուած:

[ԻԸ]

Ապա սկսան գալ յամենայն կողմանց հրաւիրեալքն հեռաւոր տեղեաց: Նախ՝
Հերարթու Փիր-Մահմատ խանն, որ եւ Մուղան Երեւանայ խան արար եւ բեկլեր-բեկի,
բայց ընդ իւր ունի գնա մինչեւ ցայսօր: Եւ ի տեղի նորա՝ միւթեսելլիմ, զոր սոքայ
նայիպ ասեն, անունն Մահմատ-Բիգայ պէկ, զոր առաքեցին ի Մուղանու, եւ է մինչեւ
ցայսօր Երեւան ի տեղի Փիր-մահմատ խանին եւ կառավարէ զնահանգն Երեւանու:
Խորասանու վէքիլ Թամազ խանն՝ բոլոր Իրանու սարտարն, որ էր սերասկար:
Մազանդարանու միրզէքն՝ վեզիր, վէքիլ, միրսօֆի որ է պաշտէֆտէրտար եւ
պաշտուհասէպէ եւ մանկուաթն: Այս Գ (3) հոգի ուր որ գտանին այսպիսի են:
Նուշապուրու միրզէքն՝ վէքիլ, վեզիր եւ միրսօֆի:
Մաշաթու Իպրահիմ խանն որ էր իւր հարազատ եղբայրն եւ է այժմ բովանդակ
Ատրպատականի որ է Հատրպէճանու սպասալար որ է սերասկերն:
Մազավարու միրզէքն՝ վէքիլ, վեզիր միրսօֆին:
Աստարապատու Ղաճար Մէհմէտ Հիւսէին խանն:
Կիլանու միրզէքն՝ վէքիլ, վեզիր միրսօֆին:
Ղազպինու Մէհմէտ-Բիգայ խանն:
Ղումայ Ղասում խանն:
Քաշանու միրզէքն:
Մպահանու մայարպաշի խանն:
Թէհրանու Լուրթ-Ալի խանն:
Սմրանու, ուր էր Շահ Թահմազն ի կալանս եւ որդին Շահ Ապագն ի հետն իւր մօտն,
նոյն տեղեաց մեծամեծքն:
Շիրազու Ահմէտ խանն:
Լառու Ալիդուլի խանն:
Տանտարու Ապտուլայ խանն:
Քիրմանու սուր[սա]թչիպաշի Աղայ Պաղըրն:
Կեզրանու Պաղր խանն Սիլսուփուր օյմաղէն:
Եզտու վէքիլ, վեզիր, միրսօֆի:
Տօվրազու Ալի-Մէրտան խանն:
Հաւզայու վալին, որ է մեծ խան:
Շուշտարու Ապպասդուլի խանն:
Պէհպանու Իսմայիլ խանն:
Քիրմանշահու Պայաթ Հաճի Սէյֆէտին խանն:
Համատանու Մուստաֆայ խանն:
Խուրմապաթու Բապա խանն:
Թարվիզու Ապտուռազախ խանն:
Սովուխպուլախու Մէհմէտդուլի խանն:
Յորմու Մէհմէտ Իսայ խանն:
Յարտաւիլու Իմամդուլի խանն:
Նախջուանու Բիգա խանն:
յԵրեւանու Մէհմէտդուլի խանն:
Կէնճէու Ուղուրլու խանն:
Թիֆլիզու վալին՝ Իմամդուլի խանի որդին Ալիմիրզէ խանն:
Ղազաղու Սֆահանվէրտի Քեախում բէկ խանն:
Շամախու Պէկլերպէկի Ղրաթն:

Լօռու Քելյա-Հիւսէին խանն:

Չօրսայ Մուրդգայդուլի խանն:

Մակո՛ւայ սուլթանն:

Կախէթու միրզայքն:

Տարպանտու, որ է Դէմիր Ղափուն, Մուսայ խան Թալիշն:

Եւ այլոց տեղեաց՝ ի խորին Խորասանայ եւ ի Պաքու, ի կողմանց հարաւոյ եւ ի Քանանացոց, ի յարեւելից եւ ի կողմանց Հնտկայնոց, ի գանազան քաղաքաց խանք եւ սուլթանք, միրզէք եւ միրսօֆիք, վէքիլք եւ վէզիրք, շէխիսլամք եւ շէյխք, մօլայպաշիք եւ մօլայք, քալանթարք եւ մէլիքք, կողմնապետք եւ կուսակալք, այան[ն]եր եւ քէտիտուտայք, խօսացտերք եւ տէվլէթաւորք՝ գումարեալ ժողովեցան, կուտեցան եւ եկեղեցացան՝ մինչեւ ցՊայրամն իւրեանց առհասարակ եկեալ հասին եւ կային պատրաստ:

Եւ ամենայն օր յատուկ յատուկ ի սէլամ մեծի Խանին գնային եւ դիւան կարգ կարգ՝ սկսեալ ի Խորասանայ քաղաքացոց մինչեւ ցԱտրպատականս եւ Արարատեանս՝ իւրաքանչիւր քաղաքաց մարդիկք իւրաքանչիւր մեծամեծօքն: Եւ յետ սէլամին ժամ մի մնացեալ եւ ապա ցրուէին իւրաքանչիւր բնակութիւնս իւրեանց:

[ԻԹ]

Եւ յորժամ եկին եւ գումարեցան յամենայն գաւառաց եւ քաղաքաց բոլոր Պարսկաստան երկրին ըստ գրեցելոյ մեծամեծք եւ երեւելիք, եւ կազմեցաւ ամենայն եկողաց յատուկ հովանոց եղեգնեայ, զի ժամանակն անձրեւային էր եւ եղանակն ձմեռնային:

Եւ այս Մուղան կոչեցեալ մեծ եւ անհուն դաշտս է լայն եւ ընդարձակ դաշտ մի հիանալի որ Լ (30) օր հազիւ թէ լաւ ձիաւոր մի կարէ շրջագայել զբոլորն, դուր եւ տափարակ:

Ի կողմանէ յարեւմտից եւ բարձրութիւնն եւ ի կողմանէ յարեւելից է ցածանալն զի եւ Երասխն յարեւմտից յարեւելս ընթանայ:

Որ ելանէ ի լերանց Կարնոյ որ է Արգրում եւ ի Կաղզվանայ անցանելով գայ հասանէ Այրարատ գաւառ ի Արտաշատ եւ ի Վիրապ: Եւ առընթեր Վիրապայ վանիցն հանդարտ գնացիւք ճեմէ եւ Շարուրով ժամանէ ի յԱստապատ: Եւ Աստապատու շինոյն եզերով եւ վանից առաջեւէ անցանելով մտանէ ի մէջ լերանց եւ քարանձաւանց եւ գայ ի Տարաշամք, ուր խառնի նմա Տղմուտ գետն՝ կից Տարաշամպու: Եւ այս Տղմուտ գետն այն գետն է, ուր Վարդանանց մեծ պատերազմն եղել եւ նահատակութիւնք նոցին ի յեզրն Տղմուտ գետոյն: Իսկ Տարաշամպն է Արագու այն կողմն, որ է յարեւելից ի Թարվիզու կողմն, զի Գ (3) աւուր ճանապարհ է Թարվեզ աստի:

Եւ անցանելով զՏարաշամպն լեռնամիջով հասանէ ի Հին Ջուղայ, ուր կայ մեծ եւ զարմանալի կամուրջն՝ Գ (3) տակ, բարձր եւ հիանալի տեսողացն զոր մեծն Շահ Ապագ քակեաց ի ժամանակին որում զՋուղայ քշեաց: Եւ այժմ աւեր կայ եւ ճանապարհորդք նաւաւ անցանեն ի Ջուղայու եւ գնան ի Դաւրեթ:

Եւ այսպէս ընթանալով ի Ջուդայոյ ելանէ ի դաշտն սակաւ ինչ տեղ՝ որպէս Ե (5)-Զ (6) ժամու ճանապարհ եւ հասանի ի Դաշտ գեղն եւ ի յՕրտուար, եւ անդէն կրկին մտանէ ի լեռնամէջ քարսահ, ապառաժուտ, դժուարին, խիստ տեղիս եւ անցանէ ընդ Մեդրու ձորով: Եւ ապա՝ Չաւրնտրու նահանգով եւ Պարկուշատով:

Եւ ապա ելանէ ի դաշտն Մուդանու, որոյ հարաւու կողմն է Ղարատաղն եւ հիւսիսոյ կողմն՝ Ղափան, Ղարայպաղ, Տուգախ եւ Կէնճէ Պասանու երկիրն, Վերէնտէ, Խաչին, Գանձասար եւ Ադուանից երկիրն:

Եւ այսպէս յորժամ ելանէ Երասխն ի դաշտն Մուդանու Դ (4)- Ե (5) աւուր ճանապարհաւ հանդարտ գնացիւք հասանի Կուռ գետն ուր խառնի ընդ նմա անդ ուր գումարումն եղև Պարսկաստանեայց, որոյ սակի է պատմութիւնս: Եւ ապա Բ (2) գետ խառնեալ ի միասին անցանէն Կիլանու երկրով եւ խառնին ի ծովն Կասպից:

Եւ այս դաշտս Մուդան է ի կողմն հարաւոյ ընդ արեւելս: Որ թէ խնձոր մի դիցէ որ ի գետնի, կարելի է ի հեռու տեղաց երելիլ: Եւ ամենեւիմք քար եւ նշմարանք քարի ոչ երելի ի յայս անհուն դաշտիս: Բայց է յոյժ եղեգնուտ եւ խոտաւէտ եւ լի վայրի երէլիւք եւ խոզիւք որ իբրեւ ոչխարս երամակ երամակ շրջին:

Բայց է անջրտի: Միայն յորժամ հալին ձիւնք յի [ս]նանց եւ համբարձմանն, ելանէ Երասխն ի սահմանացն եւ ծածկէ զմեծ մասն երեսաց դաշտին: Եւ բազում տեղիք ոռոգանին: Իսկ ի ձմեռն անձրեւն եւ ձիւնն անպակաս է, որպէս եւ տեսաք: Բայց ձիւնն ոչ տեւէ աւելի քան զԱ (1) օր, զի ջերմային է վայրն եւ յոյժ զիճային օդն, եւ խոնաւութիւն յոյժ յոյժ, զի ամենայն ինչ բորբսի շուտով: Ի դէկտեմբերի եւ յունվարի կանաչ խոտ գտանի, որ բաւականանայ ոչխարաց եւ անասնոց: Եւ գառինք ծնեալք լինին եւ մեծացեալք ըստ չափու որպէս են խորելէզին յերկիրն Հռոմայ տան: Եւ երբեմն երբեմն ցուրտ եւս լինի եւ սաստկանայ, բայց փութով անցանի: Եւ եզրն Երասխայ ծմակ եւ մորի, եւ գտանի այրելու փայտ բազում:

[L]

Եւ յետ կարգաւորելոյ զամենայն եկեալսն զհարաքանչիւրոցն յատուկ յատուկ հովանոցս սահմանադրեցին: Եւ եկեալքն ժողովէին անդ ի վրանացն իւրեանց հովանոցս եղեգնեայ, որ մերձ էր օդախի մեծի Խանին, ընդ ծագել արեգականն:

Եւ երկրորդ կամ ի յերրորդ ժամու ելանէր Խանն ի դիւանխանան եւ նստէր: Եւ չաւուշքն մեծաձայն գոչելով, որք են Լ (30) ամէն օր ի դիմացն կանգնեալք, կատարէին զտուայն: Եւ ապա գրոհ տուեալ ճագայիրչիք, որք են Խանի թֆանկչիքն՝ ԳՌ (3000)՝ իւրեանց հազարապետօքն, եւ գնային ի մէջ եղեգնեայ պարսպին եւ կարգաւ շրջապատեալ կանգնէին երկտակ եւ երեքտակ ունելով ի ձեռս իւրեանց զիրահանելիս իւրեանց մեծամեծ թֆանկներն որոյ ծանրութիւն միոյ թֆանկին լինէր ԺԵ (15) օխայ եւ այլ աւելի, ունելով զբերանս թֆանկաց ի վեր կէս մի արծաթեայք եւ կէս մի ոսկեայ պլագուկով: Եւ որպէս գաւազան յենուին ի նոսա: Եւ ի գլուխս իւրեանց եւ թաղէ գտակ, որ է քէչէ դալփաղ: Եւ գտակին Բ (2) կողմի իրթմաջն երկայն պոչերով, գրեալ ի վերա գտակացն. «Ալլահ Եալլահէ ԳՌ (3000) աց Գ (3) կերպ գրեալ: Եւ այսպէս կից միմեանց կանգնեալ սոսկումն էր տեսողացն:

Այլ եւ ընթեր մեծի Խանին մերձ ինքեան կանգնէր իւր եղբայրն՝ Իպրահիմ խանն, յետ որոյ՝ մեծի Խանին մեծ որդին Րիզայդուլի խանն: Եւ ապա եղբօր որդին, որ էր այլ փոքր, որ էր Մուրդուզայդուլի խանն: Եւ ապա կրկին մեծ Խանի որդին, այլ փոքրագոյն, Մէհմէտ-Ալի խան: Եւ ապա միւս խաներն՝ ամենեքեան ըստ կարգի եւ ըստ պատուոյ:

Այլ եւ դիմացն պար առեալ կանգնէին Բ (2) կարգ: Որոց մի կարգն էր չանտաուլք, որք ունին ի գլուխ իւրեանց ճղայս, որպէս զագի աքաղաղին, որպէս եւ էր իսկ թէպուր աքաղաղեաց:

Եւ երկրորդն՝ նասախչիք: Որ եւ մեծաւորն իւրեանց ունի Գ (3) հատ ճղայ ի վերա ճակատին ի գտակն իւր: Եւ անդ ի ծայրս եւ ի մէջս ճղային՝ թէպուրք:

Զինուորքն իւր բազումք՝ պղնձէ կամ արծաթէ շինեալ եւ ոսկեջրեալ, նման նետին պատուանդանին՝ Գ (3) ժեռի կամ Դ (4), ժեռի նման նետից, գոր շինեն թէպրով, որպէս թզաչափ: Եւ ունին ի ձեռս իւրեանց միշտ նաճաղս դմրշխեայ երկաթէ արծաթապատ կոթով: Եւ է գործ չանտաուլոցն պահել զճանապարհներն որպէս պօստանչի պաշին՝ զանցս ճանապարհաց, զկիրճս, զճորճորս, այլեւ ի բանակետոյն արտաքոյ բանակին պահեն ի գիշերի: Եւ յորժամ սպանանելոյ իցէ գոք, տայ ի ձեռս նոցա, եւ նոքա սպանանեն ըստ հրամանի իւրում:

Իսկ նասախչոցն է գործ, ի պատերազմի, գոր ինչ հրամայէ, ծանուցանել զօրացն եւ դատաղայ անել, որ է եասախ անել, եւ վարել զօրս ի յետուստ ի պատերազմ: Եթէ ոք թիկունս դարձուցանէ՝ սպանանել: Եւ յորժամ կամի գոք կոչել, զնոսա առաքէ: Եւ ի հեռաւոր տեղիս առաքէ զնոսա՝ իբրու անողորմ դահիճս, որ վաղվադակի կատարումն տան հրամանին: Եւ ի մէջ բանակին պահեն գոխի եւ զգիշեր, եւ ի վերա գողոց եւ աւազակաց սոքա իշխեն: Եւ գոր ինչ գողք գողանան ի բանակն, ընչից տեսարքն ի սոցանէ պահանջեն եւ առնուն:

Այլ ունի եւ ճարչիք, որ ամենայն օր, գոր ինչ հրամայէ մեծ Խանն, կանչելով ծանուցանեն ամենայն բանակին, նոյնպէս՝ եւ ի ժամ պատերազմին:

Այլ եւ ունի ԶՌ (6000) քէշիկչի, որ սպիտակ սարուխ փաթաթեն ի վերա գտակին: Բայց գտակն ամենեւիմք ոչ երեւի, այլ սպիտակ սարուխ է փաթաթեալ դիւրեւ: Եւ սոքա եւս ունին թֆանկս հասարակաց եւ պահեն նօպաթով զբնակութիւնն Խանին ի տրւէ եւ ի գիշերին՝ ԲՌ (2000) աւ, որ Գ (3) օր մի նօպաթ քէշիկ քաշեն: Չանտաուլք են ԳՃ (300), նասախչիք՝ ԳՃ (300) եւ էլիաղաճլի՝ ԳՃ (300):

Եւ են էլիաղաճլիքն որդիք խաներաց կամ եղբայրք խաներաց, որ միշտ առաջի իւր կան ի սպասու: Եթէ բարկանայ ումեմն եւ հրամայէ ծեծել, սոքա ծեծեն՝ պրկելով ի վերա երեսաց ի յերկիր: Եւ Ե (5)-Զ (6) էլ[ի]աղաճլի կանգնեալ անողորմ հարկանեն, մինչեւ ասացէ. «Բաւական է: Թողէք»:

[ԼԱ]

Մերձեցաւ օրն Ռամազան Պայրամին: Եւ կրկին հրաման ետուր կանգնեցուցանել զմեծ վրանն. քանզի յառաջին նուազին յետ երից աւուրց ժողովեցին զվրանն եւ պահեցին:

Որ եւ ի արիֆէին օրն կրկին պատրաստեցաւ վրանն ի կողմն յարեւելից օթադին իւրոյ:

Եւ յաւուր արիֆային՝ յորժամ գնացինք ի սելամն, ինքն մեծագօր եւ մեծախելք հանճարեղ Խանն կանուխ՝ յետ կէս ժամու ծագման արեւուն ել արտաքս ի օթախէն եւ եղեգնեայ պարսպէն ի կողմն յարեւելից եւ կանգնեցաւ, ունելով զդէմս իւր ի հիւսիս:

Եւ եղբայրն իւր՝ Իպրահիմ խանն՝ մերձ ինքեան ի ձախակողմն, եւ մեծ որդին՝ Րիզիդուլի խանն՝ ի ներքոյ, քան զեղբայրն եւ եղբօր որդին՝ Մուրդուզայդուլի խանն, որ ամօք փոքր էր, քան զմեծ որդին՝ ի ներքոյ մեծ որդւոյն իւրոյ, եւ փոքր որդին իւր՝ Մէհմէտ-Ալի խանն՝ ի ներքոյ եղբօր որդւոյ իւրոյ, զի եւ սա փոքր էր ամօք, քան զեղբօր որդին, եւ այլ խանք ըստ կարգի եւ ըստ պատուոյ իւրեանց կանգնեալք կային:

Նոյնպէս եւ ճեզայիրչիք ի բացեայ պարսպեալ միատակ ԳՌ (3000)ք մեծամեծ թֆանկներով կանգնեալ էին: Այլեւ համաշայ քէշիկներն հասարակաց թֆանկներով յայս կողմն քան զճեզայիրչիքն: Եւ չաւուշք՝ առաջի նորա: Եւ ապա չանտաւուրք, նասախչիք՝ այլ առաջի: Եւ մերձ յանդիման ինքեանց՝ էլիադաճիք, որք էին ոմանք որդիք խաներաց եւ ոմանք՝ եղբայրք խաներաց:

Եւ հրաման եղեւ ի մեծի Խանէն, եւ բերին զուղտսն եւ կռուեցուցանէին առաջի իւր: Զկնի ուղտոցն եւ զըմպիշ մարդիկքն, որք են փահլիւանք, ետուն ըմպշամարտել ընդ միմեանս:

Եւ հրամայեցաւ ամենեցուն պատրաստ եղելոցն զալ կարգաւ եւ անցանել առաջի իւր սելամ տալով, որպէս երեկն եւ եռանդն: Եւ այսպէս ամենայն քաղաքաց եկեալ մարդիկք ջոկ ջոկ, կարգ կարգ գնայինք եւ խոնարհամար գլխոյ անմռունչ բարեւ տուեալ անցանէինք առաջի իւր: Եւ յետ աւարտմանն գնացինք՝ իւրաքանչիւր ի տեղի իւր:

[ԼԲ]

Իսկ ի միւս օրն, որ էր մեծ Պայրամն իւրեանց, կանուխ գնացինք ի օթախն մեծի Խանին՝ ի տեղի հանգստարանի մերում՝ իւրաքանչիւր ի հովանոցս իւր, ուր ամենայն օր հանգչէաք ի եղեգնեայ այվանն մեր: Քանզի մինչ դարձանք, ի երեկեան օրն, որ էր արիֆէ, ի մետաղս մեր , ի ճանապարհին հարցուցի քալանթարին եւ մել[[ի]քին, թէ՛ վաղիւն Պայրամ է, եւ մենք ի՞չ չաղ գանք ի սելամն: Պա՞րտ է զալ թէ ոչ»: Իսկ նոքա պատասխանեցին, թէ՛ «Այո գանք, զի պատշաճ է: Եւ ինչ չաղ գայինք ամէն օր, նոյնպէս եւ վաղիւն»: Իսկ ես ասացի, թէ՛ «Ոչ այդպէս, զի Թուրքաց երկիրն ի Հոռոմոց տունն եւ ի Կոստանդնուպօլիս Պայրամ սելամին եւ նամագն կանուխ կու լինի: Զի յառաջ քան զլուսանալն գնան մեծամեծքն ի թագաւորին պալատն սելամ, եւ ապա զումարեալ գնան ի նամագն եւ յետոյ գան եւ կրկին պայրամլամիշ լինին, եւ յետոյ ցրուին իւրաքանչիւր տեղիս: Վասն որոյ պարտ է մեզ կանուխ գնալ ի

հովանոցս մեր՝ ժամ մի յառաջ քան զծագել արեգական: Գուցէ եւ սոքա կանուխ կամիցին զսելամն»: Եւ հաճեալ ընդ բանս իմ ասացին. «Բարի է. այնպէս արասցուք»:

Վասն որոյ կանուխ՝ յառաջ քան զծագել արեգական, գնացեալ ի սահմանեալ հանգստարանն մեր: Որ եւ սիրով ընկալան զմեզ նասախչիքն եւ մեծարեալ նստուցին:

Յետ փոքր մի անցանելոյ եկն եւ Մուկոֆի էլչին: Զնա եւս ընկալեալ նստուցին ուրիշ տեղ:

Եւ այսպէս ի սուղ ժամու եկին ժողովեցան եւ կուտեցան բազմութիւնք մարդկան՝ խանք եւ սուլթանք, միրզէք եւ միրսօֆիք, քալանթարք եւ մէլիքք, մօլլայաշիք եւ մօլլայք, քէտխուտայք եւ տէվլէթաւորք, հազարապետք եւ հարիւրապետք, յիսնապետք եւ տասնապետք, ճէզաիրչիք եւ համաշայ քէշիկք, չանտաուլք եւ նասախչիք, խանգատէք եւ էլիադաճիք, եւ այլ բազմութիւնք խառնիճադանճից, որ գրէթէ ոչ կարէր տանել վայրն զբազմութիւն մարդկանց:

Եւ զԳՌ (3000) ճէզաիրչիքն երկու կարգ օրինեցին՝ եղեգնեայ պարսպէն Խանին մինչեւ ցնետաձիգ մի եւ այլ աւելի, զոր ալայ ասեն օսմանցիքն եւ ամենեցուն ձեռքն մեծամեծ թֆանկներն:

Որ եւ ի այն ալային միջէն անցուցին զօսմանցոց էլչին՝ զԿէնճ-Ալի փաշայն, եւ տարան ի մեծ վրանն յառաջ քան զամենեսեան: Նոյնպէս եւ զՈւռուսաց էլչին տարան զկնի նորա:

Որ եւ իւրաքանչիւրոցս՝ մեզ հրաւիրելոցս ետուն տեղ եւ բազմեցուցին: Քանզի զերկայն տեղ մի ջոկ էին պատրաստեալ, եւ ըստ հրամանի մեծի խանին մի մի կոչէին զհրաւիրեալսն, եւ տարեալ նստուցանէին ի պատրաստեալ տեղին: Եւ ունէին եւս ի վերա քարտիզի գրեալ զհրաւիրելոյ անուանսն կարգաւ, որպէս կարգաւորեալ էր մեծիմաստ Խանն: Վասն որոյ ըստ գրեցելոյն ի խանէն նկատէին ի վերա թղթին եւ այնպէս ժողովէին զպատուելիքն իւրաքանչիւրոց հովանոցաց: Եւ բերեալ ի մի տեղ նստուցանէին ի ներքոյ յատուկ պատրաստեալ եղեգնեայ հովանոցին:

Եւ կրկին կրկին պատուիրէին, զի ամենայն որ նկատեալ ճանաչիցէ զկարգն իւր՝ թէ ով կայ ի վերէն, եւ կամ՝ ով է ի ներգէն, եւ մի շփոթեցին եւ խառնեցին իրար: Այլեւ յորժամ գնացեն ի վրանն բարեւել եւ բազմել առաջի մեծի Խանին, համեստութեամբ եւ յամր գնացեն ծանր ծանր: Եւ մի շտապեցեն ոչ ի նստելն եւ ոչ ի յառնելն, այլ խոհեմութեամբ եւ պարկեշտութեամբ լիցի նստելն եւ ելանելն:

Եւ յետ կատարելոյ եւ հրաւիրելոյ զայնոսիկ, որք նշանագրեցեալք էին ի քարտիզի, իբրեւ նստանք կէս ժամ: Որք էին ամենեքեան խանք եւ ոչ այլ որ եւ եւս՝ ի միջի խաներաց: Որ զգուշութեամբ ամենայն որ նշմարեաց եւ ճանաչեաց զտեղն իւր: Անմոռնչ կայինք եւ սպասէինք հրաւիրման ի վրան անդր:

Ապա հրաման եղեւ ի մեծանուն Խանէն, եւ եկեալ խանգատայքն, որք են էլիադաշլիք, հրաւիրեցին զմեզ ի վրանն անդր: Եւ որպէս ուսուցին մեզ զարարողութիւնն, այնպէս կարգաւ կարգաւորեալ գնացինք եւ մտանք ընդ պարսպաւ եղեգնեայ:

Եւ ապա հասեալ ի վրանն, հանեալ զմուճակս մեր արտաքոյ վրանին, մտաք ի վրանն ահիւ եւ պատկառանօք: Եւ կանգնեցաք ի մէջ տեղի վրանին, խոնարհմամբ զլիտոյ ողջունեցաք զնա եւ շնորհաւորեցաք զՊայրամն: Եւ նստաք յայս կողմն եւ յայն կողմն վրանին, զի էր երկայնագոյն. ի վերա ծնկաց նստեալ դիտեաք անմոռնչ:

Իսկ Խանն բազմեալ էր ի գլուխ վրանին՝ ի մէջ փոքր խցանման տեղին: Քանզի վրանի ծայրն ունէր երիս յատուկ տեղիս որպէս ճիպինլուխ, փոքր վրանաձեւ փերտեով եւ դռներն վարագուրով: Յորում բազմեալ էր Խանն ի մէջ միոյն ի նոցանէ, եւ դէմքն առ մեզ նայելով առ ամենեսեանսն, զի դրանց վարագուրն ի բաց էր:

Իսկ աջակողմն մեծի Խանին՝ այն առանձին փոքր տեղեաց ի դուրս, նստեալ էր էլչին օսմանցօց Գէնճ-Ալի փաշայն եւ այլ ներքոյ՝ Է (7)-Ը (8) խան եւ Թիֆլիզու վալին, որ էր աներձագն, ի վեր քան զիս: Եւ վալի վասն այն ասեն, զի յետ շահին նա միայն կարէ դնել ի գլուխն իւր ճղայ, որպէս թէ երկրորդ շահին: Եւ մեծ է վալին, քան զբազում խաներն: Որ ունէր այս վալիս Թիֆլիզու եւ Կախետու խանութիւնն եւ վալիութիւնն:

Եւ ի վայր քան զնա էր կէտիկն իմ:

Եւ ի վայր քան զիս կային ԽԵ (45) խան նստեալ որպէս պատմեաց յետոյ քալանթարին եւ մէլիքին Երեւանայ Մեհմետղուլի խանն: Որ նա էր համարեալ. զի ես կայի հիացեալ եւ սասանեալ, որ եւ իմ մտացս ոչ անցաւ այնպիսի բան:

Նոյնպէս եւ յահեակ կողմն՝ ի դիմաց մերոց էր նստեալ նախ՝ իւր եղբայրն՝ Իպրահիմ խանն, ապա իւր մեծ որդին՝ Ռիզաղուլի խանն, յետ նորա՝ եղբօր որդին՝ Ալիղուլի պէկն, եւ ապա՝ պզտիկ որդին՝ Մուրդուզաղուլի միրզայն, եւ ապա՝ Ուռուսաց էլչին, եւ ապա՝ խաներն՝ կարգաւ, որպէս եւ ի մեր կողմն: Եւ զատ խաներաց, եւ էլչոց եւ միրզոց, որք են զապիրթք ի տեղի խաներաց, սակաւ ոմանք: Այլ ոչ որ չէր բազմեալ անդ: Որ թէպէտ ոչ համարեցի վասն երկիւղի եւ պատկառանաց, այլ թուի, թէ հարիւր հոգի, սակաւ մի աւելի կամ պակաս, կային բազմեալ ի յերախանս այն:

Իսկ այլ մնացեալ մեծամեծք եւ իւր հազարապետք եւ հարիւրապետք, եւ տասնապետք եւ միրզէք կանգնեալք ի յոտին ի թիկանց կուսէ մեր՝ բազմելոցս, քանզի ի մէջ վրանին ի Դ (4) կողմունս հալէպի ու կիսի չափ տեղ զատած էին, որպէս մահաճար, զոր օսմանցիքն պարմաղլ կասեն, կտաւէ՝ Բ (2) թիզ բարձրութիւնն, եւ երեւէր, որպէս պողոտայ, եւ մէջն խալիով փռած: Կանգնաւորքն անդ էին: Եւ մեք այս կողմ մահաճարին՝ առաջեւ կանգնաւորացն բազմեալ:

Իսկ ի մէ<ն>ջ չատրին՝ սեանց յայս կողմն եւ յայն կողմն երկուս երկայն տաստախօսն պատուականս տարածեալ, եւ աջակողմն ի մեր կոյս Գ (3) մեծ պատեայ ոսկեղէն՝ ըստ նմանութեան շերպէթչաց պատիայից, որք կան ի Ստամպոլ եւ ամենայն տեղիս Յունաց տանն ի վերա տաստախօսին: Այլ եւ Գ (3) թունկի, որք

են սուրահիք սակաւ մի տափակագոյն, որք տանէին մի մի ի նոցանէ Ե (5)-Ե (5) Կամ Զ (6)-Զ (6) օխայ ջուր: Այլ եւ Գ (3) ոսկեղէն սկուտեղ՝ թիզ ու կէս լայնութիւն, ունելով ի միջի իւրաքանչիւր Է (7)-Է (7) ըմպանակ ոսկի՝ ըստ նմանութեան ոսկուղ աւագանին, եղեալ ի մէջ ոսկի զարֆերաց, որ էր կցեալ ի սկուտեղն ոսկեայ: Քիչ մի բարձր ոսկի պատուանդանով էին զարֆերն, եւ ի միջի զարֆերացն՝ ոսկի թասերն:

Այլեւ Բ (2) բուրվառք ոսկի մեծագոյնք, որոց ծանրութիւնք թուի թէ կայր Ռ (1000) սկան դրամ, կամ այլ աւելի, կարճ շղթայիք, Դ (4) գնճըլով, առանց պօժօժի: Երկայնութիւն շղթայիցն կիսոց չափ բուրվառաց մերոց, եւ ի գլուխ շղթայիցն, որպէս անկ, պախրաճի կամ ֆէնէրի, որոյ էին կցեալ Բ (2) շղթայս ի մի կողմն անկի, եւ զԲ (2) սն՝ ի մի կողմն: Նոյնպէս եւ ահեակ կողմն նոյն թուով եւ նոյնզունակ՝ արծաթեայ:

Եւ այն մեծամեծ պատէլէքն էին լցեալք շաքար շարպաթով, եւ ռեհանի հունդ ի յերեսն շարպաթին: Այլ եւ Գ (3) սինի հալապի ու կէս լայնութիւնն, որք էին ոսկի եւ յաջ կողմն, նոյնպէս եւ՝ Գ (3) սինիք արծաթիք ի ձախ կողմն, եւ ի միջի շարեալ շաքարի գլխներ, որպէս է Վենետիկու շաքարն՝ փոքր գլխներ: Եւ սկսան մեծարել զհրաւիրեալսն. նախ ի մեծագօր Խանէն՝ զկուլապն ոսկի կուլապտներով կարգաւ ամենեցուն Բ (2) կողմանց: Նոյնպէս եւ արծաթեայ կուլապտներով՝ Բ (2) կողմանց:

Զկնի եկին եւ ոսկեղէն բուրվառքն ծխելով զանուշահոտութիւն, բայց ոչ որպէս զմերս՝ ի դիմաց խնկարկել, այլ սոցա աջ եւ ահեակ տարբերելով, ամենեցուն միշտ շրջագայելով՝ ի Դ (4) կողմն հանդերձ խնկարկելով: Եւ զկնի ոսկի բուրվառացն՝ Բ (2) արծաթեայ բուրվառք եւս, որպէս թէ լինէին ոսկի բուրվառքն. մինն ի յարեւելս լինէր միւսն՝ ի հարաւ: Իսկ արծաթեայք եթէ լինէր. մինն ի հիւսիս լինէր եւ միւսն՝ ի յարեւմուտս:

Եւ մինչ նոքա խնկարկէին մշտապէս շրջագայելով ի մէջ վրանին, այլք ի սպասատրաց սկսան բաժանել զշէրպէթն ոսկեղէն բաժակաւ, որս էին ի վերա զարֆիցն ի մէջ սկուտեղին, զի լցեալ զԷ (7) ըմպանակն ի սուրահոնցն եւ ունելով զսկուտեղն ի ձախ ձեռին, աջ ձեռովն առեալ մի մի զըմպանակսն եւ տային զիւրաքանչիւրոցն բազմելոցն: Եւ յորժամ աւարտէին, տարեալ կրկին լցուցանէին ի թունկացն, որք են սուրահիք: Եւ թէ հատանէր սուրահոյն միոյ շարպաթն, լցուցանէին զսուրահիքն ի պատիէն՝ մինչեւ ըմպիցին ամենեքեան, որ էին բազմեալ ի մէջ վրանին: Եւ ապա սկսան եւ այնոցիկ, որ կանգնեալ կային ի թիկունս մեր նաեւ արտաքոյ վրանին՝ մեծամեծք եւ զօրապետք, եւ միրզէք եւ այլ բազմութիւն կուսակալաց եւ կողմնապետաց, եւ մատուցին նոցա արծաթեայ ըմպանակաւ:

Եւ գուսանք մեծամեծ եւ փոքր եւ մանկունք փափկաձայնք, որք ունէին ուրարս, նման ուրարին եկեղեցիոյ մերոյ ձգեալ ի պարանոց մանկանցն, եւ փաթոյթ ընդ բազուկս Բ (2) ձեռոցն եւ Բ (2) թգաչափ կախեալ ծայրք ուրարին ի Բ (2) բազկացն, եւ պօժօժունս շարեալ ի յոտսն, եւ այնպէս պարէին առաջի մեծի Խանին եւ առաջի բազմութեանն: Որք էին թուով ԻԲ (22), եւ այլ ոմանք սանթուրք եւ տամպուրայք, քէմանէք, քանոնք եւ այլ գործիք նուագարանաց եւ անոթք երաժշտականաց նստեալ ի բացեայ յանդիման Խանին ածէին եւ հնչեցուցանէին, եւ իւրաքանչիւրքն այլ եւ այլ խօսէին՝ ըստ ոճի նուագարանի իւրում: Իսկ պարիչքն եւս խաղ ասէին ի պարելն

իւրեանց, բայց՝ ի մի գոյն եւ ի մի եղանակ: Պարողքն՝ ի մի գոյն, իսկ բազմեալքն՝ ըստ իւրաքանչիւր հաճոյիցն երգէին: Եւ այսպէս երգիչք եւ պարիչք մինչ ի յօգուտ ժամ մի երգեցին եւ պարեցին, եւ բուրվառք միշտ ի շրջագայելն:

Եւ ապա արձակեցաւ երախանն: Եւ գնացին իւրաքանչիւր ի բնակութիւն իւր: Իսկ զիս առեալ Թիֆլիզու Աշխալ բէկի որդին Աղայ անուն, որ էր քալանթար եւ մէլիք Թիֆլիզու՝ ի նոյն տեղեաց, եւ տարաւ ի վրանն իւր պատիւ՝ հանդերձ քալանթարի եւ մէլիքաւ մերով, իշխանօք եւ քէտխուտօք երեւանցոց, աստապատոցոց, նախչուանցոց եւ գօղթնացոց: Որ եւ առաջի վրանին, ուր բազմեալ էինք ի սեղանն՝ իբրու Բ (2) քարընկէց հեռագոյն, ճանպագ խաղայր ի չուանին:

Եւ մերձ երեկոյեան ժամու վերելեակաւ մերով գնացինք Երեւանայ միրզէյոց վրանն եւ շնորհաւորեցաք զՊայրամն իւրեանց: Եւ ապա անցեալ գնացինք ի մետաղս մեր, սքանչանալով եւ փառաւորելով զԱստուած, որ ունի զսիրտս թագաւորաց ի ձեռին իւրում եւ ում կամի ողորմէ եւ ում կամի խստանայ:

[ԼԳ]

Իսկ երկրորդ օրն Պայրամին կրկին գնացաք ի սէլամ: Եւ երրորդ ժամու հրաւիրեցին զմեզ ի բացեայ տեղի մի ի դաշտին՝ ձիու արշաւան մի հեռու ի օթախէ մեծի Խանին: Եւ հրամայեցին ամենեցուն, զի ամենայն խան իւր երկրի մարդով առանձնասցի եւ խորհեցի:

Եւ նստան երախանս երախանս՝ ուր Ծ (50), ուր Ճ (100), եւ աւելի եւ պակաս:

Եւ սկսան խորհել ընդ միմեանս եւ հարցանել, թէ՛ «Վասն է՞ր է կոչումս այս, եւ վասն է՞ր՝ գումարումն մեր, եւ կամ՝ այժմ զի՞նչ կամին հարցանել մեզ»:

Եւ ապա եկին ի մեծ Խանէն արք Է (7), որք էին. միրզէ Չաքին, եւ միրզէ Մեհթին, եւ խան մի որ Վէլի Թահմագ ասէին, եւ Սպահանայ մայրապաշին, որ է սահապայարն, եւ քէշանցի Ապդուլ-Ղատիմ միրզէն եւ խորասանցի Ալի-Աքպար միրզէն եւ մեծ Խանի սանդուխտարն:

Եւ կանգնեցան ի մի վայրն եւ բան եղին ճառչոցն եւ նասախչոցն, զի ամենայն երկրի մարդիկք յատուկ յատուկ հրաւիրեցեն առաջի իւրեանց՝ խանօք, եւ քալանթար մէլիքով, եւ քէտխուտով, եւ միրզով եւ զապիթօք իւրեանց՝ թապուն թապուն: Եւ իւրեանք կանգնեցուցին շուրջանակի զայլ նասախչիս պարաւորս, եւ ի մէկ կողմանէ մուծանէին զեկողսն ի մէջ հանդիսի պարաւորացն եւ կացուցանէին առաջի վերոյ գրեալ Է (7) ից արանց՝ զգլխաւորս քաղաքացւոց յառաջ եկելոցն եւ պատուիրէին ասելով, թէ՛ «Չրաման է մեծ Խանին, որ գնացեալ ի միջի ձերում խորհեցիք ընդ միմեանս, թէ՛ զով կամիք եւ զով խնդրէք ձեզ եւ զերկրին կառավարօղ, զձեզ եւ զերկիրս ի խաղաղութեան եւ ի հանգստեան պահող: Ջի ինքն ձերացեալ է եւ վաստակեալ ի բազում ժամանակաց պատերազմաց: Եւ ահա տրչութեամբն Աստուծոյ զՊարսկաստան երկիրս ազատեաց ի թշնամեաց, վանեաց եւ արտաքսեաց զթշնամիսն երկրէն: Եւ ահա խաղաղացաւ աշխարհս այս: Եւ ինքն կամի գնալ ի Խորասան եւ նստել ի դղեակն իւր եւ աղօթել վասն իւր եւ վասն ձեր: Վասն որոյ խորհեցէք ամենեքեանդ մինչեւ ցիններ[ր]որդ ժամ աւուրն. Եւ իններ[ր]որդ ժամու

կրկին այս վայրի գետեղեսչիք, զի յատուկ յատուկ խորհեալն ձեր եւ զկամքն ասասչիք, զի տացուք պատասխանի խանին:

[ԼԵ]

Եւ գնացեալ խորհեցաք մինչեւ ցութերորդ ժամն եւ դարձանք կրկին ի նոյն տեղի: Վասն ահի կասկածանաց ժամ մի յառաջ շտապեցաք: Եւ կրկին նոյն մարդիկն, զոր ծանուցաք ի վերոյ՝ եօթներին արքն, եկին եւ կանգնեցան ըստ առաւօտեան կարգի, եւ հրաւիրեցին կրկին յառաջի իւրեանց եւ հարցուցին: Եւ գտին ի մի բան զամենեսեան՝ համակամ եւ համախորհուրդ: Զի ութերորդ ժամէ սկսան հարցանել եւ մինչեւ ցմուտս արեգականն հազիւ խալսեցան: Եւ ապա հրաման ետուն եւ ասացին. «Գնացէք եւ առաւօտն կանուխ եկէք»:

Իսկ ի միւս օրն որ էր Պայրամին երրորդ օրն եւ փետրվարի Ե (5) օրն հինգշաբթի գնացինք վաղ քաջ՝ իւրաքանչիւր ի տեղի իւր, որում տուեալ էին յառաջմանէ իւրաքանչիւրոցն, եւ նստանք: Եւ յետ Գ (3) ժամու հանին զմեզ անտի ի դաշտն կրկին եւ հրամայեցին յատկանալ իւրաքանչիւր խաներաց՝ իւր երկրի մեծամեծօք եւ քէտխուտօք: Եւ այնպէս մեկնեցանք ի միմեանս եւ նստանք դասք դասք ի վերա խոտաւէտ մերկ երկրի:

Եւ սկսանք ամենեքեան ասել եւ լսել եւ քննել ի մէջ մեր ժողովոյն: Ընտրեցին զոմանս ի պարսից, զի թէ բան ինչ հարցանիցեն, նոքա միայն խօսիցեն եւ տացեն պատասխանի: Եւ ի հայոց զիս, զքալանթարն եւ մելիքն միայն սահմանեցին խօսիլ ի հանդիսի: Եւ այնպէս արարին եւ ամենեքեանքն, իւրաքանչիւրքն զոմանս ի միջի իւրեանց ընտրեցին պատասխան տալոյ: Նոյնպէս եւ Ատրպատականու, Վրաստանու եւ այլոց ամենայն երկրեաց եկելոց պատրաստեցին խօսողս ընդդէմ այնոցիկ Է (7) ից արանց՝ եթէ հարցանիցեն եւ հրամայիցեն ինչ:

Եւ ապա կանգնեցան կրկին մեծ պար մի, որպէս երեկն եւ եռանդն, եւ ի միջի պարուն՝ նոյն առաջին Է (7) արք: Եւ սկսաւ խօսել Վէքիլի Թահմագն եւ ասել. «Լսեցե՛ք խաներ, սուլթաններ, պէկլէր, աղայներ, հայոց սէրէֆրազ Խալիֆայ, քէտխուտէք, այսներ եւ ամենայն եկեալքդ ի հեռաւոր եւ ի մերձաւոր տեղեաց: Զի հրաման է մեծ Խանին եւ այսպէս ասէ «Որովհետեւ չի թողիք եւ չի կամեցաք, որ զնամ իմ տեղս հանգստանամ, եւ ոչ քա[ր]ջեցիք զձեռս ձեր ի դրօշից իմոց, զայս երիս խոստմունսս խնդրեմ ի ձեռն»:

Նախ՝ յետ ժամանակաց եթէ շահի որդի կամ ազգական յայտնի եւ երեւի, նոքա հետ չի միաբանիք, եւ քօմակ չանէք եւ չընդունէք:

Երկրորդ՝ զնալաթն եւ զհայհոյանքն որ տայիք Օմար Օսմանին, այսուհետեւ այլ չի ասէք եւ Նարուզ Պայրամին զղէմս ձեր չի ցոլէք եւ չարիւնցնէք վասն Հասան Հիւսէյինին, այլ՝ ըստ պայմանադրութեանս եւ ուխտելոյն ձեր, մնայք անշարժ: Զի վասն այն հայհոյանաց պատճառէն այնքա՛ն արեանց հեղմունք լինի մեր դուրանի թապի երկուց ազգաց եւ երկուց թագաւորութեանց մէջն՝ Իրանին եւ Թուրանին, եւ՝ բազմաց գերութիւնք: Այլ այսուհետեւ բարձցի այս խոռովութիւնս եւ շփոթս ի մէնջ զի մեր եւ նոցա մարգարէն միեւնոյնն է նոյնպէս եւ դուրանն: Մի է եւ նամագն:

Որովհետեւ օսմանցիքն զձեռս ի վերս սրտին դնելով կատարեն, իսկ մեք՝ ձեռս ի կախ պահելով եւ արձակ, նոյնպէս եւ եղիցի: Նորա՝ զհարեանցն, եւ մեք զմեր ծէսն արասցուք, եւ միմեանց նախատինս մի դիցուք: Այլ եւ յորժամ Քապէն գնան ի Պարսկաստանու, չի նեղացուցանեն եւ աւելի ինչ չի պահանջեն, այլ որպէս զհարեանց հաճիք, պատուիցեն եւ, որպէս զեղբայր, համարիցեն: Եւ որովհետեւ ի Դ (4) կողմն կարելի է անդ ի Քապէ աղօթել, դուք եւս, որ կողմն որ կամիք՝ աղօթեցէք: Եւ այսու միաբանութեան եւ պայմանէ մի խախտեսցիք:

Երրորդ զի որպէս զիս կամեցայք թագաւորել, յետ իմոյ անցմանն իմ օճախիս եւ իմ զաւակիս խիանաթութիւն չանէք, այլ հնազանդ մնայք յաւիտեան:

Եւ զայս Գ (3) բանս նալաթլամայով եւ գրով արձանացուցեալ կնքեսցիք եւ տաջիք ինձ:

Ի՞նչ կասէք: Յանձն կառնո՞ւք թէ՛ ո՞չ»:

Եւ ամենեքեան ի մի բերան գոչեցին. «Այո՛, կամիմք, եւ յանձն առնուիմք եւ հնազանդիմք»: Եւ առժամայն կարդացին զՖաթէն եւ արձակեցանք:

[ԼԶ]

Իսկ ուրբաթի առաւօտին գնացինք վաղ քաջ ի սելամն, եւ ի Ե (5) երրորդ ժամու մուծին զմեզ առաջի իւր: Որ կարգաւ գնացեալ առաջի նորա խոնարհմամբ, գլխոյ ողջունելով անցեալ գնացինք: Եւ ելեալ արտաքս նստանք ի հանգստարանն մեր: Եւ յետ վճարելոյ սելամին ցրուեցան եւ ճեղքալիքիքն: Եւ հրաւիրեաց զխաներն ուտել ճաշ ընդ նմա:

Որ եւ բազում բանք խօսեցաւ ընդ նոսա: Եւ շատ պատճառս յօդելով, եւ զանազան առարկութիւնս ի մեջ բերելով ի բաց ձգէր իւրմէ զմեծութիւն թագաւորութեանն: Եւ ասէր, թէ՛ «Ընտրեցէք ի ձէնջ զայլ ոմն կամ ընտրեցէք զայր մի, որ կարիցէ կառավարել ձեզ եւ զերկիրն: Եւ ձեռ վեր առէք ինձէ եւ թողէք, որ գնամ իմ դղեակն ի Խորասան եւ առանձնանամ, զի այլ ոչ ունիմ կարողութիւն մրցել եւ վանել ի պատերազմունս»:

Եւ շատ անգամ հրաժարէր: Իսկ խաներն ստիպէին, աղաչէին, շողոքորթէին, աղերսէին եւ հաւանեցուցանէին, զի մի թողցէ զնոսա եւ զերկիրն ի ձեռաց իւրոց:

Պատասխանի ետ մեծախելք Վալինամաթն եւ ասաց, թէ «Դուք այսպէս ասէք, բայց ես գիտեմ, զի բազումք ինձանէ պիտամաղ են եղեալ: Եւ իրաւունս ունին, զի բազմաց ապրանս իլեցի, զբազումս մահացուցի, զոմանս կորուսի, եւ յոլովից զոսկին եւ զարծաթն իլեցի, եւ շատ տեղիս աւերեցի, եւ զերկիրս սասանեցուցի եւ աղքատացուցի: Վասն որոյ բաւական է այս չափս: Թող հանգչին մարդիկք գոնէ յայսմ յետէ ի նեղութենէ յայսմանէ»:

Յորմէ պատասխանեցին եւ խաներն, թէ՛ «Այս ճշմարիտ է զոր ասես: Բայց մեծութեան եւ զօրապետութեան հարկաւորութիւնն այն էր: Զի թէ չի լինէ[ի]ր այնպէս արիացեալ ամենայն իրս, ե՞րբ ապա կարելի էր այսքան գործ եւ քաջութիւն

յառաջանալ: Վասն որոյ զնոյն կրկին առնել խնդրենք, որովհետեւ քեզ էտուր Աստուած զգլխաւորութիւն եւ զպետութիւն աշխարհիս: Պարտին զի ամենեքեան ի քեզ եւ բանից քոյ հնազանդին: Եւ թէ արտուղի գնան, պատժոց եւ դատապարտութեան են արժանի: Իսկ այնքիկ, որք հնազանդին քում հրամանի եւ արիանան ի գործս իւրեանց, պատուոյ եւ խալաթ զգենլոյ արժանի լիցին: Զի թէ այնպէս չլինի, աշխարհս ոչ կառավարի»:

Եւ ապա, հաւանեալ եւ ինքն, յանձն առաւ թագաւորել: Եւ կրկին կարդացին զՖաթէն եւ ես՝ զ«Հայր մեղայնե ի լռելեալ»ն, եւ արձակեցանք՝ իւրաքանչիւր տեղիս:

[ԼԵ]

Ապա այսուհետեւ գրեցին զարձանագիրն երկայն եւ Բ (2) թղթապ լայն: Եւ յետ կրկին կրկին սրբագրութեան յորժամ եղեւ ըստ հաճոյիցն սկսան այնուհետեւ կնքել տալ եկելոցն: Իւրաքանչիւր քաղաքաց խանք եւ սուլթանք, միրզէք եւ մերսօֆիք, Ռ (1000) պետք եւ հարիւրապետք, քալանթարք եւ մէլիքներն, այաններն եւ աղաներն շէխիւլամք եւ դազիք ի պարսից եւ հայոց եւ սկսան կնքել զարձանագիրն զայն՝ առնելով սկիզբն ի Խորասանայ եկելոցն եւ Հերաթու, Մաշաթայ, Մազանդարանու եւ այսպէս կարգաւ հասին մինչեւ ցԱտրպատական երկիրն:

Ապա սկսան կարգաւ եւ զԱրարատեանսն հրաւիրել՝ առ ի կնքել զարձանագիրն որ եւ զերիս աւուրս հազի թէ կարացին աւարտել: Եւ կնքեալ մեր ամենեցուն մանաւանդ այնք, զոր նախ անուանեցաք [ի] ԼԵ (35) [զլուխն]՝ ճառին զխօսողս եւ զեօթնից արանց հարցանողաց պատասխանի տուողքն:

Եւ յորժամ կատարեցաւ, ապա սկսանք կրկին ամենայն օր գնալ կարգաւ երրորդ ժամու աւուրն եւ ողջունել զնա որպէս նախ առնեաք:

Իսկ փետրվարի Ժ (10), յորժամ գնացինք ողջունել զնա, ձայնեաց զմեզ առաջի իւր եւ ասաց. «Խալիֆայ Խալիֆայ»: Եւ ես ասացի. «Պէլի Վելինամաթըմ»: Զի պարսիկք ի տեղի «Պույուրե ասելոյն «Պէլիե կասեն»:

Որ եւ ասաց մեծագոր Վելինամաթն. «Պիլտին խապարտար սան սիզէ պէլ տիքտիմ»:

Եւ ես ասացի, թէ «Իխտիար սենին տիր: Շեֆթթըլում մուպարաք օլսուն»:

Եւ առժամայն վազելով եկն եկաց առաջի իւր Փիր Մէհմէտ խանն Հերաթու զձեռս իւր ունելով ի վերա սրտին:

Եւ ասաց վելինամաթն. «Իշտայ պու խան տուր Փիր մէհմէտ խան, Հերաթ խանի: Եախշի քիշիտուր, եախշի եօլայ գետուփ տուր: Սիզին իլէնտէ եախշի եօլայ կէթմէք կերէք տուր: Ինտի սիզտէ օնայ եախշի դուլուխ ելլմէկ կերէկ սուզ, նէթեզին օզումայ ելլտինիզ: Ինտի օղու նապալաթ տուր, սրզ կէարաք օզումայ խապար վերէտուզ: Ինտի սանի Երեւան աղալարուն համիսինուն ուստինայ աղայ էթմիշամ: Սանդայ էխտիպարում վար տուր: Հարկիզ բիր նաշարի իշ օլսայ, պէկինիզայ տէլտուն: Ղուլախ քի ասմասայ Թարվէզէ՝ Իպրահիմ խանայ արզ ելլմէկ կերէկ սուն: Օշաղ քի

Իպրահիմ խան պաշայ ափարմասուն՝ սան Ղալիֆայ, մուրախասուն օգուն գարաք մանայ արգ էլէէտուն»:

Եւ ապա դարձեալ ի կողմն խանին եւ ասաց. «Փիր մահմատ խան, պու քիշիլարու գօրուր սան: Պունլար մանում տուր: Պու խալիֆայ չօք եախշի քիշի տուր: Ուչքիլիսայ պիր եախշի եր տուր: Ինտի սանայ թափշուրիբամ, կէրէք նէտէսայ գուլաք ասասան, եախշի մէհրապանլուխ էլլասան, խաթրն սախլայասան: Պիր էհտիպարլու քիշի տուր օլքեաեայ, բահաթայ վէ տիւանայ մուղիաթ օլուփ տուր: Պու քալանթար տայ եախշի դուլուխ էլէիպ տուր: Պու Երեւանն աղզնայ կէն տուր: Եախշի եօլայ գէտուփ տուր»:

Եւ վասն մէլիք Մկրտումին ասաց. «Պու մէլիքտայ օ ազալքի քօհնայ մէլիքին դարտաշի տուր: Պուտայ եախշի դուլուղ էլէիպ տուր»:

Եւ վասն մէլիք Յակոբջանին ասաց. «Պու մէլիք տայ դալայ տայ իտի օսմանլու իչինտայ, օնընտայ դուլուխի մանայ եթըշմիշ տուր: Իմտի պու քիշիլարի սանայ թափշիբմիշամ պանում տուրլար: Կէրէկ պունլարուն սօզինտան չխմայասան: Հէր գատի մասլահաթ Խալիֆայիլան մունլարիլան էլլեասն: Ղզլպաշլարայ Էրեւան աղալարընայ էհտիպար էլլեմէէսն: Էհտիպարուն մունլարայ օլտուն: Սզի Էրեւանուն աղալարըն ուզարինայ աղայ էթմիշամ: Վիլայէթի ռահաթի օգունուգտան պիլիրամ: Կէրակտուր քի աւատանլըղնայ չալըշասըզ»:

Եւ դարձեալ ասաց. «Գէտն, նէթէքի իշինգ վար, մասլահաթընգ վար, արգայընգ վար, ափարըն միրգայ Մօմինայ, Միրգայ Մէհթիէ համի իշինգի դայիրսունլար, բախամլարնգի եագտունլար, քի սիզի եախունտայ մուրախասս էտէրում»:

Եւ ապա արձակեցանք ի յերեսանցն, շնորհակալելով ի նմանէ: Եւ գոհանալով զԱստուծոյ գնացինք ի բնակութիւնս մեր մեծաւ ուրախութեամբ եւ պարծանօք:

[ԼԸ]

Յետ այնորիկ սկսան փետրվարի Ժ (10) բաժանել զխիլայս, որ է խալաթն:

Նախ՝ եղբօրն իւրում, որ բովանդակ Ատրպատականի աշխարհի, որ է պարսկերէն Ատրպէճան, վերակացու եւ սերտար արար, որ է սարասգէր: ԶՆախչուան, զԵրեւան եւ զբոլոր նահանգն Արարատեան եւ զՎրաց տան ի նա յանձնեաց, որ է պէկլէր պէկի՝ իշխօղ եւ հրամանատու եւ մեծ ի վերա այլոց խաներաց:

Եւ ապա Պապա խանին ետուր խալաթ եւ կարգեաց գնալ ի վերա Խորասանայ ի Հերաթ՝ ի տեղի Փիր-Մահմատ խանին:

Նոյնպէս եւ զԵրեւան ետուր Փիր-Մահմատ խանին եւ խիլայաց:

Եւ այսպէս կարգաւ ամենայն խաներաց ըստ պատուոյ եւ ըստ արժանեացն ետուր խիլայս եւ պատուէրս եւ արձակեաց յերեսացն:

Ապա սկսան եւ այլոց մեծամեծացն խիլայս շնորհել:

Ձի խաներաց ինքն առաջի իւր ետուր զխիլայն, որ էր քուրդիկ զարպաֆ՝ սամուր գրապանաւ, եւ կապայ զարպաֆ եւ չարքազի գօտի պատուական՝ Գ (3), Դ (4), Ե (5) թումանի միոյ գոտոյ գինն: Նոյնպէս՝ եւ մէնտիլն, զոր փաթաթէին ի վերա գթակին:

Ձոր նորաձեւ գթակ մի սահմանեաց ինքն կանխաւ՝ զլուխ գթակին խաչաձեւ, Դ (4) անկիւնի: Եւ զանուն գթակին ասէին Թահմազի:

Եւ ամենեքեան զնոյնաձեւ գթակն դնէին, որպէս եւ ինքն:

Իսկ այլոց՝ ըստ պատուոյ եւ ըստ արժանեացն: Հրաման ետուր պագրկան-պաշուն Հաճի Հիւսէյիսին, որ էր քաշանցի, եւ նա բաժանէր, բայց՝ այսու կերպիւ՝ զի նախ ամենայն քաղաքաց ընտրելոց ի հանդէս եւ ի թիւ մտելոց, որք զդաշնատրութեան զգիրն կնքեցին իւրաքանչիւրոցն զանուանս նոցունց ետուր գրել եւ առաջի իւր ընթեռնուլ: Եւ ինքն հրամայէր, եթէ՝

«Այսինչ մարդոյ այսքան թումանի խալաթ տուէք եւ այնինչ մարդոյ՝ այնքան թումանի», որպէս եւ ինքն կամեցաւ:

Նախ՝ սիահի արարեալ, որ է տէֆտէր, եւ ապա այն դաֆտարին մուճուպովն բաժանէր սանդուխտարն, որ էր պագրկեանպաշին: Սկսեալ ի խորին Խորասանայ եւ ի կողմանց յարեւելից, կարգաւ ամենայն քաղաքաց եկելոց ետուր պարգեւս եւ խիլայս: Խաներաց՝ Ա (1) քուրտիկ, Ա (1) կապայ, Ա (1) գօտի եւ մէկ մէնտիլ, իսկ միրզոց եւ այլոց մեծամեծ կուսակալաց, կողմնապետաց գլխաւորաց՝ Ա (1) զարլու կապայ Ա (1), չէրկեզի գօտի եւ Ա (1) զարլու մէնտիլ:

Այլ եւ յարեւելից կողմանէ եւ հեռաւոր տեղեաց եկելոց ետուր Ա (1)-Ա (1) գերի, քանզի Վրաստանու եօթն հազար գերի էին բերեալ՝ վրացի եւ հայ խառն: Ձկեսն բաժանեաց նոցա. ոմանց՝ կին, ոմանց՝ աղջիկ, ոմանց՝ տղայ: Այլեւ քէտխուտոց եւ աղաներաց Ա (1) Ա (1) թուման խարջուղ, մինչէւ եհաս կարգն [ի]Ատրբէճանու: Նոյնպէս եւ նոցա արար, որպէս եւ գրեցաք: Ապա եհաս կարգն Երեւանու եւ Արարատեան նահանգին: Արար եւ նոցա ըստ նոյն սարասի, բայց ի գերեացն զորս ոչ ետուր:

Եւ փետրվարի ԺԴ (14) օրն շաբաթ Սուրբ Սարգսի տօնին Երեւանոց եւ Նախչուանոց խալաթն ետուր: Նախ՝ զիմ խալաթն հրամայաց վերակացուաց ինձ յղել ի բանակետոյն իմ, որ էր հեռագոյն ի բանակէն եւ ի Վալինամաթի ամարաթէն կէս ժամու ճանապարհ: Այլեւ քալանթարին եւս զհետ իմ խալաթին յղեցին եւ զնորա խալաթն:

Որ էր եւ իմ խալաթն, Ա (1) քուրտիկ զարպաֆ, Ա (1) զառլու կապայ, Ա (1) չէրկեզի գօտի ծանր եւ Ա (1) մանտիլ՝ ազնիւ եւ գունով սեւ, երկայնութիւնն..., Բ (2) եզերքն սպիտակ կլապիտոնաւ՝ մատ մի լայնութիւն կլապիտոնին ծայրէ ի ծայր: Իսկ Բ (2) ծայրքն Ա (1)-Ա (1) թիզ գործովի հինտու բան, զարմանալի տեսողացն: Եւ փաթաթեցին զայն մէնտիլն ի վերա վեղարիս, որպէս զփակեղ, եւ զարն ըստ ծեսի պարսից կէս ելփազէի պէս ի վերա ահեակ կողմանն ծաղկաձեւ կանգնեալ:

Իսկ քալանթարին՝ Ա (1) կապայ, Ա (1) չերկեզի գօտի Ա (1) մէնտիլ: Բայց իմն թանկագին էր եւ յոյժ պատուական:

[ԼԹ]

Եւ ի միւս օրն, որ էր կիրակի, գնացինք ի քէշիկխանայն: Եւ այս քէշիկխանայ ասածներն այն է՝ իբրու լէյլէկ չատրի: Բայց ոչ թէ մասլահաթ ունեցողն կու ժողովի, այլ մեծամեծ խաներն անդ ժողովեալ նստին եւ խալիան քաշելով խօսակցին եւ զբօսնուն ծիծաղական բանիւ, ակն ունելով հրաւիրման Վելինամաթին. եթէ գուցէ խնդրեցի պատրաստ գտանիցին: Որ եւ տարեալ զմեզ անդ նստուցին:

Եւ յորժամ ժողովեցան անդ զգեցեալ խալաթով, որք կայինք իբրու Ճ (100) հոգի՝ աւելի կամ պակաս, եկն ժամ սէլամին:

Եւ յորժամ հասանք ի տեղին որում սովոր էինք ամէն օր խոնարհմամբ գլխոյ ողջունել զինքն, իսկոյն ընթերցաւ մի ոմն ի միրզոցն, որ էր թարվզեցի եւ ազգաւ պարսիկ՝ Ճիհանշահ փատիշահի ցեղէն, Ատրպէճանու վեզիր գոլով:

Զի սովորութիւն է պարսից, մանաւանդ՝ Նատրղուլի Վելինամաթին, որ ամէն քաղաք Գ (3)-Գ (3) մարդ կարգէ ի վերա արքունական կեալուրի:

Առաջնոյն ասեն միրզէ վեքիլ, որ է զապիթ միրիյի հետ իլախայ ունեցողաց վերա, եւ է երիցն մեծ հրամայող եւ ի վեր նստող, քան զմիւս երկուսն: Եւ սա է առնող, տուող եւ դատաստան անող որպէս մեծ տէֆտէրտար: Բայց ոչ առանց միւսոցն զիտութեան, այլ՝ համակամութեամբ:

Երկրորդին ասեն վեզիր, որ է միջինն, եւ ւնի զտէֆտէրն նահանգաց եւ ամենայն եղեալ կէլուրի եւ կիտարի իրատի եւ մասրաֆի:

Եւ զերրորդն ասեն միրսօֆի: Որպէս ասեն, թէ տէֆտէր էմինի, որ զամենայն տէֆտէրներն նա ունի եւ արքունի տէֆտէրին շինողն է: Եւ տեղն ի տեղ գիւղորայքն զպէկլիկ եղած մուլքերն նորա զիտութեամբն է եւ նորա ձեռին:

Վասն որոյ որպէս ի վերոյ ասացի, եթէ Ատրպէճանու, որ է Ատրպատականու, վեզիրն՝ ի Ճիհանշահի ազգէն, եւ ինքն էր բանաստեղծ եւ շուարայ, որ է գուսան: Վասն որոյ, զոր ինչ յոգեալ էր ի վերա քարտիզի, սկսաւ ասել եւ էր այսպէս:

Սիգգէլի պերզեր գեարթ նա՛մի սալթանաթռա տէր Ճիհան,

Խօսրօֆի ատլ, շահի Նատիրղուլի, կիթի սիթան,

Շէր քիրայ պէյու խուտայ եարէս

Շէրքի պէռկէրտէտ էզվէ շէրմէսարէզ

Էլիէմտուրուլլահ փատիշահըմայ Նատիրի գուլլու իրանէս:

Հերպենտէշրէ, քի խուտայի թայալայ եարէս:

Հերպենտէ ազու պերկերտէտ շարմասարէզ:

Միգքէյի պերգար քեարթ նամի սալթանաթրա տէր ճէհան,

Շահի տին, Նա՛ տիրդուլի Սքէնտէրի սահիպդոան:

Փատիշա՛հի մամալիքի Իրա՛ն, զիլլի սուպհան, Նա՛ տիրի տէվրան:

Եւ յետ ասելոյն զայսքան բան բարձր ձայնիւ գոչեաց ասելով «Ֆաթէ՛»: Եւ սկսան ամենեքեան զձեռս ի վեր ունելով անմոռնչ շարժել զշրթունս իւրեանց, իբր թէ զֆաթէն կարդան, բայց ոչ գիտեմ՝ գիտէին կամ ասէին, թէ ոչ: Նոյնպէս եւ ես տարածմամբ ձեռացս ասացի զ«Հայր մեր որ յերկինս է»:

Եւ ի յաւարտն նոքա գերկուսին ձեռս իւրեանց ընդ երեսս տարեալ շօշափեցին զմորուսս իւրեանց, իսկ ես շնորհօքն Քրիստոսի յայտնապէս խաչակնքեցի զդէմս իմ:

Եւ խուս տուեալ ամենեցուն անցեալ գնացին:

Եւ ես սակաւ մի յետ մնացի ի տեղին իմ, ուր կանգնեալ էի, եւ պշուցեալ ընդ երեսս Վալինամաթին հայէի:

Վասն որոյ հայեցեալ ի յիս եւ ասաց. «Հայ խալիֆայ, կեալ պուրեայ»:

Եւ ես վստահացեալ գնացի մերձ ինքեան:

Եւ կրկին ասաց. «Եախուն կեալ, եախուն կեալ»:

Եւ մերձեցայ մերձ ի նա՛ առընթեր իւր, ուր նստեալ էր ի բարձրաւանդակ տախտի:

Որ եւ ասաց կրկին. «Պիլիբսան Խալիֆայ սապահ եօխ օպիրիսի կին սանի մուրախասս էտէրամ»:

Որ եւ ես պատասխանի տուեալ ասացի. «Վալինամաթին օմրի դօվլաթի զիատ օլսուն: Վէ ումարամ պարի խուտատան փարվարտիկէարտան, քի նասըլ ճէնապնզի ֆէթի Իրան կէօրտում, ինչալլահ ֆէթի Ղանտահար վէ ֆէթի Հինտուստան[տ]այ կէօրայիմ»:

<յ> Որ եւ ծիծաղեցաւ ուրախութեամբ. եւ զուարճացեալ բերկրեցաւ եւ ասաց. «Պարիգալլահ Խալիֆայ պարիգալլահ»:

Յետոյ համարձակեալ ասացի. «Պաս շէֆգաթլում արզամզ վար կեարաք տուր քի հապ էտասան»:

Եւ իսկոյն ասաց. «Եախշի տուր տէ ափարն Խալիֆանի միրզէ Մուսին եանընայ, վէ սօյլան հէր նէմէնէ արզասի վար, մէալէիթի, մաթլապի վար տուր դայիրսուն»:

Որ եւ առժամայն էլիադաճլի մի, գոր կան հանապազ առաջէն, եւ են որդիք խաներաց, եւ ի ձեռս իւրեանց՝ չօմախ նախշած, անկեալ առաջի իմ տարաւ զիս միրգէ Մումինի մօտն, որ էր կից Վէլինամաթի ամարաթին եւ ասաց զասացեալսն ի վէլինէմէթէն:

Եւ միրգէն պատասխանեալ ասաց. «Պաշ ուստինա դայիրայիմ: Աղշամ օզ նայիպի կեալսուն, րախամլարի ափարսուն»:

Քանզի նոր էր կարգեալ այս միրգայ Մումինս գրել զրախամ: Ջի յառաջ միրգէ Մէհթին էր րախամներու գրողն, եւ միրգէ Մումինն ունէր զկնիքն եւ էր մուհրտար: Բայց վասն պատճառի իմիք ընկեց յերեսացն զմիրգէ Մէհթին, որ էր այր խիկար եւ խոնարհ, քաղցրաբարոյ, ուշիմամիտ եւ խաթր պահող:

Իսկ այս նորս, որ է միրգայ Մումինս, դեռեւս՝ անտեղեակ շարադրութեան րախամից եւ յոյժ երկչոտ:

Բայց որովհետեւ Բ (2) միրգէք ի միասին բնակին վասն իմ խաթերս զիմ րախամներս միրգէ Մէհթին շարադրեաց ըստ պատշաճի:

[Խ]

Իսկ ես միւս օրն առաւօտին յղեցի զՂալայճի օղլու Ստեփանոս վարդապետն որ էի կարգեալ ճանապարհի աթոռակալ, եւ էր ընդ իս ի բանակն՝ ի Մուղան: Եւ գնացեալ էառ զրախամներն, որ էր Է (7) ռաղամ, եւ եկեալ ուրախութեամբ ետուր ցիս:

Իսկ ի նոյն օրն գնացինք ի սէլամն: Եւ կրկին պատուիրեցեն յետ սէլամին, եթէ՝ «Երեկոյեան պարտիք գալ եւ հանդիպիլ Վէլինէմէթին, որ զձեզ յանձնէ ձեր զապութիւն եւ մուրախասս առնէ»:

Եւ գնացեալ՝ իւրաքանչիւր ի տեղիս իւր, եւ կացաք մինչեւ ցերեկոյն: Եւ իններորդ ժամուն ժողովեցանք ի դուռն Վէլինամաթին. քալանթար Մէլիքջանն եւ մէլիք Յակոբջանն, եւ այլազգեաց քալանթարն՝ Ալիդուլին, եւ այլ քէտխուտէք հայոց եւ մէլիքներն, զի Երեւան Թ (9) մեալ գոլով Թ (9) մէլիք կան այժմ: Թէպէտ հնազանդ են քալանթարին եւ դողան առաջէ, իբրեւ զնոքար, բայց Երեւանայ մէլիքներացն, որք են այսոքիկ. նախ՝ մէլիք Յակոբջանն եւ մէլիք Մկրտումն, Կարբու եւ Ղրխպուլախու, Շոռակալու, Իկտիրու, Գառնու, Ծաղկնայձորու, Գեղարգունոյ, Ապարանու, Շիրակուանու, այլ եւ՝ Երեւանայ Շէյխիսլամն, աղայներն եւ միրգէքն, եւ առեալ զմեզ տարան ի դէմն:

Եւ սկսաւ ասել բանս խրատականս եւ պատուէր պիտոյականս վասն արքունական իրաց, եւ վասն երկրին բարեկեցութեան եւ ռահաթին հանգստեան: Եւ՝ վասն պատերազմական զօրացն, որ նօքար անուանեն, զի են տօնլուխով՝ պատուէր միրգոցն վասն վարձուց նոցին: Եւ՝ վասն դալիմի ձիավարժութեան եւ պատերազմավարժութեան: Նոյնպէս եւ նոցա՝ զձիանս իւրեանց լաւ պահելոյ եւ զանօթս պատերազմի, որ է զրէհն՝ թուրն, ռումբն, միջքի դանակն, վահանն, թէրքէշն՝ որ է նետու աղեղն, զթֆանկն եւ զայլ սոյնպիսիք պատրաստի ունել եւ զլան ստանալ:

Եւ՝ զայլ սոյնպիսիք բազում բանս պատշաճաւորս վասն երկրին պահպանութեան եւ ամենայն իրաց:

Եւ վճար խօսիցն ասաց միրզոնցն, եթէ՝ «ԶԽալիֆայն ձեզ յանձնեմ. զի զոր ինչ կամիցի՝ եթէ գիւղ, եթէ հող եւ եթէ այլ ինչ, զոր պատշաճ է իւրն, քան թէ այլոց՝ իւրն տայք այնպէս, որ ոչ միրիյին վնաս լինի, ոչ՝ իւրն դժուարութիւն: Եւ յորժամ ինքն չկամենայ, ապա այլոց տուէք: Զի գիտէք որ խաթրն պահեմ եւ մէկ եախշի քիշի է: Պիտիք, որ դուք եւս լաւ պահէք զխաթրն եւ այնպէս արարէք, որ չլինի, թէ՛ ձեզանէ ինձ գանգատ գրէ»:

Ինձ եւ ասաց, թէ՛ «Ղալիֆա՛յ, այսուհետեւ հեռանաս ինձանէ եւ ոչ կարես լինել ինձ ձեռնհաս: Վասն որոյ ահա՛ զքեզ յանձնեցի զապիթներաց ձերոց, այսինքն՝ միրզոց: Զոր ինչ մաթլապ որ ունիս դոցա ասես՝ որ կատարեն: Եւ թէ չի լսեն աղաչանացդ, Իբրահիմ խանին արգ արայ՝ (որ է իւր եղբայրն, նստեալ ի Թարվէզ՝ խան եւ սպասալար), եւ նա ինձ ծանուցանէ: Եւ թէ կամիս դու եւս ծանոյ: Քեզ հրաման է: Եւ աղօթող լեր վասն մեր: «Տէ զէթ շինտիտան կերի մուրախասսըն, կէթ Ուչքիլիսայ[այ]»:

Եւ ապա սկսայ եւ ես դրուատեալ գնա եւ օրհնել, եւ լալոտ աչօք ասացի. «Շէֆքէթլում, դու որովհետեւ հեռանաս ի մէնջ, մէք այժմ գիտացաք, որ որք մնալոց եմք: Զի ոչ ոք լինելոց է իբրեւ զքեզ որ գմեզ խնամէ: Վասն որոյ Աստուած ամենակարողն զճանապարհդ բաց եւ աջող անէ եւ միշտ յաղթողս արասցէ ի վեա թշնամեաց քոց: Ապա զայս խնդրեմ ի մեծութենէդ, որ զմուրվաթդ եւ զմուպարաք նազարդ ինձանէ եւ այն մուպարաք թէքքէյէն պակաս չանես»:

Որ եւ կրկին յուսադրեաց ասելով. «Ալամ չաքմայ Խալիֆայ ալամ չաքմայ: Օ թէքէ մանում տուր, սանտայ մանում սան: Կէթ: Պիր խօշճայ քիշի սէն: Կէթ համան տուայ էլէ»:

Եւ ապա շէյխիսլամն եւս համարձակեցաւ եւ ասաց զտուայ մի պարսկերէն գրաբար ի չափ Բ (2) տան սաղմոսի: Եւ ապա ասացեալ զֆաթէն եւ ես՝ զ«Հայր մեղայն», շնորհակալեցայք եւ արձակեցաք յերեսանց եւ գնացաք ի բնակութիւնս մեր:

[ԽԱ]

Իսկ առաւօտուն սկսան ամենեքեանքն Երեւանու եկեալքն՝ Հայք եւ Պարսիկք, տեսանել զպատրաստութիւն չուելոյն: Եւ նախ՝ գնացինք ի միասին Իբրահիմ խանի օթախս: Եւ նա եւս յուսադրեաց զմեզ, ասելով. «Եթէ բան ինչ ուիցիք կամ՝ զոր ինչ դժուար բան որ պատահի, ազդիցէք ինձ ի Թարուէզ, զի կատարեցից. քան զի պատուիրեաց ինձ Վալինամաթն վասն ձեր: Այսուհետեւ անհոգ կացէք: Ինչալահ շէն պահելոց եմք զերկիրն»:

Եւ ապա գնացինք Փիր-Մահմատ խանի օթախն՝ որ էր Երեւանայ խանն: Եւ նա եւս առաւել ումիտվար արար զմեզ, եւ յուսադրեաց եւ ասաց. «Գնացէ՛ք խաղաղութեամբ եւ բարով. եւ հարկիզ ալէմ մի քաշէք, որովհետեւ Վալինամաթն զձեզ մեզ յանձնեաց եւ վասն ձեր պատուիրեաց: Եւ առաւել սէր եւ խնամք ունի ի վերա ձեր: Աստուծով զձեր ամենայն ընկած բանն ըստ հաճոյից ձերոց հոգալոց եմք: Գնացէք բարով: Եւ

ահա իմ կողմանէն Վէլինասաթն նայիպ մի թային արար, որ գնայ Երեւան: Նա գալոց է ընդ ձեզ: Նորա հետ վարվեցէք մինչեւ ցգալն իմ:

Եւ ելեալ անտի գնացաք ի մետաղս մեր: Եւ տեսեալ ամենքեան զպատրաստութիւն իւրեանց, եւ ի միւս առաւօտն չուեցին ամենքեան Երեւանայ եկողքն շէյխիսլամն եւ աղայներն, քալանթար մէլիքն եւ քէտխուտէքն ընդ խանի նայիպին, որ է իբրու միւթեսելիմ, եւ ընդ միրզոցն գնացին Երեւան:

[ԽԲ]

Իսկ յետ գնալոյն նոցա եւ մնացի միայն՝ խեղճ եւ ողորմելի, միայնակ ի մէջ անհուն դաշտին եւ ի մէջ խուղիցն բազմութեան իմ միաբանօքս հանդերձ, որպէս բու աւերակի եւ որպէս ճնճղուկ միայն ի տանիս: Վասն զի գերիք բազում թափեցի ի պարսից գերչաց խորասանցոց, զոմանս թանկագին զոմանս ածանագին եւ զոմանս ձրի բերէին եւ տային ցիս, թէ՛ «Ի տեղիս եւ ի տէարս իւրեանց հասցուր»: Կային եւ կանայք յղիք ի միջի իւրեանց՝ յղիացեալք ի տանց եւ յարանց իւրեանց, քանզի Է (7) ամիս էր գերութիւնք նոցա: Որ եւ ոմանք ծնան ի Մուղան, եւ հրամայեցի Ագուլեաց աւագիբիցու, որ էր ընդ իս՝ տէր Թումայ անուն, որ մկրտեսցէ զերեխայսն ի գետն Եփրատ եւ անուանեսցէ զանունս նոցա Մուղան: Ծնաւ եւ կին մի ի Մեղրի, եւ անուանեցին զանուն նորա Մեղրիկ՝ մինչ տանէին զնոսա Ագուլիս եւ Աստապատ:

Կային եւ աղջկունք, մանկունք եւ տղայք՝ Զ (6), Ը (8) եւ Ժ (10) տարեկան եւ այլք մեծագոյն տղայքն՝ ԺԵ (15) եւ Ի (20) տարեկան, աւելի կամ պակաս: Լուայ որք բազումք փախեան, օգնականութեամբն Աստուծոյ, եւ զերծան: Եւ Գ (3) անգամ ջորօք եւ ուղտօք, մէկ մէկ ի միաբանից իմոց վերակացու եղեալ ի վերա նոցա, յղեցի. նախ՝ յորժամ ուղտէրն տարան ըղտաբանք ի յէջմիածին, քանզի այլ ոչ էր մեզ պիտոյ: Ընդ նոսա գնացին դաս մի:

Իսկ զայլս ի յԱստապատ եւ Ագուլիս առաքեցի, վասն զի էր սղութիւն եւ նուագութիւն հացի, որ եւ իմ ջորօքս հասուցանէին ի Դուզախն: Եւ գրեցի նոցա, զի նոքա հասուցանիցեն ի յԱստապատ եւ Ագուլիս, վասն զի էր անդ Ներսէս կաթողիկոսն Աղուանից Գանձասարու եւ, զոր ինչ գրէի, վաղվաղակի տայր կատարումն:

Եւ անտի բարձեալ զգրաստքն մեր ալիւր եւ գարի, եւ այլ հարկաւոր խուրակք եւ դառնային անդրէն առ մեզ, վասն զի ոչ գտանիւր հաց եւ ցորեան ի բանակն: Եւ թէպէտ թային տային մեզ, բայց աւուրն, յորում մուրախաս արար զմեզ, կտրեցին զթայինն: Եւ ոչ եթէ միայն ի Մուղան էր նուագութիւն հացի, այլ՝ ամենայն տեղիս Թարվիզու եւ այսր. եւ Տուզախ, ի Կէնճէ, ի Ղազախ, ի Լօռի, ի Վրաց տուն, ի Գեղամայ ծովն եզերեայքն, ի Ծաղկնուձորն, ի Ղափան, ի Նախչուան եւ Երեւան: Այս գրեալ նահանգներն օսման օխասին Ա (1)-Ա (1) շահի ցորեան, եւ այն եւս ոչ գտանիւր:

Որ եւ մէք ի Մուղան՝ ի պակասել հացին եւ ալիւրին, զոր բերեալ էաք ի սուրբ Էջմիածնայ, շաբաթ մի եւ այլ աւելի խարշեալ եւ խանձեալ ցորեան կերանք: Եւ վասն այս պատճառի աստ եւ անդ բաժանէին զագատեցեալ գերիքն:

Որ եւ Գ (3) անգամ Ա (1) - Ա (1) պօլուկ յղեցի: Նախ՝ ընդ ուղտոցն յղեցի պօլուկ մի: Վերակացու եղի զշաթիր Մաղաքիայն եւ Բ (2) սայիք, որք եկեալք էին յԵրեւանայ եւ յԷջմիածնայ:

Երկրորդ անգամ դրկեցի պօլուկ մի գերի, վերակացու՝ աստապատցի ամբարտար Սարգիս վարդապետն եւ Հնձուց վանից Եղիայ վարդապետն՝ որ տարին ի Տուգախ ընդ մեր ջորոցն: Եւ գրեցի Գանձասարու կաթողիկոսին, զի աւանակաւ եւ կամ եզամբ հնարիցէ եւ յղիցէ մինչեւ ցԱգուլիս, եւ զմեր ջորիքն խորակ բարձեալ դարձուցէ զմեզ Եղիայ վարդապետն, եւ Սարգիս վարդապետն գնասցէ ընդ գերեացն:

Եւ այս միջոցս, մինչ գնային ի Տուգախ, եղեւ բաժանումն խիլային եւ հրաման մեզ՝ գնալ յԵրեւան, զի Ե (5) աւուր ճանապարհ է Տուգախին ի Մուղանու:

Այլ եւ զոմանս ի ջորոցն յղեալ էի ի Շամախի ընդ Տաթևու Մկրտիչ վարդապետին Ղափանցոյ, զի բերցէ եւ նա խորակ մեզ եւ անասնոցն, զի յետի օրերն թանկացաւ ցորեանն եւ գարին ի Մուղան: Եւ եղեւ Թարվիզի լիտրն Ա (1) զօլաթա եւ Ժ (10) թիմին որ է ԹՃ (900) դրամ:

Եւ ի փետրվարի ԻԱ (21) եկն Մկրտիչ վարդապետն՝ բարձեալ Դ (4) ջօրօք ալիւր, եփած հաց, գարի եւ գինի, ունելով ընդ իւր եւ զԻսրայէլ վարդապետն, Մեսարու վանից Բ (2) քահանայք եւ Ե (5)-Զ (6) իշխանք: Որում խնդիրք ուզէին ի մէնջ վասն Բ (2) իրաց:

Մի՝ վասն ճգիւէին, զոր շատ պահանջէին, խնդրեցին՝ ըստ առաջի սահմանին. տնով մարդու Գ (3) դուռուշ եւ ազապ տղայոց դուռուշ եւ կէս:

Այլ եւ՝ վասն բնակութեան, զի զՇամախին աւերեալ էր եւ քակեալ Վալինամաթն, յորժամ էառ՝ յառաջ քան զգալն ի Կէնճէ, եւ Ը (8) ժամու ճանապարհ հեռու ի Շամախուցն հողէ բերդ մի շինեալ, հրամայեաց զմնացեալ շամախեցիքն անդ բնակեցուցանել: Եւ զի էր օդն ապականեալ, եւ տեղն՝ շողային եւ ջուրն՝ պակաս եւ տաճկունք, որք են լակզիք եւ սուննիք, վշտացուցանէին եւ նեղացուցանէին զտառապեալսն, այսինքն՝ զազգն մեր, վասն որոյ խնդրեցին բազում անգամ կրկին բնակիլ ի աւերեալ Շամախու քաղաքն, որ եւ բարկացեալ իսպառ քանդեաց: Վասն որոյ անճարացեալ եկին առ իս աղերս:

Որ եւ ես սրտապնդեալ արգ արարի մեծի Վալինամաթին եւ խնդրեցի ի նմանէ տալ հրաման՝ շամախեցի հայոց արտաքոյ նոր շինած բերդին, ժամու մի ճանապարհ հեռի ի բերդէն, ի տեղի մի վայելուչ, զոր նոքա խնդրեցին, զի շինեացեն վասն իւրեանց բնակութիւն, եւ՝ հող ըստ պիտոյից զի տնկեացեն այգիս եւ արասցեն արտս: Այլ եւ՝ ի գետոյն, զոր գտանիւր անդ մերձ, առու մի ջուր, զի առոգանիցի գեղն եւ արտորայքն եւ այգիքն իւրեանց: Այլեւ՝ շինելոյ եկեղեցի մի, զի անհնար է հայոց ազգին առանց եկեղեցիւոյ բնակիլ ի տեղի մի՝ թեւ դրախտ իցէ: Եւ՝ վասն ճիզիւէին, եւ այլազգիքն զիւրեանք մի նեղացուցանեն եւ մի խ[ն]ւիցեն: Եւ առժամայն շնորհօքն Աստուծայ քաղցրացաւ սիրտն, եւ զիջաւ ի խնդիրս իմ:

Եւ վաղվաղակի շնորհեաց գրախաւսան՝ ընդարձակ բանիք գրեալ զպուրութիւնսն,
առաւել քան զինդիրն իմ: Յորմէ առեալ գնացին մեծաւ ուրախութեամբ եւ
շնորհակալութեամբ, օրհնելով զԱստուած:

Իսկ ի Տուգախ գնացող Եղիայ վարդապետն եկաւ փետրվարի ԻԲ (22) օրն կիրակի:
Եւ ի նոյն գիշերն գողացան զՂուլայ ձիակն իմ եւ ածին ինձ տրտմութիւն մեծ, զի էր
յոյժ հանդարտ եւ հաւասարագնաց ձի՝ ըստ իմում սրտի:

Եւ կրկին թափեցի ի գերեացն, որքան որ կարողացաւ: Եւ կարացի հնարել եւ
գտանել՝ փոխ ըստակ առի եւ տուի զին գերեացն: Եւ այն էր մեծ փորձութիւն, զի
հետիոտս ոչ կարէին գնալ, եւ ըստ բաւականին գրաստ ոչ գտանիր:

[ԽԳ]

Եւ ապա երկուշաբթի, որ էր փետրվարի ԻԳ (23), չուեցի ի Մուղանու գնալ ի
Տուգախ: Եւ անցեալ զՃիսիրն Երասխայ Զ (6) օրն հասայ ի Տող անուն գեղ: Էր անդ
եւ Ներսէս կաթողիկոսն Գանձասարու եւ Աղուանից, մնալով զալստեան իմոյ:

Բայց յորժամ չուեցի ի Մուղանու, թողի անդ զԱգուլեաց, աւագերէց՝ Տէր Թուման
անուն՝ վասն բախամից, զոր կրկին մտածեցի եւ հարկաւոր պիտոյացու:

Եւ դեռեւս չէր եղեալ ճուլուսն, եւ չէր բարձրացեալ ի գահն կայսերական
Վելինամաթն: Եւ թէպէտ ամենայն ինչ պատրաստ էր, բայց վասն Բ (2) ուց
պատճառաց կախ էր մնացեալ ճուլուսն:

Նախ՝ որ կնիքն չէր փորեալ, եւ դրամի սիգքէն դեռեւս չէր աւարտեալ:

Եւ երկրորդ՝ աստղաբաշխքն իւր քննէին եւ ասէին, թէ «Լուսնոյ ԻԵ (25)-ին պարտ է
եւ վայել է լինիլ ճուլուսին, զի այն օրն շնորհաւոր է»:

Եւ վասն այսոց պատճառաց յամեցաւ: Եւ ես ոչ կարացի մնալ մինչեւ ցօրն
ճուլուսին: Նախ՝ զի ձանձրացեալ էի սակս շատ կենալոյս ի Մուղան, երկրորդ՝ զի չէ
կարգ յետ մուրախաս լինելոյն ի Վալինամաթէն մնալ անդ, զի ընդդէմ երեւի
հրամանաց նորա:

Այլ յորժամ եկին գրաստքն՝ ջորիքն եւ ձիանքն, աճապարեցի գնալ: Եւ մինչ կամէի
անցանել զՃիսիրն, ահա տեսի՝ զի եւ օսմանցոց էլչին՝ Կենճ-Ալի փաշայն ի նոյն
ժամն գայր ի Վելինամաթին քովէն իր ալայովն եւ զգեցեալ խալաթովն, որ էր ծանր
զարպաֆէ պալափուշ պատուական սամուրով, գաբանցիայի ձեւ մեծ կախ
եախայով՝ ըստ ծիսի պարսից: Եւ մինչ երթայր ի Ճիսիրն եւ ես զկնի եւ հասանք
յեզրն Երասխայ՝ ի գլուխ Ճիսիրին: Որ եւ գտեղի առի անդ, մինչեւ էանց էլչին իւր
դախումովն, քանզի ԳՃ (300) մարդ ունէր ընդ իւր:

Ապա անցի եւ ես: Եւ գնացեալ Բ (2) ժամու ճանապարհ իջեւանեցանք ի խոտաւէտ
վայրի մի բացօթեայ, եւ զի խոտն հասեալ կայր, որպէս ի Հոռոմաց տունն ապրիլի
ամսոյն:

Եւ ի միւս օրն, որ էր երեքշաբթի եւ փետրվարի ԻԴ (24), չուեաց եւ էլչին. ի Մուղանու ճանապարհ արարեալ ի Կէնճու եւ Լոռու նահանգովն, եւ Ղազախու անցեալ ի Ղարս եւ եհաս ի Թեոդուպօլիս ունելով ընդ իւր եւ Ապտըլ-Պաղի խանն՝ Վալինամաթին կողմանէն էլչի եւ ընծայատար սուլթան Մահմուտին, եւ մեհմանտար զբարեկամ եւ զճանօթն իմ զՔարիմ բէկն:

Իսկ նոյն շաբաթն եւ առաջիկայ հինգշաբթին, որ էր փետրվարի ԻԶ (26) եւ լուսնոյ ԻԵ (25), եղև ճուլուսն: Եւ պատմեաց ինձ տէր Թումայն Ազուլեաց աւագերէցն, զոր ինչ ետես աչօքն եւ գրեաց ի քարտիզի ըստ պատուիրելոյն իմոյ: Քանզի էր ի վրանն րախամ գրող միրզէ Մէհթուն եւ Մուսիմին, որք էին կից օթախի Վելինամեթին: Չոր ինչ արարողութիւն առնէին, նա աչօք տեսանէր եւ պատմեաց այսպէս:

Յորժամ եհաս օրն այն հինգշաբթի, Ե (5) երրորդ ժամու, քանզի օր մի առաջ զմեծ գորդին իւր՝ զԳիզադուլի խանն զղեաց ի Խորասան բագում պատրաստութեամբ՝ լինիլ խան եւ պահել զկողմանս զայն եւ զայլ ոմանս ի յայլ տեղիս, եւ ի վաղիվն՝ օրն հինգշաբթի, կայսերացաւ այսպէս:

[ԽԴ]

Յորժամ եհաս օրն ճուլուսին, որ էր փետրվարի ԻԶ (26) եւ լուսնոյ ԻԵ (25) հինգշաբթի, Ե (5) երրորդ ժամու աւուրն ժողովեցան անդ մնացեալ խաներն ի յամարաթ Վելինամաթին: Եւ եղին ի գլուխ նորա սաղաւարտանման թագ մի ոսկեղէն՝ կազմեալ եւ ընդելուզեալ պատուական եւ անգիւտ քարամբ եւ մեծագին մարգարտովք, զարմանալի տեսողացն: Չոր առեալ միրզէ Զաքին ի ձեռն եւ եղիր ի գլուխ Վելինամաթին:

Եւ ապա սկսան աղօթել ի վերա ծնկաց իւրեանց, միայն մուղրի մի կանգնած կայր ի վերա ոտից, որ էր մուլայպաշին, եւ անունն էր միրզէ Ասքեր ի Ղազախնցի, եւ կարդայր զտուայն: Եւ պատրաստի եղեալ խաներն՝ ի վերա ծնկաց զձեռ ի վեր ունելով, մինչեւ աւարտեաց զովայն, այսինքն՝ զաղօթն, մուղրին այն, որ կանգնեալ էր ի վերա ոտից՝ ի չափ ողորմեայի մի: Եւ ապա ասացեալ զՖաթէն երկիրպագին ի վերա երեսաց իւրեանց: Եւ էլին նստան՝ իւրաքանչիւր ի տեղ իւր՝ ըստ կարգի եւ ըստ պատ[ո]ւոյ արժանեացն իւրեանց:

Եւ սկսան պատուել զբազմեալսն: Նախ՝ մատուցին ոսկի կուլապտաներաւ, կուլապ՝ որ Բ (2) կուլապտան համակ ոսկի եւ Ա (1) կուլապտան՝ ոսկի եւ պատուական ակամբ զարդարեալ:

Եւ զկնի կուլապին բերին զոսկեղէն բուրվառս, որ են ըստ դէնի իւրեանց պուխուրտանք, զորոց զկերպն ասացեալ եմ ի ԼԳ (33) գլխին, զոր արարին Պայրամին առաջին օրն. նմանապէս՝ եւ այժմ, եւ դեռ եւս՝ աւելի, քան զայն, զի աստանօր Գ (3) ոսկի բուրվառ եւ Գ (3) արծաթի էր:

Եւ զկնի՝ ոսկեղինաւ բաժակաւ շէքեր շէրպէթի: Եւ էր պատրաստութիւն շէրպէթին այսպէս: Նախ մեծ ոսկի սինի մի՝ լայնութիւնն հէլէպի ու կէս, եւ սինոյս մեծութեան պատշաճ ոսկի պատեայ մի եղեալ ի մէջ սինոյն՝ լցեալ շարպաթով եւ ի վերա ռեհանի հունդ բանեալ: Այլ եւ մէկ ոսկի թունկի զարդարեալ պատուական եւ

մեծամեծ, անգիւտ եւ անգին քարամբ՝ հիացումն տեսողաց, որք ասէին, թէ արժէր ԵՃ (500) թուման, որ կանէ ԲՃ (200) քիսա, եւ զկերպն թունկուն յիշեալ ի ԼԳ (33) գլուխն: Եւ բաց յայնմանէ՝ զԶ (6) ոսկի թունկի եւ Բ (2) կուլապտան մարգարտով ընդելուզեալ. այլ եւ՝ Ժ (10) հատ ոսկէ սկուտեղ, ունելով ի միջի Է (7)-Է (7) թաս, որպէս յիշեալ եմ զկերպն ի ճառին ԼԳ (33): Եւ որչափ ոսկեղէն անօթք էին, նոյնչափ այլ արծաթեայք կային:

Եւ այնպէս կարգաւ նախ զկուլապն՝ ետուն իւրաքանչիւրոցն ոսկեղինաւ ոսկեղէն կուլապտաներաւ: Եւ ապա՝ պուխուրտանք ոսկեղէնք բուրելով զանուշահոտութիւնն: Ջկնի այնորիկ ի ոսկեղէն սինոյն միջի եղեալ ոսկի պատիայէն լցին զականկուռ ոսկի թունկին. եւ ապա՝ զմիւս ոսկեղէն թունկիքն նոյնպէս եւ՝ զարծաթեայ թունկիքն: Եւ ապա ոսկի թունկոցն լցուցին զոսկի թասերն, որ էր ի վերա պատուանդանաց, եւ բաժանեցին նստող խաներացն: Իսկ արծաթեայ թունկովք բաժանեցին ի վերա ոտից կացելոց, եւ պուխուրտանք միշտ շրջագայելն՝ մինչեւ ամենեքեանքն ըմպեցին:

Եւ ապա կրկին երկիր պագին նորընծայ կայսերն եւ ելեալ գնացին՝ իւրաքանչիւր տեղիս:

Իսկ յետ գնալոյն խաներացն ապա եկին ի մէջ երգեցիկք եւ գուսանք՝ մանկունք եւ աղջկունք փոքերք: Եւ սկսան երգել, եւ ի գործ ածել զերաժշտականաց գործիքն եւ պարել՝ պարաւոր մանկունքն մինչեւ ցկէս ժամ:

Եւ կայր յայնժամ մերձ կայսերն իւր եղբայրն՝ Իբրահիմ խանն, եւ ապա՝ իւր եղբոր որդին՝ Ալիդուլի պէկն, եւ իւր պզտի որդին՝ Մուրդուգայ միրզէն, միրզէ Ջաքին, Թահմազի վէքիլ խանն եւ մայարպաշին, որ է սահապայարն, եւ այլ իւրայինքն՝ կանգնեալ ի վերա ոտից:

Եւ յետ կէս ժամու վճարեցաւ խաղն եւ պարն, երաժշտութիւնք եւ նուագարանքն, եւ ցրուեցան՝ իւրաքանչիւր տեղիս:

Եւ յետ Բ (2) ուց ժամուց ի բաց եղ զոսկի թագն ի գլխոյն եւ եղիր ի գլուխն զառաջի Թահմազ գդակն՝ քառակուսի խաչաձեւ, ի գլուխն: Եւ ի վերա՝ փակեղ շալէ սպիտակ եւ յոյժ բարակ Բ (2) ծայրն գործովի նաղշուն, եւ եզերքն կախեալ Բ (2) ծայրն փակեղին ի Բ (2) ականջացն վերա Դ (4)-Դ (4) մատ կախ, զոր միշտ այնպէս ունի ի գլուխն:

[ԽԵ]

Եւ ի նոյն օրն ճուլուսին զիւր վէքիլխարճն, զոր Աղայ Չաման ասեն, արար մուհրտար, որ էր վրացի արգէն թուրքացած:

Եւ միրզէ Մոմինն կարգեաց ի վերա թախամներաց գրելու այլ եւ՝ ի գրողաց սրբագրող, որպէս ռէյիզ:

ՄՃԻԹարեաց եւս գնախկին բախամ գրող զմիրգէ Մէհտին, գոր ընկեցեալ էր աչացն վասն պատճառի իմիք: Եւ կարգեաց պատմաբան՝ գրել զպատմութիւն եղելոց իրաց եւ վասն թագաւորելոյն իւր:

Զմայարպաշուփունն, որ է սահապայար, կրկին նորեց ի վերա առաջի մայարպաշուն, զի եբեր նոր կտրած ոսկի նոր սիգէյով, Բ (2) քիսով եդ առաջի Վելինամաթին որ բաժանեաց պատրաստ եղեալ խաներացն եւ խիլայեաց զերկոսեանսն՝ զմուհրտարն եւ զմայարպաշին:

Յետ այնորիկ սկսան գնադարեքն ի գործ ածել՝ որ է պարսից մէհտարխանայն: Եւ է այս. ինչ գունայք, որպէս օսմանցոց, բայց եղանակն այլ իմն եւ տապլպագեր, որ է սատէ նադարայք՝ ջուխտ ջուխտ, այլեւ՝ երեսուն քեարանայք, որք են պոռուզան: Այլ ոչ են ծալովի, իբրեւ զպօռուզանսն օսմանցոց, եւ ոչ՝ ձայնք նման պօռուզանի ձայնին, այլ՝ ուղիղ երկայն Գ (3) կամ Դ (4) հալեպի, մի ծայրն նեղ, որում է ի բերան փչողին եւ միւս ծայրն լայն թգաչափ եւ այլ աւելի՝ նման պօռուին, որք կան ի լաթինացոց նաւսն, եւ խօսին ընդ մի միմեանս ի վերա ծովու ի հեռաստանէ:

Եւ այսպէս զերիս տիւս եւ զերիս գիշերս ածէին անդադար եւ գոչեցուցանէին զմեխթարխանայսն: Եւ ապա վերջացուցին:

Բայց այս ամենայն եւ ճուլուսն եւ եղեւ յետ գնալոյն էլչի Կէնճ-Ալի փաշային: Եւ չուեցի երկուշաբթի: Եւ Կէնճ-Ալի փաշայն չուեաց երեքշաբթի եւ մեծ որդին Վելինամաթին Բիգայդուլի խանն գնաց ի Խորասան չորեքշաբթի: Եւ ճուլուսն եղեւ հինգշաբթի:

Եւ այսպէս կատարեցաւ գործն ինքնակալութեան եւ կայսերութեան: Եւ այս է գործ եւ արարողութիւն օրհնութեան եւ իբրեւ օծումն թագաւորութեան Պարսից՝ ըստ ծիսի իւրեանց:

Զոր Տէր Աստուած խաղաղութեամբ եւ երկար կենօք պահեսցէ եւ սիրտն եւ դիտաւորութիւնն միշտ քաղցր պահեսցէ ի վերա աշխարհի մանաւանդ ի վերա տառապեալ ազգիս Հայոց: Ամէն:

[ԽԶ]

Իսկ սահմանադրութիւն եւ կարգ զօրաց, եւ արարողութիւնք սպասաւորացն են այսպէս: Իսկ յորժամ մեծագոր Վալինամաթն ելանէ ի ներսէն ի դիւան, չաւուշք, որք են թուով Լ (30) կանգնեալք ի դիմացն ի բացեայ ի չափ կէս քարընկեցի եւ բարձր ձայնիւ գոչեն, ասելով. «Պիսամիլահի ռահման ռահիմ, իլահի իլահի մուտամի տուայի մի: Տօլվաթին դայիմ օլսուն: Տօսուն տօստ օլսուն, դուշմանն տա տօստ օլսուն: Պէհիրմաթի սիյիտէլմուրսէլին, սէլլի էլայ»:

Իսկ յորժամ կամի ձիաւորիլ ասեն. «Վէ շէմսէ վէ էլլի վէ նիհար էլմ ուլ գուկիլահի վահատ ալզահար»:

Երբեմն ասեն եւ զայս. «Փահ, փահ սատեթի, շաֆաղաթի, ինամլի, ատիլ խանըմ, մուտամի տուայ մի: Տօլվաթին դայիմ օլտուն: Տօսուն տօստ օլտուն, դուշմանն տա տօստ օլտուն: Բեհուրմաթի սէյիտէլմուրսէլին, սէլլի էլայ»:

Այլ եւ երբեմն ասեն. «Եաշայ սուլթանըմ, եաշայ պաշտան պաշայ, մուտամի տուայմի, տօլվաթին պաշտան պաշայ: Տօսուն տօստ օլտուն, դուշմանն տայ տօստ օլտուն, պէհիրմէթի սէյիտէլմուրսալին սէլլի էլայ»:

Ունին եւս չաուշք կանանչ դաուլիք եւ ի վերա սեւ փոշի փաթաթած եւ հարեալ ի վերա ճակատին թէպուր, եւ թէպուրի տակն՝ ի վեր քան զսարուին, մեծ խնձորի չափ արծաթէ գունդ մի եւ ի ձեռս արծաթեայ չօյէն, որպէս օսմանցոց:

Այլ եւ՝ համաշայ քէշիկք, որք են մշտապահք՝ ի տըւէ եւ ի գիշերի, են ՁՌ (6000), զի ԲՌ (2000)ք ունին զկարգ մի օր, եւ ապա՝ արձակեալք: Գան ի կարգ նոցունց պահպանութեան միւս ԲՌ (2000)ք: Եւ նոքա եւս պահեալք տիւ մի եւ գիշեր մի, ապա գան եւ միւս ԲՌ (2000)ք: Եւ այսպէս ՁՌ (6000)ք Գ (3) օր մի անգամ գան ի պահպանութիւնս իւրեանց արտաքոյ օթախի Վալինամաթին՝ ի բացեայ քարընկէց մի պարսպին: Ամէն Ժ (10) իւր Ժ (10) նապետօքն ի մի խուղ որոյ Ե (5) մրաբին, Ե (5) ի կանգուն կան եւ շրջագային շուրջ զխուղիւն իւրեանց: Եւ բազում անգամ [յ]եղակարծ ժամու ելեալ ինքն եւ փորձէ զնոսա: Եւ թէ գտանէ զամենեսեանսն, այսինքն՝ զԺ (10) եսինսն ննջեցեալ, ապա հրաման տայ ըմբռնել զնոսա եւ ի կենաց բառնալ: Յորմէ ահիւ մեծաւ եւ սարսափմամբ կան միշտ՝ դողալով ի պահպանութիւն իւրեանց:

Այլ եւ ունի ԳՃ (300) չանտաուլ, ԳՃ (300) նասախչի, ԳՃ (300) էլիադաճլի, եւ Ռ (1000) հոզի եւս: Սոքա են իւրեանց Ճ (100) ապետաւ Ժ (10) նապետաւ:

Եւ ռոճիկ սոցա է հազարապետին՝ Ճ (100) թուման տարին, Ճ (100) ապետին՝ ԼՁ (36) թուման, Ժ (10) նապետին՝ ԺԵ (15) թուման, իսկ թապունի սոցա՝ ԺԲ (12)-ԺԲ (12) թուման, որ ամենայն գիշեր պահողք են Վալինամաթին:

Այլ եւ ձիաւոր զօրք, որքան կան, ի Վալինամաթէն առնուն զձին: Եւ որքան սատկին ձիանքն, բերեն զտամդայն, որ կան ի վերա սաղրուոյն, եւ զպոչն՝ նշան, ձիանց վերակացուացն, որք են քեաթիպք եւ գրողք սատակեալ ձիանցն եւ նոր տուելոցն եւ տան զթէսկիրէ իմն գրեալ եւ կնքեալ ի ձեռս իւրեանց, որ գնացեալ առնուն զայլ ձի ի տեղի սատակելոյն: Եւ թէ օրն Ա (1) ձի սատկացնէ այրն, կրկին անտրտունջ կուտան: Բայց խիստ անողորմ վարեն զձիանքն, զի, եթէ կամիցին, Ի (20) եւ ԻԵ (25) ժամ ի օրն ճանապարհ կարեն վարել: Այլ եւ միշտ վարժումն ձիաւորաց եւ հետեւակաց անխափան:

Են եւ բազումք ի զօրացն գրեխաւորք՝ ոմանք հիւսեալ գրեխք, ոմանք Բ (2) տախտակ. մինն՝ ի կուրծքն, եւ մինն՝ ի քամակն, եւ ոմանք՝ Դ (4) տախտակ ի ներքոյ թելին՝ աջ եւ ահեակ: Եւ թֆանկ [ք] մեծամեծ՝ ըստ նախկին գրեցելոյ: Եւ մեծամեծ վեղնայք, որ Ա (1) ի նոցանէ առնու օխայ մի պարութ եւ այլ աւելի: Եւ ամենէքեան Բ (2) վեղնէ կախեն ի մէջքն:

Եւ թէ խստին, կարեն գօր մի ընդ դաշտ եւ ընդ ձոր, եւ գառ ի վեր քարաժեռս լերանց եւ ընդ գառ ի վայր իբրեւ զկաքաւս ընթանալ: Եւ խոնջ եւ տրտունջ բնաւ ոչ գիտեն, են եւ երբեմն զապառաժուտ անցուկ տեղիս զապառաժն հատանեն եւ զհողն պեղեն նոյնպէս եւ զձիւնն: Իբրեւ ոչ աշխատեալ բնաւ մտանեն ի պատերազմ ընդ թշնամիս իւրեանց եւ մարտնչին արիապէս եւ յաղթեն: Զի թեպէտ ԿՌ (60000) լսի թիւ ռոճկաւորացն զօրաց, բայց, թէ կամեսցի, Բ (2) եւ Գ (3) այնքան կարէ ժողովել ի սակաւ աւուրս կարողութեամբն Աստուծոյ:

[ԽԵ]

Իսկ իբրեւ չուեցի ի Մուղանու փետրվարի ԻԳ (23), եկի ի Տուգախ՝ ի գիւղն Տող: Անդ էր եւ Աղուանից կաթողիկոսն, որում անունն էր Ներսէս՝ այր խոհեմ եւ քաղցրաբարոյ, մնայր գալստեան իմոյ: Եւ թեպէտ սէր արարեալ էաք ընդ միմեանս, բայց դեռես ընդ միմեանս ոչ էինք տեսեալ: Այլ եւ ըստ խնդրոյ նորա, մինչ ի Մուղան էի, արգ արարի Վալինամաթին, եթէ՝ «Կէնճէու եւ Գանձասարաւու տանն Աղուանից, եւ Շամախու, Շրվանու ինձ փոխանորդ մի խալիֆայ անուամբ եղեալ եմ, զի կառավարեսցէ զվանորայս եւ զեկեղեցիս՝ հանդերձ ժողովրդօք: Վասնզի հեռու է ինձ այս երկիրս, եւ չեմ ձեռնահաս, եւ ոչխարն առանց հովուի ոչ կարէ լինիլ: Եւ Կէնճէու խաներն եւ այլ զապիթներն միշտ շամաթայ շլթաղ անելով ոչ տան թոյլ հանգիստ մնալոյ, այլ միշտ կեղեքեն եւ կողոպտեն. վասն որոյ խնդրի ի մեծութենէդ որ այսմ հետէ ոչ խան ոչ սուլթան կամ զապութ նորա հետ բան չունենան, զի իմ վեքիլ եւ նայիպ է: Այլ թէ խօսք եւ զրոյց ունին, ընդ իս տեսցեն»: Որ եւ շնորհեաց ինձ զրախամն եւ ես տուի Ներսէս կաթողիկոսին: Վասն որոյ ուրախացեալ յոյժ զմեծ բարեկենդանն ի միասին արարաք ի Տող եւ ի Հատրութ: Եւ զաղուհացից սկիզբն երկուշաբթի չուեցի ի Հատրութ գեղէ:

Զի թեպէտ Խաչէնու, եւ Վերէնս[է]ու, եւ Աւետարանոցի մէլիքներն եկին ի տեսութիւն ինձ ընծայիւք եւ պարգևօք, եւ թախանձեցուցին հանդիպիլ եւ նահանգս նոցա, եւ ոչ կամեցայ, զի ի միջի յոյժ սղութիւն եւ պակասութիւն էր հացի եւ գարու եւ ընդ իս մարդ եւ անասուն բազումք: Եւ երկրորդ, զի ցանկայր անձն իմ եւ փութայր շուտով ի տուն հասանիլ եւ հանգչիլ, զի ձանձրացեալ էի ի շրջագայութենէ եւ ի ցրտոյ: Մանաւանդ զի հոտոտելիքս եւ մին ականջս խափանեալ էր, եւ կայի ի տարակուսի:

Վասն որոյ աճապարեցի եւ եկի ի գիւղն ի Չորգեղն, եւ անտի՝ ի Պնածոր գիւղ, անտի՝ ի Ղօռչիպէկի օպայն, որ էր փիսիանցի, եւ անտի ի Խնծորեկ, որ է ի մէջ քարաժեռ լերանց մեծամեծաց եւ ունի անբաւ բարձրութիւն: Եւ նեղանցուկ ճանապարհաւ իջանք ի մէջ ձորոյն եւ տեսանք հիանալի բան՝ եւ զգեղն թողեալ էին, որ էր ի մէջ ձորոյն, վասն ահի օսմանցոց եւ դառայջօշուոց քրթերոյն եւ ի բարձրբերձ տեղիս այս կողմն եւ այն կողմն ձորոյն դեմ յանդիման միմեանց փորեալ յապառաժ վեմս քարայր, որք են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւր տան բնակութեան շինեալ բնակէին:

Եւ այն իսկ էր զարմանք, որ կաշէ փոկով ելանէին եւ իջանէին կանայք զտղայս ստնդիայս կապեալ ի վերա ողին իւրեանց, նոյնպէս եւ զսափորս ջրոյ ի այլոց հարկաւոր իրաց: Եւ այնպէս փոկով ելանէին ի վեր եւ մտանէին ի բարձրագոյն որջս

վիմաց: Եւ քաշէին զփոկէ առաստանն ի վեր որ այլ մարդ ոչ կարէր մտանել: Իսկ տունք նոցա քանդեալք էին ի զօրաց օսմանցոց եւ ի գող աւազակ քրտաց դառայջօղուոց:

Նախ կային ԵՃ (500) տուն ի Խնծորէկ գեղն բայց այժմ սակաւացեալք էին: Ջի բազումք սպանեալք էին ի թուրքաց, քանզի փաշայք զօրօք իւրեանց քանիցս անգամ եկեալ էին ի վերա նոցա եւ ոչ կարացին մուտ առնել, այլ պատերազմեալ ընդ միմեանս յետ դառնային ամօթով: Բայց միայն զմի կողմն՝ որ ոչ ունէին յանդիման իւրեանց քարայրս, որ օգնէին իրերաց, զայն կողմն աւար առին զկանայս եւ զորդիս: Եւ զարս ի սուր մաշեցին եւ անցեալ գնացին: Իսկ այնք, որք մնացեալք էին կէս մի եւ կամ երկից մասանց մասն մի: Որք գերծան նոքա ունէին զքարայրս իւրեանց յանդիման միմեանց, որք թֆանկով կարացին զմիմեանս պահել ի թշնամեաց:

Եւ ի գիւղս այս պատուական շատ խալի եւ խալիչայ գործէին յառաջ, բայց այժմ նուազեցան յոյժ: Եւ հազիւ թէ ոմանք պառաւունք սակաւ գտանին գործօղք:

Եւ աստի գեղացիք մեզ ճանապարհորդելով ի թանձրութենէ ձեանն եւ ինքեանք զինուք եւ թֆանկով հասուցին զմեզ ի մեծ անապատն Տաթելու: Եւ ի ճանապարհին զաւեր գիւղ մի, որ բանադրեալ էին առաջնորդք Տաթելու՝ Քարահունջ անուն, աղերսեցին զիս արձակել: Որ զտեղի առեալ ետու զարձակումն եւ օրհնութիւն գիւղոյն որում կայր պատուական եկեղեցի մի սրբատաշ քարամբք շինեալ:

Իսկ ի յանապատն մնացի Դ (4) օր: Բայց մինչ կայեաք ի յանապատին՝ մարտի ԺԶ (16) օրն երեքշաբթի գիշերն՝ Է (7) երորդ պահու, գիշերոյն՝ որ էր օդն պարզեալ եւ լուսինն լրում առեալ, քանզի մինչ հասայ ի յանապատն կրկին ձիւն տեղեաց ԻԴ (24) ժամ եւ ապա պարզեցաւ: Եւ ապա իմ ելեալ ի խցէս զանխուլ յումեքէ գնալ ի դումն եկեղեցոյն տեսի զլուսին խաւարեալ զհասարակն: Մինչ ի մուտս իւր իսպառ խաւարեցաւ եւ ամփոփեցաւ:

[ԽԸ]

Եւ ի նոյն օրն՝ որում լուսացաւ ի խաւարմանէ լուսնոյն, առեալ ընդ իս զոմանս ի վարդապետաց եւ ի միաբանից եւ գնացի ուխտ ի Հարանց նախկին մեծ յանապատն, որ է մայր ամենայն անապատից յարեւելս եւ յարեւմուտս ազգին մերոյ եւ ի մատուռն ուր թաղեալ կան պատուական նշխարք սրբոց վարդապետացն Պօղոսի եւ Սարգսի, Արիստակէսի եւ Բարսեղի արեղային, զոր պատմէ Առաքել պատմագիրքն ԻԵ (25) գլուխն: Եւ յետ ուխտելոյ եւ նկատելոյ զանապատն եւ զկործանման տեղի բարձրագոյն լեառնն, յորում հատեալ լերինն եւ խաղացեալ գետինն եւ գերեզմանատան ոստելն եւ գնալն նետաձիգ մի տեղի, եւ ապա զկայ առնուլն, նոյնպէս եւ՝ մատուռն, որում թաղեալ կային վերոյ գրեալ սրբոց մարմինքն, որում յետ ուխտիս մերոյ կատարումն, որ եւ զճաշու ժամն ի յանապատն ասացաք, եւ ապա եկինք զառ ի վայր ի մատուռն՝ որ էր փոքրիկ եկեղեցի ուր դամբարանք էին գրեցեալ սրբոցն: Եւ անդ եւս կատարեցաք զերեկոյեան ժամն:

Եւ անտի անցեալ զգետն Որոտան ձիով, որ է ի մէջ մատրան եւ Շէնհէրու կուսանաց անապատին, ելանք ի վեր ի կուսանաց յանապատն: Եւ տեսի զաւեր նորա եւ

զամայութիւն, որում բնակէին աւելի քան 450 (150) կուսանսն: Իսկ այժմ միայն ԲԺ (20)-ան ապաշխարողս կային, եւ սոքա եւս շիւարեալք, եւ տարակուսեալք, եւ յուսահատեալք. որ անդանօր ասացաք զխաղաղականն: Եւ զի երեկոյացեալ էր օրն մնացինք անդ զգիշերն:

Որ եւ ի լուսանալն յետ կատարելոյ մեր զժամն առաւօտեան յուսադրեցի զապաշխարողսն եւ զոր ինչ պակասութիւն գոյր եկեղեցւոյն հարկաւոր, թէ վարագոյր եւ թէ վարագորի երկաթ, եւ թէ գրեանք, եւ ձեռք մի զգեստ, սկի եւ խաչ, այլ եւ կատաղունիսն ի վեր, որում կանգին այր մարդիկք, յորժամ հանդիպին ի յանապատն, էր քակեալ եւ աւերեալ. յորմէ վաղվաղակի ետու գտանել հիւս մի, եւ փայտ եւ տախտակ, եւ տուեալ զգինս հիւթոցն եւ ճարտարին հրամայեցի փութով շինել:

Եւ ելեալ գնացի, եւ անցանելով Հալուձորու գիւղն կրկին իջի ի յանապատն Տաթելու: Եւ մարտի ԺԸ (18) էլի ի վեր ի վանքն եւ մնացի անդ Է (7) օր մինչ զի սակաւ մի ձիւնն իջաւ եւ անց ետուր ճանապարհի: Այլեւ վասն կուսանաց անապատին, զոր ինչ կարացի ճարել ի գիւղն Տաթելու ի անօթից եկեղեցւոյ առեալ յղեցի: Եւ վասն ոչ ունելոյ խօրակ հացի սակաւ մի ցորեան ի վանից պատուիրեցի տալ անճարակաց:

Եւ ապա ելեալ ի վանաց անցանելով Տանձաւեր ամայի գիւղ, հասանք ի գիւղն Իրիցվանիկ: Եւ անտի Պարկուշատով եկինք ի գիւղն Գիւլմէշէ՝ որ է մէլիք Շրվէնի գիւղն: Եւ ապա ի յԱմարաթ անուանեալ տեղին:

Որ եւ ի դէմ եկաւ մեզ շահվէքիլի պարոն Յոհանն: Եւ առեալ եկինք ընդ մեզ դժուարին ճանապարհաւ ի Մալեւ գիւղն: Եւ անտի առեալ տարաւ զմեզ պարոն Յոհանն ի գիւղն իւր Կալեր: Եւ յետ Բ (2) ատուր կրկին ընդ նոյն ճանապարհաւ դարձանք ի Մալեւ: Եւ ասացեալ զճաշու ժամն սակաւ մի հանգստացեալ եկինք ի Կառաւ գիւղն:

Եւ ապա եկինք ի Մեղրի, որում կայր փոքրիկ վանք մի պատուական եւ հաճոյական: Եւ մնացի Գ (3) օր սփոփելով եւ զնոսա: Եւ անցեալ ընդ Կարճեւանու գիւղէն եւ հասանք ի յՕրտուար: Եւ եկինք ի Դաշտ մեծ գիւղն ապրիլի Զ (6):

Եւ ապրիլի Է (7) ի տօնի աւետեաց սրբոյ Կուսին հրաւիրեցին զմեզ պատարագ մատուցանել: Որ եւ զիջեալ ի խնդիրս նոցա կատարեցաք զխորհուրդն սուրբ:

Եւ ի միւսում օրն եկին Գողթնեաց իշխանքն՝ առաջնորդօքն իւրեանց, եւ հրաւիրեցին զմեզ ի յԱգուլիս: Եւ առեալ զմեզ փառօք գնացին Ագուլիս: Եւ մնացի անդ մինչ ի սուրբ պասեքն եւ ի Նոր կիրակի, զի յանուն սուրբ Թօմայի առաքելոյն է վանքն՝ հիանալի եւ զարմանալի տեսողաց, եւ զի որդեակն իմ՝ առաջնորդն նոցա Յովհաննէս պարկեշտաբարոյ հեզահոգի եւ հանճարեղ վարդապետն, վաղածանօթ գոլով ինձ, ի սեր նորա եւ վասն ուխտի վանացն՝ որ լինի ի Նոր կիրակելի եւ վասն ժողովրդեան աղաչանաց մնացի անդ այսքան օր: Այլ եւ ի Դ (4) եկեղեցիս, զոր ունին, հրաւիրեցին զիս՝ որ ի կիրակելքն եւ այլ պատշաճաւոր օրերն ետուն ինձ պատարագ մատուցանել եւ օրհնել զնոսա, որպէս եւ եղեւ իսկ:

Որ եւ ի նոյն օրն Կարմիր կիրակի մատուցեալ իմ գտորք պատարագն ձեռնադրեցի եպիսկոպոս զաւագերեցն Ագուլեաց զտէր Թումայն՝ միաբան սուրբ Էջմիածնայ:

Եւ ապա Նոր կիրակէի երկուշաբթին չուեցի անտի եւ եկի ի Յոնայ Միզկիւնոյ վանքն, եւ անտի ի հին Ջուղայ. եւ Ջուղայոյ ի Տարաշամպ անցանելով զԵրասխ գետն նաւով եւ անդ, ուր խառնի եւ Տղմուտ գետն ընդ Երասխայ, եւ ելի ի գեղեցկաշէն եւ ի հոշակաւոր հրաշալի վանքն նախավկային Ստեփաննոսի՝ որ էր մայիսի Է (7), եւ մնացի ի վանքն Թ (9) օր:

Եւ ապա չուեցի եւ եկի ի Երինջակու սուրբ Կարապետ, զի եւ ի Սուղան գնալն նախ հանդիպեալ էի: Եւ յետ երկուց արուց գնացի ի Գաղ եւ ի Շոռոթ եւ ի վանքն Շոռոթու եւ յանապատն:

Եւ հրաւիրեցայ ի տուն հանգուցեալ պարոն Աղամալին ի յորդոյ իւրմէ՝ նախածանօթ պարոն Աղէկսանդրէ: Եւ երեկոյն կրկին ելանք ի վանքն Սուրբ Լուսաւորչայ:

Եւ այգն գնացինք ի Փառակայ եւ ի վանքն իջեւանեցանք: Եւ անտի ի Տիւի, գիւղ որում կայր աւեր, եւ վանքն՝ ամայի, եւ կուսանաց անապատն Է (7) միայն ապաշխարող: Որ եւ նոցա այցելութիւն արարեալ՝ վանից եւ անապատին, անցեալ գնացի ի նոյն օրն ի Պուստ մեծ գիւղն, յորում կայր պատուական եկեղեցին:

Եւ յետ ուխտելոյ եկեղեցին ելայ ի վանքն աղանանման, աղինասարաս, ի վայելուչ բարձրանիստ տեղի. լի պարտիզօք ջրարբի, եւ բարեբեր հողով, եւ պարզ առողջարար օդով: Զուարճացաւ սիրտ իմ մոռանալով զաշխատութիւնս ճանապարհի: Այլեւ առաջնորդ նոցա Պետրոս վարդապետ՝ այր խոհեմ եւ բարեբարոյ, եւ միաբանքն՝ սիրով եւ հնազանդ. եւ մնացի Բ (2) օր:

Եւ անտի չուեալ եկի ի Ղազանջ մեծ գիւղն, անցանելով զգիւղորայս ոմանս: Եւ մնացի անդ եւս Գ (3) օր եւ, վասն աղաչանաց եւ խնդրոյ նոցունց, մատուցի անդ եւս գտորք զպատարագն: Եւ անցանելով ընդ գիւղն եկի Նորաշենիկ եւ անտի՝ կրկին ի սուրբ Կարապետն Երինջակու, եւ անտի՝ ի Նախչուան, մնալով Բ (2) օր:

Եւ ապա իջայ ի Աստապատ օրհնեալ գիւղաքաղաքն եւ ի վանքն Աստապատու գեղեցկաշէն եւ պատուական, զի վանքերն մի քան զմի պայծառ եւ գեղեցիկ յօրինեալ հիանալի տեսողաց:

Աւա՛ղ ժամանակիս նեղութեան եւ նուագութեան ազգիս իմոյ Արամեան: Զի զալարին աղիք իմ ի տեսանելն զաննման վանորայսն եւ գտորք ուխտսն՝ վասն ոչ գոյոյ բաւական թէմ եւ վիճակ: Եւ թէպէտ գոն, բայց՝ ամայի եւ անշէն, անմարդաբնակ: Եւ թէ գտանին ոմանք աղքատացեալք, եւ նոքա որք ոչ կարեն օգնել կամ լցուցանել զպէտս եւ զպակեւութիւն վանորէիցն, այլ եւ ինքեանքն եւս կարօտ են դարմանելոյ ի վանորէից:

Այլ եւ ի յԱստապատ՝ յաւուր Մեծահրաշի կիրակէին կատարելով [զ]իմ գտորք խորհուրդն, ձեռնադրեցի Գ (3) եպիսկոպոս. Ա (1) Սպահանցի Գեւորգ վարդապետն՝ ըստ խնդրոյ առաջնորդին իւրեանց Աստուածատուր վարդապետին եւ

իշխանացն, եւ զմիսն՝ ի վերա Բարդուղիմէոսի սուրբ Առաքելոյ վանիցն, որ ի յՈրմի՝ ըստ խնդրոյ երկրին եւ վիճակի <յ> այնմիկ, եւ զերրորդն, որ էր Կաֆայեցի Մէլքոն վարդապետն՝ միաբան սուրբ Էջմիածնայ:

Եւ ապա չուեալ Աստապատու հասայ խաղաղութեամբ ի սուրբ Էջմիածին յունիս ամսոյ ԺԲ (12): Յորում եղև մեծ ուրախութիւն համայն միաբանից եւ բոլոր Արարատեան երկրի: Մատուցանելով գոհութիւն Աստուծոյ ամենակարողի եւ պահպանողի, նախախնամողի եւ զերծուցանողի ամենայն պատահարաց եւ անկեալ առաջի սուրբ իջման տեղւոյն ի մէջ մեծի եւ ընդհանրական կաթողիկէյին, մեծաւ ողբով, սրտառուչ հառաչանօք նուիրեցի կրկին զանձն իմ Աստուծոյ՝ աղօթիւք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի:

[ԽԹ]

Յետ այսորիկ, յորժամ եկն Իպրահիմ խանն ի Թարվէզ սպասալար անուամբ եւ որպէս երկրորդ թագաւորի, քանզի եւ եղբայր է Վելինամաթ թագաւորին, եւ նստաւ ի տեղի իւր եւ խաղաղացաւ:

Ապա հրաւիրեաց զԵրեւանայ զապիթներն մալիդիւանին, այլեւ՝ զաղայներն եւ զքալանթարներն, զմէլիքներն եւ զքէտիսուտայք: Յորմէ տեսեալ զպատրաստութիւն իւրեանց ճանապարհին եւ ընծայից աճապարեցին գնալ ի Թարվէզ:

Հրաւիրեցին եւ զիս: Եւ վասն զի տկար եւ աշխատեալ գոլով ի ճանապարհէ ոչ գնացի, այլ ի տեղի իմ յղեցի զագուլեցի Թումայ վարդապետն եւ ես պատշաճաւոր ընծայիւք եւ աղերսական գրով, այլ եւ խնդրելով ի նմանէ զրախամս պատեհաւորս վասն վանորէից, եւ վասն շինութեան եւ նորոգութեան եկեղեցեացն եւ վասն երկրին:

Որ եւ իսկոյն շնորհեալ էր եւ կատարեալ զամենայն խնդիրս իմ, եւ Բ (2) րախամ՝ աւելի՝ քան զոր խնդրեալ էի:

Ա (1)՝ սերէֆրագութեան, որպէս թէ իփխայ առնելով զկաթողիկոսական իշխանութիւն, եւ երկրորդ՝ յանձնարարական ի վերա Երեւանայ խանին կամ՝ փոխանորդի նորին:

Այլ եւ իսիլայ մի առաքեաց ինձ՝ որ էր շուրջառ մի: Եւ վասն ոչ գտանելոյն առժամայն առ վաճառականսն ազնիւ դումաշ մի զիւր Բ (2) կապայն, որ էր ի մի ճոթէ ձեւեալ եւ հազեալ, զայն Բ (2) կապայն ետուր քակել, եւ շուրջառ ձեւել եւ կարել: Չայն առաքեաց ինձ:

Խիլայեաց եւ զԹումայ վարդապետն, զոր յղեալ էի՝ տալով նմա եւ զկապայ մի զարլու եւ զպատուական գօտի մի:

Խիլայեաց եւ զմիրզէն, որ էր իբր պաշտաւթերտեր, այլեւ՝ զքալանթարս, եւ զմէլիքս եւ զայլ պատշաճաւոր մարդիկք, զոր գնացեալ էին:

Եւ ումուտվար արարեալ մեծաւ ուրախութեամբ արձակեաց երեսացն: Յորում վաղվաղակի յետ սակաւ աւուր եկին Երեւան շքեղ փառօք եւ մեծաւ ուրախութեամբ:

[Ծ]

Իսկ յամսեանն սեպտեմբերի՝ յորժամ կայի ի Յոհանավանքն՝ ի վերա շինութեան սուրբ Կարապետին, հրաւեր եւ հրաման եկն Իպրահիմ խանէն: Եւ մեծ ոմն հաւատարիմ իւր չափար, ունելով զրախամն ի ձեռին իւր, եւ հասեալ Երեւան ետուր ընթեռնուլ զրախամն վասն գնացողաց:

Նոյնպէս եւ զիմ րախամն՝ յատուկ վասն իմ գրեալ, առաքեաց ինձ: Վասն զի յոյժ խօթացեալ կայի վասն չարաչար տենտիս ի Յոհանավանքն՝ ի վերա շինութեան, յորմէ ընթեռնուլն եւ վերահասու լինելն իմ գնացի Երեւան, զի կարացից իմանալ զպատճառն:

Որ եւ նոքա կային շիւարեալ, մանաւանդ՝ միրզայ Քազումն, զի յոյժ երկնչէր. մի գուցէ զանգատաւորք գնացեալ իցեն Իպրահիմ խանին վասն իւր:

Եւ սկսաւ միջնորդ ձգել ինձ, եւ պատգամն առաքէր Աղեկսանդր վարդապետաւ իմով եւ խոստանայր բազում բարերարութիւնս առնել սուրբ Էջմիածնայ եւ ինձ, զի թէ բարկացի Իպրահիմ խանն ի վերա իւրն եւ կամեսցի մահացուցանել, թափեցից զնա:

Այլ եւ աղերսեաց վասն չափարին, որ առեալ տանիմ Էջմիածին եւ մի քանի օր արգելեմ, մինչեւ շինեսցէ զտօմար թագաւորական հասից՝ յամենայն իրաց Արարատեանս երկրի: Որ եւ առեալ իմ զչափարն դարձայ Էջմիածին, քանզի եւ Իպրահիմ խանն պատուէր տուե[ալ] էր չափարին, թէ՛ «Մի գուցէ նեղացուցես զխալիֆայն կամ վշտացուցանես, զի այր ծեր է, այլ՝ որպէս կամի ինքն, այնպէս զայցէ»:

Վասն որոյ յետ քանի մի աւուր դարձաւ Երեւան վասն ստիպելոյ զնոսա առ ի գնալ:

Որ եւ կրկին աղաչեցի զչափարն, մինչ կամէր գնալ Երեւան, զի քանի մի օր համբերեսցէ: Եւ յետ անցանելոյ Ե (5)-Զ (6) աւուր տեսեալ իմ զպատրաստութիւն ճանապարհին, հիւանդ գոլով, գնացի Երեւան եւ ասացի իւրեանց՝ չափարին եւ միրզին. «Ահա ես կամաց կամաց գնամ մինչ ի Աստապատ եւ մնամ ձեզ»:

Եւ յուղի անկեալ գնացի: Եկին եւ քալանթարք ընդ իս՝ հայոց եւ այլազգեաց: Որում սակաւ սակաւ գնալով հասանք յԱստապատ: Եւ յետ Գ (3) օր մնալոյն մեր անդ չուեցաք ընդ Նախչուանայ իշխանաց՝ ընդ պարոն Աստուածատրին եւ պարոն Խարխիմոսին: Եւ գնացինք ի ճանապարհն Թարվիզու:

Եւ յորժամ հասանք ի Մարանդ գիւղաքաղաքն, որ է Թարվիզու մերձ ԺԲ (12) ժամու հասին եւ նոքա մեզ, այսինքն՝ միրզէն, եւ չափարն եւ իւզպաշիքն:

Որ եւ զմի օր անդրէն մնացեալ եւ ապա չուեալ գնացինք ի Սոֆիան եւ անտի ի Թարվեզ:

Եւ երկրորդ օրն գնացինք յանդիման լինիլ սպասաւարին հանդերձ ընծայիւք մերովք իւրաքանչիւր ըստ լայեխին: Որ եւ մեծաւ սիրով ընկալեալ զմեզ եւ քաղցրութեամբ յոյժ, յոյժ մխիթարեաց:

Մանաւանդ ձայնեաց զիս մերձ առ ինքն եւ բազում բանս մխիթարականս եւ յուսադրականս ասաց ինձ:

Այլ եւ, յորժամ ետես զգոյն երեսացս որպէս մեռելոյ ի բազմօրեայ տենտէն նեղացաւ ի վերա չափարին ասելով. «Վասն էր բերիք զխալիֆայն, որովհետեւ հիւանդ էր»:

Որ եւ ես պատասխանեցի. «Խանում, եթէ մերձ ի մահ լինէի, կամէի, զի դագաղով բերիցէին զիս վասն կարօտոյս, զոր ունէի առ քեզ, զի ի տեսանելն իմ զքեզ զՎելինամաթն ի քեզ եւ ի դէմս կերպարանացոյ տեսեալ գիտեմ եւ զովանամ եւ ապա մեռանէի»:

Եւ կրկին յուսադրեաց եւ յոյժ ուրախացաւ: Եւ ետ հրաման առանձնանալ ի տեղի մի ինձ, եւ քալանթարին եւ հայոց իշխանաց միայն, յորս էր եւ Ագուլեաց պարոն Ստեփանն, զի քանի մի օր յառաջ էին գնացեալ ի Թարվեզ, քան զմեզ՝ առ ի տեսանել զրախամն, զոր եկեալ էր ի Վալինամաթէն:

Յորմէ գնացեալ նստաք ի տեղի մի ի տան միում, ի մէջ պարսպին իւրոյ: Եւ ընթերցան զրախամն առաջի մեր եւ վերամեկնեցին զբանն ի լսելիս մեր: Յորմէ լուեալ յոյժ ուրախացաք, զի վասն Բ (2) իրաց էր պատուէրն. մինն՝ վասն երկրին յանձնարարութեան եւ վասն եղբօրն իւրոյ՝ եւ միւսն՝ յատուկ վասն իմ՝ ի վերա եղբօրն իւրոյ գրեալ պատուէր, զի քաղցր աչօք հայեցի եւ քաղցրութեամբ լիցի միշտ ընդ իս եւ, զոր ինչ ասեմ, լսիցէ եւ զինդիբսն կատարեսցէ: (Փա՛ռք Աստուծոյ ամենակալին: Աստանօր հիացումն առնէ զմիտս իմ, թէ՛ վասն է՞ր եւ ո՞յր աղագաւ այսչափ խնամք, եւ սէր եւ հոգաբարձութիւն ընծայի ի սիրտ առն հզօրի եւ աշխարհակալի այնորիկ: Գոհանամ զքէն Տէր վասն անճառելի մարդասիրութեան քոյ):

Եւ յետ տեղեկեանալոյն մեր զհրաման թագաւորին՝ եղբօր իւրոյ, կրկին տարան զմեզ ի դէմ իւր: Եւ յետ բազում զրուցատրութեան ընդ ամենեսեանսն կրկին ձայնեաց զիս մերձ իւր եւ բանս բազումս եւ հանագս ծիծաղականս խօսեցաւ ընդ իս եւ ընդ միրզէն իւրոյ՝ որ էր միրզայ Բազի անուն:

[ԾԱ]

Քանզի, մինչ գնայի ի Մուղան, այս միրզէս զապուր էր եւ իշխօղ Նախչուանայ՝ յոյժ զոռոզ, եւ տմարդի եւ ասեցոյ քրիստոնէից:

Այլեւ յետ գնալոյն մերոյ մի ոմն ի սպասաւորաց իւրոց՝ Դաւիթ անուն, ումեմն քրիստոնէի զոռուտր յափշտակեալ ուրացուցեալ էր եւ քեպին արարեալ եբեր ի Մուղան: Եւ զկնի նորին հայրն աղջկան եւս լալով եւ աստապատցոց մահսարով եկաւ ի Մուղան: Վասն որոյ գանգատ արարի վասն միրզէին:

Որ եւ շատ մաքառեցանք առաջի Վելինամաթին, մինչ զի ասացի, թէ՛ «Դու Նախչունայ երկիրն քանդեցիր, րահաթին մալ չի թողիր: Մինչ զի եւ քո նօքարներդ յայտնի նաճախով հարին զմէլիքն Աստապատու եւ սպանին: Զքրիստոնէի դուստրն ի տանէ իւրմէ ի մէջ գիշերի թրով յափշտակեցին եւ ակամայ ուրացուցեալ բռնութեամբ քեպին արարին: Եւ այժմ դու աւելի քան զՌ (1000) թուման աւելի կաշառք կերեալ ես ի Նախչունայ երկրէն: Զոր եթէ հրաման տայ թագաւորն, հիսապ քաշեմ զքեզ, զի րահաթի փողն կամ իւրեանց մօտն պիտի, կամ թագաւորին: Դու վասն է՞ր ուտես»: Առժամայն հրամայեաց մեծախելք Վելինամաթն, եւ պրկեցին զնա ի վերա երեսաց իւրոց երկիր եւ սկսան հարկանել զնա արք Զ (6)՝ ի պարանոցէ մինչեւ զջիւս ոտիցն: Եւ յետ բազում հարկանելոյն գոչեաց. «Բան ինչ ունիմ ասել»: Եւ կանգնեցուցեալ ածին առաջի: Եւ ետուր խօսել: Խօսեցանք եւ մեք, զի առնթեր կային ընդ իս եւ իշխանքն Նախչունայ՝ պարոն Աստուածատուրն, եւ Խարիսիմոսն եւ Ագուլեաց Ստեփաննոսն:

Որ եւ կրկին անգամ պրկեցին ի վերա երեսաց եւ հարին ուժգին, մինչեւ զի երկիցս եւ երիցս ուշաթափեցաւ եւ կրկին յուշաբերեաց: Եւ կրկին անգամ գոչեաց. «Ասել ինչ ունիմ: Խօսեցուցէք զիս»: Եւ կանգնեցուցեալ հրամանաւ մեծին բերին առաջի իւր: Եւ խօսեցուցեալ եզիտ սուտ ինքն ըստ ինքեան, զի մենք այլ ոչ խօսեցանք այնուհետեւ:

Եւ հրամայեաց դնել ի ֆալախայն եւ բարձրացուցեալ զգարշապարն հարկանել: Եւ եղեալ ի ֆալախայ հարին եւ զներբանս ոտից, մինչ զի իսպառ յուշաթափեցաւ:

Վասն որոյ զոչացայ զգանգատիլս, յորժամ տեսի զչարչարանս առնս այնորիկ: Եւ սկսայ կերպի ինչ աղերսել. ոչ բերանով, այլ՝ ձեռս տարածելով ի խոնարհ եւ հեղով զարտօսր ի յաչացս, բեկեալ սրտիւ եւ թեքեալ պարանոցաւ, մինչ զի ետես եւ իմացաւ, զի կամիմ աղաչել վասն ազատութեան առն այնորիկ եի տանջանաց եւ երկնչիմ: Եւ առժամայն հրամայեաց ի բաց կալ հարկանողացն եւ վերացուցեալ ետ տանել առաջի իւր: Զի արք Բ (2) մտեալ ի անթատակն քարշեցին առաջի Վելինամաթին եւ հազիւ կանգնեցուցին:

Որում պատուիրեաց տալ զհամար տնտեսութեան իւրոյ ի մեզ եւ զոր ինչ առեալ է, սիյահի արարեալ տարցեն նմա: Եւ կրկին անգամ առաջի Վալինամաթին յուշաթափեալ, եւ քարշեալ զնա տարան արտաքս: Եւ եղիր ի վերա իւր էլիաղաչլի մի մուպաշիր:

Եւ զմեզ կրկին յորդարեաց եւ յուսադրեաց, եթէ՛ «Զայն յափշտակեալ աղջիկն առէք եւ տուէք Խալիֆային»:

Յորմէ վաղվաղակի կատարելով զհրամանն առին զաղջիկն ի յառնէ իւրմէ: Եւ ես իստագոյն վարեցայ ընդ յափշտակող աղջկանն, եթէ՛ «Գիր ապահարզանի կամիմ, զի տացես, եւ վկայիւք հաստատիցես եւ գրով արձանացուցես, որ այսմ հետէ արձակեալ է ի քէն աղջիկն, եւ այլ դաւի չունենաս ընդ նայ եւ ոչ ընդ ծնօղս նորա»: Եւ թեպէտ բազում պատճառս յօդելով հնարեր զերծանիլ, զի սիրահարեալ էր ի վերա աղջկանն, այլ ոչ կարաց զերծանիլ: Այլ զոր ինչ գիր խնդրեցի, առժամայն ետուն գրել եւ նոր կնիք փորել, զի չունէր ի պատրաստի կնիք: Եւ կնքեալ եւ հաստատեալ բազում վկայիւք ետուր ցիս, եւ ապա զերծաւ յինէն:

Եւ այն էր զարմանք զի ի առաւել տապելոյ եւ տառապելոյ եւ լալոյ պղծին եկեալ մեծամեծք ոմանք՝ մինչ զի եւ խանք եւս, յոյժ փառաբշանօք եւ շողոքորթութեամբ աղերսէին, զի շնորհեցից աղջիկն նմա եւ մի բաժանեցից ի միմեանց, զի մեծ մեղք եւ խեղճ կառնես, ասելով պաղատէին: Որ եւ ես անճարացեալ ասացի. «Ապա ուրեմն տուք եւ դուք զթուրքի աղջիկ մի ի տեղի նորա, զի պսակեցից ընդ քրիստոնէայ երիտասարդի մի եւ ապա շնորհեմ զայն ձեզ»: Եւ ապա անճարացեալ ի բաց գնացին յինէն:

Որ եւ կրկին վասն աղջկանն բախամ խնդրեցի՝ մնալ ի հաւատս իւր եւ ամուսնացուցանել ընդ առն քրիստոնէի, եւ յափշտակողն այն այլ մի իշխեսցէ դաւի անել եւ կամ երկրի զապիթներն՝ վասն հաւատոցն դախլ անել, զի ի Նախչուան առաջի շէյխիսլամին եւ դագուն էին ուրացեալ: Որ եւ ետուր զբախամն ըստ խնդրոյ իմոյ:

Եւ տուեալ ի ձեռս հօրն զաղջիկն եւ զբախամն փութացուցի ի յԱստապատ, զի ընդ հասանելն ամուսնացուցէ ընդ առն միում: Որ եւ արար վաղվաղակի եւ ամուսնացոյց ընդ երիտասարդի մի, որ կան այժմ եւ փառաւորեն զսքանչելագործն Աստուած:

Եւ ապա նստեալ ընդ միրզին՝ յետ փաթաթելոյ գնա ի մորթի ոչխարի ջերմաջերմ, զի քաղիցի զցաւս իւր. եւ ողջացեալ նստաւ ընդ մեզ ի հաշիւ:

Որ եւ ՁԲ (82) կտոր գիւղ գոլով Նախչուանայ երկիրն՝ ԼԲ (32) կտոր գիւղի հաշուէն ԷՃ (700) թուման կայացաւ ի վերան կաշառք, զոր առեալ էր: Որ եւ յետ բազում աղաչանաց ԲՃ (200) թուման շնորհեցաք եւ զԵՃ (500) թուման, որ է Ի (20) քէսէ, ծանուցաք Վէլինամաթին եւ ընծայեցաք իւրն:

Եւ ոչ էառ յանձն, այլ առժամայն կրկին պատուիրեաց մուպաշիրին, որ թասիլ արասցէ մինչեւ Գ (3) օրն: Եւ տուեալ զերծաւ ի սպառնալեաց Վէլինամաթին:

Այլ եւ կտրեաց զմիրզութիւն եւ զզապիթութիւնն Նախչուանայ ի նմանէ, եւ ընկեց երեսացն եւ արտաքսեաց: Բայց որովհետեւ բազում ժամանակաց եւ ի հեռուն հետէ երախտաւոր գոլով հօրն միրզին առ Վալինամաթն եւ առ Իպրահիմ խանն, վասն որոյ եղբայր Վէլինամաթին Իպրահիմ խանն արար գնա միրզէ եւ ունի ընդ ինքն ի սպասու, եւ է այժմ ի մօտն ի Թարվեզ: Եւ զոր ինչ պատահի ի դուռն խանին, ամենայն բան սորա ձեռօքն կարէ լինիլ, եւ առանց սորա ոչինչ լինի:

Վասն որոյ, զայս ամենայն գիտելով խանին, սկսաւ ծիծաղիլ եւ հետս հանագ անել: Եւ զի ի հիւանդութենէս դեղնացեալ եւ թառամեալ էի, նորա այսպէս թուէր, թէ՛ կասկածանացս կամ ամաչելոյս: Վասն որոյ ստեպ ստեպ ասէր. «Խալիֆայ դու իմ աթաս ես եւ ես՝ քո որդին Ա՛յն երդում, ա՛յս երդում: Չի լինի՛, թէ սիրտդ երկիւղ կամ կասկած բերես. վասն միրզէ Բագուն կողմանէ: Ձի թէ կամիս, նոյնքան եւ ես այժմ չարչարեմ եւ՝ առաւել եւս եւ թէ կամիս, սպանանեմ»:

Իսկ ես հառաչելով ասացի. «Ոչ, այսպէս խա՛նրմ, զի դա եւ հայր իւր ձեր օճաղին դատիմինին են: Եւ թէպէտ ի Մուղան բան մի պատահեցաւ, պատճառն իւր նոքարներն եղան՝ զի շատ էր երես տուել եւ չէր սանձեր:

Այլ եւ մենք վասն Բ (2) իրաց ձեզ ծառայութիւն կանենք: Մին՝ վասն հաւատոց մերոց՝ զի յայտնի պաշտեսցուք զհաւատս եւ զքրիստոնէութիւնս, եւ միւս՝ զի պահսցուք անարատ զսիրաթա ընտանեաց մերոց:

Վասն որոյ զհտէ եւ դա, զի թէ թամամին քշեր էինք զդաւին, ի մահ էր գնալոց: Այլ եւ աւուր չարչարանաց իւրոց կրկին եւ իշարաթով աղերսեցի, որ դա ազատեցաւ: Ապա թէ ոչ երկիւղ կայր մեռանելոյ:

Բայց այժմ հաշտ ենք: Քո տէվլէթով եւ քո կենդանութեան յետ Աստուծոյ ի մարդկանէ բնաւ երկիւղ չունիմ, զի ոչ վայել է ճշմարտութեամբ ձեզ սպասաւորել եւ [յ]այլոց երկնչել:

Այլ պարտ է այլոց երկնչել յինէն»:

Եւ յոյժ ուրախացեալ մեծաւ սիրով արձակեաց զմեզ՝ գնալ յօթելանս մեր:

[ԾԲ]

Եւ յետ երկուց աւուրց կրկին հրաւիրեաց զմեզ ի պատիւ: Եւ զի սովորութիւն է պարսից, որ զպատուեալ մարդն կէս աւուր ի ճաշ հրաւիրեն եւ ինքեանք եւս չաշտ ասեն եւ երեկոյն ի ընթրիս: Եւ այսպէս ճաշ եւ ընթրիս պատուելով զմեզ եւ ընդ իւր նստուցանելով ի սեղանն ուրախացոյց: Էին եւ ընթրիս ի միասին Երեւանայ միրզէ Քէազումն, քալանթար Մէլիքճանն Նախչուանայ այաններն, որք են՝ պարոն Աստուածատուրն, Խարիսիմոսն եւ պարոն Ստեփանն: Եւ ի զիշերի Բ (2) ժամին արձակեալ գնացինք ի մետաղս մեր մեծաւ ուրախութեամբ:

Եւ ի միւսում օրն կրկին հրաւիրեաց եւ խիլայեաց զմեզ՝ ինձ՝ վերարկու մի զարպաֆ այլանդակ գրապանաւ, զոր ոմանք ասացին եւ հաստատեցին, եթէ՝ «Շահն միայն կամ վալին կարէ զայդ ձեւդ ունել»:

Եւ միրզին եւ քալանթարին եւ երից իշխանաց՝ զար կապայ, քեմերպէնտ գօտի եւ քեաթիպի, մի զոր ի տան միրզին ազուցին:

Եւ ապա գնացինք ի մօտն ի սէլամ:

Որ եւ կրկին բանս բազումս խօսեցաւ ընդ մեզ եւ՝ պատուէրս յուսադրութիւնս: Եւ կրկին ընդ իս՝ սէր եւ հանաք, զոր ընդ գրով ոչ կարեմ արկանել: Եւ ապա ասացի. «Խանըմ, ինձ հարկաւոր քանի մի րախամ պիտի շնորհես, որպէս եւ հարազատն քո Վալինամաթն»:

Որ եւ իսկոյն պատուէր տուեալ միրզին, թէ՝ «Խալիֆայն զոր ինչ մաթլապ ունի, ըստ խնդրոյ եւ հաճոյից իւրոց եւ փութով կատարեա՛, զի երթիցեն»:

Որ եւ հրաւիրեաց զիս միրզէն ի պատիւ: Եւ կատարեալ զհայցուածս նոցա գնացինք ի ճաշ եւ ընթրիս:

Եւ խօսք եւ գրոյց եղեւ ի միջի մերում վասն անցիցն Մուղանու: Վասն որոյ ինքն սկսաւ աղաչել եւ հայցել, թէ՛ «Մեղքն իմ էր, որ ես գրեզ ոչ կարացի ճանաչել: Եւ մանաւանդ իմ նօքարներն զիմ տունն աւերեցին»:

Որ եւ նոր եկեալ որդին ԵԺ (15)- ան ամեայ ի Խորասանու մերձ իւր նստեալ էր, եղիր զձեռն ի վերա գլխոյն եւ մեծաւ երդմամբ ի վերա միամօրի իւրոյ, թէ՛ «Ամենեւիմբ իմ սիրտն եւ միտքս վասն քո ատելութիւն եւ նախանձ ոչ գոյ: Եւ ինդրեմ, որ դու եւս ի մտացդ հանես, եւ վասն իմ աղօթս անես Իպրահիմ խանի մօտն եւ թէ՛ Վելինամաթին գիր գրես, եւ խօշնադրութիւն բերես եւ բարեխօսես»:

Եւ այսպէս հաց կտրեալ հաշտեցանք, ի զվերջն յԱստուած յանձին: «Ձի թէ թշնամին աղաչիցէ գրեզ, մի հաւատար նմա՝ զի է (7) չարիք գոն ի սիրտս նորաւ ասի ի Սողոմոնէ:

Եւ յետ այնորիկ ԺԳ (13) րախսամ արգայ ետու գրել, զոմանս՝ Վելինամաթի տուած րախսամի ոճովն, եւ զոմանս՝ նոր՝ ինչ ինդիրք վասն վանորէից, եւ կարգաւորաց, եւ վասն երկրի եւ ռահաթի:

Եւ մնացեալ աւուրս ԺԶ (16) ի Թարվէզ, եւ ապա մուրախաս արարեալ զմեզ արձակեաց:

Որ եւ ընդ իս եկողքն ստիպով գնացին, եւ ես մնացի Գ (3)-Դ (4) օր ավելի եւ ապա չուեցի եւ ես ի Թարվիզու:

[ԾԳ]

Եւ յորժամ չուեցի ի Թարվիզու եւ հասայ առ եզրն եւ ի անցս Երասխայ, որ եւ նայիպն Նախչուանայ Աղայ Հասանն Խորասանցի՝ այր բարեբարոյ, իւելօք, խոնարի եւ բարեմիտ, գիր սիրոյ եւ մարդ եղեալ ի կեչուտն, որ հրաւիրեսցէ զիս գնալ ի Նախչուան՝ հիւր լինել նմա:

Յորմէ պատասխանեցի, թէ այր ծեր եւ հիւանդ եմ. գնամ ի յԱստապատու վանքն, եւ հանգչիմ քանի մի օր եւ ապա գնալն իմ ի յԵրեւան հանդիպիմ Նախչուան, եւ մնամ առ նմա զիշեր մի հիւր եւ անցեալ գնամ: Որպէս եւ եղեւ իսկ, զի անցեալ գնացի ի Հին Ջուղայ եւ մնացի անդ զիշեր մի:

Եւ առաւօտն գնացի ի վանքն Աստապատու մնալով եւ ի վանքն ԺԲ (12) օր:

Եւ ապա ընդ պարոն Աստուածատուրին գնացինք ի Նախչուան, որ է մերձ Աստապատու ժամու կիսու ճանապարհաւ, որ էր նոյեմբերի Ի (20) եւ օրն շաբաթ: Յորմէ դեմ ելեալ Նախչուանայ նայիպն, որ է Աղայ Հասանն, որ հրաւիրեաց զմեզ հիւր: Այլ եւ միւս միրզէքն, եւ Վելիդուլի Նախչուանայ խանն, եւ այլ իւզպաշիք եւ երեւելիք՝ աւելի քան զԲՃ (200) ձիաւոր, եւ առեալ զմեզ մտին ի քաղաքն Նախչուան:

Եւ յորժամ հասանք ի մէջ քաղաքին՝ ի թեատրոնանման տեղի մի, որոյ եւ Դ (4) կողմն էին կրպակք եւ անթիւ մարդիկք թամաշաճիք, հրաւիրեաց զմեզ խանն գնալ

իւր ամարաթն ի պատիւ: Իսկ Աղայ Հասանն ոչ տայր թոյլ: Եւ ի շատ մաքառելն իջան ի ձիոցն: Խանն քաշէր իւր կողմն, եւ միրզէն քաշէր իւր կողմն:

Եւ յորժամ տեսի, թէ աճի կռիւն, եւ կամին զմիմեանս յանդիմանել, զի մինն խան է, եւ միւսն՝ թագ (աւո)րի վաքիլ՝ կարգեալ ի վերա արքունական դպրութեան եւ կէլուրին, վասն որոյ վաղվաղակի իջայ ի ձիոյն, եւ մտեալ երկոցունց մէջ աղաչէի եւ համբուրելով զձօրուսս նոցա հազիւ կարացի դադարեցուցանել ի վիճմանց:

Եւ բանս եղի ընդ Աղայ Հասանին, եթէ՝ «Դուք եղբարք էք, եւ ոչ է պարտ վասն իմ զիրերաց խաթրն ձգել: Ես քեզ եմ հիւր: Թող նորա կամքն լինի: Գնամք ի տունն նորա՝ ճաշ առնեմք եւ ապա ի քո տէվլէթխանէդ, եթէ կամիս, ամիս մի կենամ»:

Եւ այսպէս համոզեցի ի խաղաղութիւն: Եւ գնացինք նախ՝ ուր խանն հրաւիրեաց: Եւ ապա եկինք ի տուն նայիպին: Եւ մնացինք մինչեւ երեքշաբթի՝ Լ (30) մարդ. եթէ վարդապետք եթէ նօքար եւ ԼԲ (32) ձի եւ ջորի:

Եւ ապա յաւուր երեքշաբթի կրկին մեծաւ փառօք եւ թափօրական պատրաստութեամբ, խաչալամներով յուղոյ եղին զմեզ: Որ եկեալ խաղաղութեամբ Շարուրով ի Արտաշատ եւ ի վանքն Վիրապ, եւ անտի՝ ի Նորագաւիթ եւ շաբաթ, որ է հոկտեմբերի ԻԷ (27), հասանք ի սուրբ գահն Էջմիածին:

Որ եւ ընդառաջ ելեալ ամենայն միաբանքն եւ զհիւղականքն մեծ պայծառութեամբ: Էին անդ ի գեղն եւ ի օսմանցոց բազումք, որք տեսեալ զպայծառութիւն հաւատոյս եւ արարողութեանց մերոց, հիացեալ ապշեալ զարմանային:

Որ եւ մտեալ մեր ի սուրբ տաճարն մեծի ընդհանրական կաթողիկէի եւ աշխարհաբոյժ քաւարանի, անկեալ առաջի սրբոյ իջման տեղոյն, զանչափական օրհնութիւնս, եւ զփառաբանութիւնս եւ զերկրպագութիւնս մատուցանելով, ուրախութեամբ եւ արտասուօք ծանուցաք բոլոր միաբանից եւ պատրաստ եղելոց, յորմէ իսպառ լցեալ էր եկեղեցին մարդկամբք՝ ի մերազգեաց եւ այլազգեաց, զպատճառ խնդրելոյն զմեզ եւ մեր գնալոյն, զպատիւն եւ զյուսադրութիւնն, զոր արար մեզ: Յորմէ լսողք հիացեալ զարմանային եւ փառս տային Աստուծոյ: Եւ ապա աղօթս արարեալ եւ օրհնութիւնս տուեալ արձակեցաք ի խաղաղութիւն:

Այլեւ պատուական շուրջառ շիպ խիլայ ետուր ինձ Նախչուանայ Աղայ Հասանն, որ էր ասպնջականն իմ:

Որոյ լիցի օրհնեալ եւ Աստուծոյ վարձատրեալ, զի հիացումն ունի միտս իմ վասն քաղցրութեան, եւ խոնարհութեան եւ հնազանդութեան առնս այսորիկ: Եւ ոչ եթէ՝ կեղծաւոր դիմօք, այլ ճշմարտութեամբ էր սերն, զի եւ զկեղծաւորսն, զոր կան բազումք, Աստուծով ճանաչեմք:

Բայց այրս այս մեծահաւատ, եւ համարձակիմ ասել եւս զսա՝ ծածուկ աստուածապաշտ եւ հաւատացեալ, հիացոյց զիս եւ զամենեսեան խոնարհութեամբն, եւ հնազանդութեամբն եւ քաղցրութեամբն իւրով: Զոր Տէր Աստուած հատուցէ զվարձս ըստ հաւատոց եւ աշխատանաց իւրոց, նմանապէս եւ՝ ամենայն բարեկամաց եւ բարերարաց սուրբ աթոռոյս:

Նախ՝ Վելինամաթին եւ եղբօրն՝ Իպրահիմ խանին, եւ համայն խաներաց, եւ կողմնապետաց, եւ կուսակալաց, եւ սուլթաներաց, եւ միրզոց եւ մեծամեծաց՝ առհասարակ ամենեցուն, որք ցաւին ի վերա իմ, եւ ի վերա միաբանից, եւ ազգիս իմոյ, մանաւանդ՝ ի վերա սուրբ աթոռոյս խնամք, եւ գութ եւ սէր ունին: Տայցէ տէր Աստուած այնպիսեաց կեանս երկարս եւ յաջողս եւ վարձս բարեաց՝ աստ եւ ի հանդերձելումն. ամէն:

Աւարտ պատմութեանս: Խնդրի ի ընթերցողաց՝ սիրելի որդւոց իմոց, զի վասն երկարաբանութեան եւ պարզաբան լինելոյն անմեղադրելի ունել զմեզ. զի, որքան իմ կարն էր, ջանացի, որ կարճ, համառօտ եւ պարզ լիցի՝ առ ի հասկանալ ամենայն ումէք: Զի եթէ ամենայն անցս մի ըստ միոջէ գրեալ լինէի ոչ քարտէզ եւ ոչ մելան բաւական լինէր: Այլ այսքան գրեցաւ զի ցանկացողք՝ առ ի յիմանալ զանցս եւ զորպիսութիւնս սուրբ աթոռոյս եւ զիմ, ահա այս ճշմարիտ պատմութենէս վերահասու լիցի եւ զովասցի:

Եւ եթէ ըստ հաճոյից ձերոց իցէ Տեառն է շնորհ: Ապա թէ ոչ՝ ներեցէք իմում դանդաղութեանս, զի ի մէջ տառապանաց եւ բազում զբաղմանց վշտաց եւ չարչարանաց եւ նեղութեանց գրեցի՝ հիւանդ եւ խօթացեալ, անզօր անձամբ: Ողջ լերուք:

[ԾԴ]

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աբրահամ՝ կաթողիկոս ամենայն հայոց եւ պատրիարկ Վաղարշապատու լուսակիր եւ հրէշտակաբնակ, սրօքեապար եւ քրօքեագումար, ընդհանրաձաւալ եւ աղինասարաս, գերահռչակ եւ գերապայծառ (յ)երկնահանգէտ մեծի եւ անյաղթ աթոռոյս սուրբ Էջմիածնի, յորմէ զսիրալիրական սերն եւ զանցուկ կարօտն, զիղձն եւ զհեղձ(ա)մաղձուկ փափագն կուսածնուծող ողջունիւ եւ Աստուածեան Քրիստոսաւէջ սուրբ գահիս շնորհիւ եւ պարգեւօք ընծայեալ նուիրեմ սիրելեացոյ իմոց եւ հոգւոյս հատորացն՝ մահտեսի Յարութիւնին, մահտեսի Սեղբոսին, մահտեսի Աստուածատուրին, եւ մահտեսի Պաղտասարին եւ ընդ ձեզ եղելոցն ամենեցուն՝ միշտ խնդալ ի Տէր հաւէտ բերկրանօք ի փառս Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյս:

Արդ զեկ լիցի սիրելութեան ձերում, ո՞ր ցանկալի հոգւոյս, զի առաջին անձս մինչեւ ցեղկտեմբերի եւ նոյեմբերի ամիսն կրկին եւ երեքկին, թվի թէ՛ այլ աւելի, գրեալ ծանուցի համառօտապէս որդ[ւ]ոյս իմոյ Կոստանդնու պատրիարկին: Եւ զի յետին զիրն եւ «Պատմութեանէ տետրակն ընդ Արմաշցի Տէր Նիկողայոս քահանային յղեցի եւ Աստուծով հաւատամ, թէ հասեալ իցէ:

Իսկ ի դեկտեմբերի չորսն չուեցի ի սուրբ գահէս եւ եկի մինչ յԱգուլիս: Եւ յետ Գ (3)-Դ (4) աւուր եւ Երեւանայ խանն ընդ իւզպաշոցն իւր, եւ ընդ քէտթիստայսն եւ աղաներն՝ հայոց եւ տաճկաց, այլ եւ՝ քալանթար եւ մելիք ընդ նմա: Եւ ի յԱգուլեաց ի միասին ելեալ գնացաք եւ ի յունվարի Գ (3)-ն հազիւ հասաք իբր շիկացեալ դաշտն Մուղանու՝ անդ, ուր խառնի Երասխն ընդ Գիւռ գետոյն՝ մերձ ի Շամախու, որ է աւուր միոյ ճանապարհ:

Զծնունդն էլ զջրօրհնէքն անդ արարաք ի հիւղս եղեգնեայս՝ եզերն Երասխայ՝ առանց եկեղեցոյ եւ պատարագի, խեղճ եւ ողորմելի, զրկեալք յամենայն հոգեւոր ուրախութեանց:

Իսկ մեծագոր Խանն ի Թիֆլիզու գնացեալ էր ի լեառնակողմն ի վերա լեկզաց եւ յաղթութեամբ եկեալ եհաս յունվարի ԺԱ (11) ի բանակատեղն:

Եւ գնացաք առաջի իւր ի միւսում օրն շնորհաւորելով զգալուստն եւ մատուցաք զընծայս մեր՝ ձիանք եւ ջորիք եւ զոր ինչ առձեռն պատրաստի ունեաք: Եւ յետ սփոփելոյ եւ մխիթարելոյ զմեզ, այսինքն՝ «Բարօվ եկիքե եւ թէ «Քանի օրն եկիքե եւ թէ՛ «Քանի՞ օր է, որ աստ էքե՛ ասելոյն յետ, պատուիրեաց տիվանպէկուն, որ է իւր հաւատարիմն եւ հարազատն, եթէ՛ «Խալիֆայ պապայիս լաւ տեղ տուէք, որ նստի», եւ ինձ ասել թէ՛ «Մուրախասս ես, Խալիֆայ», իբրու թէ՛ ընդարձակ ես, գնայ ի քո վրանն եւ հանգստացիր, անհոգ լեր ամենայն զբաղմանց:

Եւ ապա սկսան յամենայն կողմանց գալ օր ըստ օրէ. ի խորին Խորասանայ, ի Հերաթու, ի Մազանդարանու, ի Մաշատու եւ ի կողմանց քանանացոց, ի Պաքու, յԱրտաիլու, Ատրպատականու, Վրաստանու, եւ Թավրէզու եւ այլոց տեղեաց՝ զումարեալ ժողովեցաց, կուտեցան եւ եկեղեցացան մինչեւ ցՊայրամն իւրեանց:

Եւ սահմանեալ մեծախելք Խանն, որ ամենայն օր կարգաւ ի սէլամ գնալ առաջի իւր երրորդ ժամու: Եւ մերձ ի բնակութիւնն իր սահմանեցին եղեգնեայ հովանոցս երկարագոյն՝ Ժ (10) գիրկ, Ժե (15) գիրկ եւ Ի (20) գիրկ երկայնութիւնն եւ Բ (2) զրկով լայն: Որ իւրաքանչիւր քաղաքէ ի մէկ-մէկ հովանոցս նստէին քաղաքակցօքն հանդերձ: Եւ ամենեքեան վաղ քաչ գնային ի սահման (աղբ)եալ տեղն, եւ Գ (3) երրորդ ժամուն ելանէր մեծագոր Խանն: Եւ չաւուշք տուայ արարեալ, ապա ընթանային ամենեքեան կարգ կարգ եւ անցանէին առաջի իւր, խոնարհամբ գլխոյ անմոռնչ բարեւ տուեալ անցանէին:

Եւ զի էր նստած տեղն Խանին ամարաթ շինեալ փայտաշէն, եւ տանիսն՝ տախտակամած, իսկ շրջապատն՝ եղեգնեայ, եւ իւր ուիեացն տեղն, եղեգնեայ պարիսպն եւ բնակութիւնքն: Էին եւ վրանք բազումք, նոյնպէս եւ մերս բնակութիւն ի բացեայ բանակէն՝ իբր կէս ժամու հեռի ճանապարհ: Աւելի քան զԵՃ (500) խուղս շինեալ, զի կամէին, եթէ զեկեալ խաներաց զմանս անդ իջուցանէին: Այլ վասն հեռու գոլոյն ի յոթադէ Խանին ոչ ետուն թոյլ, այլ ի շրջակայս Խանին ապաստանացուցին:

Եւ Մուղանու դաշտն է լայն եւ արձակ դաշտ մի հիանալի, որ Լ (30) օրն լաւ ձիւոր մի կարէ շրջագայիլ՝ զբոլորն տափարակ:

Որ թէ խնձոր մի դիցէ որ ի գետնի, կարելի է ի հեռաւոր տեղաց տեսանել: Եւ ամենեւիմբ քար եւ նշմարանք քարի ոչ երեւի ի յայս անհուն դաշտիս: Ի դեկտեմբերի եւ յունվարի իբրեւ զգարնան եղանակի կանաչախիտ եւ խոտաւէտ՝ խոտ գտանէր ի դաշտին: Եւ գառինք ծնեալք էին, եւ բազումք՝ մեծացեալք, որպէս են առ ձեզ՝ ի խտրելէզին: Բայց ցուրտն եւս սաստիկ եղէ: Եւ յոյժ վշտացաք ի ցրտոյն: Եւ թէ ոչ էր լեալ Երասխայ եզերաց փայտն, իսպառ խօթացեալ եւ մահացեալ լինեաք:

Եւ արիֆէի օրն հարին մեծ վրան մի եղեգնաւայ պարսպին մէջն՝ կից Խանի ամարաթին: Որ էր հոգացեալ եւ բերեալ ի Ղազպինու: Որոյ էր երկայնութիւնն ՃԺ (110) արշուն, եւ լայնութիւնն՝ Ծ (50) հալէպի եւ բարձրութիւնն՝ ԺԸ (18) հալէպի՝ սագաշէն: Եւ ի միջի ԲԺ (20)-ան սիւնք էին, եւ ի գլուխ սեանցն՝ արծաթեայ կողակ, որպէս միջակ ձմերուկ: Եւ ի գլուխ կողակացն՝ այսմ ! (սլաք) նշանով: Եւ ի ի արտաքոյ բոսոր խորագոյն գունով, եւ շրջապատն՝ երկտակ. մինն՝ համակ կտաւ, եւ մի տակն՝ մահաճար դաֆաս օյմայ, եւ մէջն Կիլանու դանելվեզ դումաշ: Որ եւ հրաման ետուր ամենեցուն՝ գնալ եւ թամաշայ առնել: Եւ գնացեալ ի մէջ չատրին զբօսանայաք:

Եւ իւրեանց Պայրամի օրն մէճլիս արարի ի մէջ չատրին մեծամեծացն իւրոց:

Որ եւ էր ի միջի բանակի անդ օսմանցոց Կենճ-Ալի փաշայն որ էր դեսպան Մարակինացոց, նա եւս՝ ընուսաց Էլչին, որ է Մօսկի դեսպանն՝ ի վրանի անդ: Հրաւիրեցին եւ զիս ի միջի իւրեանց: Եւ խոսեցան, զոր ինչ խորհեցան:

Եւ ապա վարդէջուրն բաժանեցին: Եւ ապա՝ քաղցրեղէնք. շարպաթք ոսկեղէն բաժակաւ արբուցին Եւ Բ (2) ոսկեղէն բուովառ եւ Բ (2) արծաթեաց միշտ ի շրջագայելն ի բուրումն անուշահոտութեան: Եւ գուսանք ազգի-ազգի եւ պարաւորք ի միջի, որք են մանկունք պարկեշտագունք, խաղալով ժամ մի: Եւ ապա ելեալ գնացաք իւրաքանչիւր օթեւանս:

Իսկ ի միւսում օրն գնացաք կրկին ի սելամ ըստ սովորութեան մերում: Եւ ոչ տարան զմեզ առաջի իւր այլ պատուիրեցին, թէ՛ «Ի դաշտի յատուկ յատուկ քաղաքակցօք նստարուք, զի ունիմք ձեզ բան ինչ պատուիրելոյ»: Եւ յետ սակաւուց եկին արք Է (7)՝ մեծամեծք Խանին եւ ձայնեցին <զ>քաղաքացիքն՝ մէն մի քաղաքի եկօղքն կարգաւ, եւ ասացին, եթէ «Հրաման է մեծի Խանին, որ դուք գնացեալ ի միջի ձերում խորհեսցիք եւ գտանջիք գումն, որ կարիցէ զձեզ եւ զերկիրն ձեր կառավարել, զի ես նքօղեալ եմ եւ ձանցրացեալ, եւ այլ ոչ կարեմ տեսել ի յաշխատութիւնս պատերազմաց: Այլ գնացեալ նստայց ի դղեակն իմ եւ աղօթեցից վասն իմ եւ վասն ձեր: Ահա ձեզ Գ (3) ժամ պայման, խորհեցարուք եւ ի իններորդ ժամու եկեալ պատասխանեցէք»:

Եւ այսպէս արձակեալ գնացաք ի բնակութիւնս մեր: Եւ իններորդ ժամու եւ յայլ առաջ վասն երկիւղի մերում, փութով հասաք ի տեղին եւ կրկին նստաք երախանս երախանս, մինչ եկին այն առաջին Է (7)-ն արքն: Եւ հարցուցին կարգաւ քաղաք քաղաք, թէ՛ «Ձո՞վ գտիք», կամ՝ «Ձո՞վ ընտրեցիք»: Իսկ ամենեքեան պատասխանեցին, եթէ՛ «Մեք, քան զԽանն, լաւագոյն, եւ բախտաւոր եւ շնորհաւոր ոչ զոր գտաք եւ ոչ եւս կարեմք գտանել: Եւ թէ նա մեզանէ ձեռն յետ քաշէ, մեք զմեր ձեռն ի յոտից եւ ի ստորոտէ նորին ոչ քարշեմք: Այլ մեզ նա է տէր եւ տիրութիւն պարտի առնել, որովհետեւ զմեզ ի ձեռաց թշնամեաց զերծոյց եւ ազատեաց, եւ զերկիրս սրբեաց ի վնասակարաց եւ զմեզ ընտանեօք մերովք թափեաց ի ձեռաց զերչաց: Անհնարին է, եթէ անց[ա]նեմք ի նմանէ: Այլ թէ կամի զմեզ ի զերկիրս ի բաց ձգել եւ գնալ, կամ զմեզ ի հետ իւր տարցէ ի Խորասան, եւ կամ՝ իսպառ կոտորեցէ:

Եւ արձակեալ գնացաք ի տեղիս մեր:

Իսկ երկրորդում օրն կրկին գնացաք ի նոյն տեղի խորհրդոյ: Եւ եկին կրկին այն Է (7)-ն արքն: Եւ ըստ [ա]ռաջնոյն օրինակի տարան կարգաւ զքաղաքացիքն յառաջի իւրեանց:

Եւ ասացին, թէ՛ «Հրաման է մեծի Խանի. որովհետեւ չի թողիք զիս ի կամս իմ եւ կամեցայք զիս տիրել ձեզ, զայս երիս իրս խնդրեմ ի ձէնջ»:

Նախ՝ բառնալ զնգովքն, զոր տայք Օմարա[յ] եւ Օսմանին: Եւ նգովիք փակեք եւ արձանագրով հաստատեք, որ ամենեւիմբ զայն նգովքն չի յիշեք եւ այլում ժամանակի չի հաստատեք կրկին:

Զի պատճառ խռովութեան մերոյ երկուց ազգացս՝ օսմանցոց եւ պարսից, այս նգովք կարդալն է: Եւ ոչ է գրեալ ի դուրանն մեր, եւ ոչ է հրաման մարգարէին մերոյ, եւ ոչ օրէնք ի միջի մերում, այլ՝ ինքնագիտ ի յարանց յոմանց՝ սօֆտայից լօթոց: Որ ի պատճառէ (ս) յայսմանէ այսքան արեան հեզմունք եղեն, եւ գերութիւնք եւ երկրի աւերութիւնք:

Եւ երկրորդ՝ որ ուխտեցեք եւ արձանագրով հաւատարմացուցեք, որ շահին, կամ որդ[ւ]նոցն՝ եթէ յա[յ]տնեսցին, քամակ չանէք եւ չի պահեք ի միջի ձերում: Եւ թէ գտանիք ի յանցանս յայն, ի սուր մատնեսջիք, եւ ինչքն եւ ընտանիքն ձեր աւարի լիցին:

Եւ երրորդ՝ զի ընդ իս եւ յետ իմոյ անցման ընդ որդ[ւ]նոցս եւ ընդ օճախիս իմոյ միամտութեամբ եւ հնազանդութեամբ վարեսջիք եւ մի ապստամբիջիք:

Եւ թէ ստիցեք ուխտին ձերոյ, մահու արժանի լիջիք:

Եւ երդմամբ եւս պարտիք հաստատել»:

Եւ ամենեքեան խոստացան ի մի բերան եւ յանձն առին կատարել զհրամայեալսն:

Եւ արձակեալ գնացաք ի բնակութիւնս մեր:

Եւ ապա այնուհետեւ գրեցին զդաշնադրութեան զիրն եւ սրբագրեցին կրկին, մինչ որ հաճոյացաւ բանն Մեծագոր Խանին:

Եւ (ը)սկսան կնքել ամենայն եկելոց մեծամեծքն իւրաքանչիւր քաղաքաց. ոմանց՝ Ծ (50), ոմանց՝ Լ (30), ոմանց՝ Ի (20) եւ Ժ (10)-ն, եւ ոմանց՝ աւելի եւ պակաս: Եւ կատարեցին եւ առեալ զպայմանագիրն ամփոփեցին առ ինքեանս:

Եւ ահա կատարեցաւ ամենայն, եւ եղեւ լրումն ամենայնի: Եւ մինչեւ ցտասն օրն ինքնակալելոց է եւ լինելոց է ճուլուսն: Զի վասն սիքքէյին եւ կնքոյն՝ որ չէր պատրաստած ձեռն, մնան եւ սպասեն աւարտման:

Եւ զրոյց գոյ, որ ոչ կամի զի անուանեսցեն զնա «Շահ», այլ «Շահե անունն ամենեւիմբ եբարձ, եւ ոչ ոք կարէ յիշել եւ ասել՝ «Շահե ոչ՝ սորա, եւ ոչ՝ առաջնոյն: Այլ զանուն իւր պատուիրե[ա]լ է ասել՝ «Վալինամէթ»:

Եւ ի գարպն դրամին մի կողմն թուրայ (ի) նման ֆնտխ ոսկոյն, եւ ի միջի՝ «Նատրե անուն եւ ի միւս երեսին քաղաքին, ուր կտրի դրամն:

Եւ թուի, թէ այսօր կամ վաղն զելջի փաշայն, որ է Կէնճ-Ալի փաշայն ընդ Ապտուլ-Բադի խանին պիտի որդարկեն այդր՝ մօտ թագաւորին: Որոյ տէր Աստուած զեզրակացութիւն բանիս եւ զվերջն ի բարին յանկ հանցէ: Ամէն:

Եւ ապա սկսաւ խիլայել զեկեալ խաներն՝ սկսեալ ի Խորասանայ խանէն կարգաւ, մինչ յԱտրպատական, եւ ապա՝ Երեւանայ նահանգն:

Որ եւ թէպէտ յառաջ քան զամիս մի յղեալ էր ինձ Բ (2) եմիփորոնս եւ զմի կոնքեռ, որ թվի, թէ ի Վրաստանու ունէին զայն, եւ մի եմիփորոնն էր յոյժ պատուական եւ արժէր Ծ (50) թուման եւ այլ աւելի, եւ զմիւսն զերրորդ մասն նորին, եւ կրկին տեառնընդառաջի օրն, յորժամ կարգն հասաւ Երեւանցոց, ի ձեռն պաշտօնէից իւրոց առաքեաց եւ ինձ խալաթ: Որ էր. մանտիլ սեւագոյն, բայց՝ պատուական, եւ զարլու եւ ծանր կապայ մի եւ ծանր չերքեզի մի: Որ եւ բերին հասուցին ինձ՝ ի բնակարանն իմ: Եւ այսպէս խիլայեցան բազումք: Որպէս թուի ինձ, աւելի քան զՌ (1000) խալաթ բաժանեցին:

Որում ազանէին խիլայեալքն գոնէ Գ (3) օր եւ գնային առաջի իւր ի սէլամն:

Որ եւ խանդադատեցաւ ի վերա իմ եւ ասաց մեծամեծացն իւրոց, եթէ՝ «Տարակոյս էր ինձ, թէ զարդ կարէ Խալիֆայն ի գլուխն փաթաթել զմանտիլն, զի նա զսեւն իւր ի բաց ոչ դնէ»: Եւ յորժամ ետես ի վերա վեղարին փաթաթեալ, յոյժ բերկրեցաւ եւ ասացեր է թէ՝ «Զիարդ վայելուչ երեւի եւ սեւ գոլով պատշաճաւորեցաւ ի գլխոյն»:

Եւ յետ երից անուրց մուրախասս արար զմեզ եւ զամենեսեան գնալ՝ իւրաքանչիւր տեղիս:

Եւ ցրուեցան ամենքեան սքանչանալով հիյացմամբ մեծաւ:

Զոր Տէր Աստուած զաւարտ բանին ի բարին կատարեցէ: Ամէն:

Գրեցաւ թվին ՌՃՁԵ (1736) փետրվարի Ի (20) ի ի Մուղան:

Եւ ահա լուսնոյս ԻԴ (24)-ին բարձրանալոց է ի զահն, զի կատարեցաւ կնիքն եւ տիպն դրամին, որոյ զօրինակն եղի ի մեջ գրին, զի մի տարակոյս մնացէ: Բաւ է:

Միքքէինն է

Միքքէ պերզար քեարթ Նա՛ մի սալթանաթոա տէր Ճիհան, Շահի տին, Նա՛ տիրդուլի, Ըսկէնտէրի սահիպդոան:

Մօհրին է

Նիկի՛նի տէվլէ՛ թի տին րէֆտէ պուրթ ազգա, Պէնա՛ մի Նատի՛րի Իրան, Ղարար տատ խուտա:

Ֆաթիլամե

Փատիշա՛հի մամալիքի Իրա՛ն, զիլի սիւպհան, Նա՛տիրի տեվրան: Ֆաթիլե: